



ՔՆՆՔ ՈՒ ՄԵՐՈՆՔ



Մարուշ
Երամեան

ՄԵՆՔ ՈՒ ՄԵՐՈՆՔ

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ

ՄԵՆՔ ՈՒ ՄԵՐՈՆՔ

ԳԱՀԻՐԷ, 2024

Եթե չըլլար Սուրիոյ, մանաւանդ Հալէպի վրայ սանձազերծուած պատերազմը 2011 թուականէն սկսեալ, այսօր իմ զաւակներս եւս, որպէս 5րդ սերունդ, պիտի շարունակէին ապրիլ Հալէպի մէջ:

Եւ հօրենական, ե՛ւ մօրենական պապերս Հալէպ եկեր են Ջարդերէն բաւական առաջ, կայք հաստատեր, բարգաւաճեր այնտեղ, եւ ունեցեր են իրենց դերն ու ազդեցութիւնը այդ օրերու Հալէպին վրայ, թէ՛ տնտեսական եւ թէ՛ պատմական առումներով:

Այս գիրքը իրենց մասին է՝ պապերուս, հօրս, մօրս, որոնց երակներուն մէջէն անցաւ արեւմտահայուն արիւնը, հասաւ ինձի եւ հիմա կը հոսի զաւակներուս եւ թոռնուհիիս՝ Նովային երակներուն մէջէն:

Իրենց պատմութիւնն է եւ իմ յարգանքի եւ սիրոյ արտայայտութիւնս իրենց եւ զաւակներուս

Ձօն

ԱՐԱ ԵՐԱՄԵԱՆԻն

ԼԱՐԱ ԵՐԱՄԵԱՆ ՄՕՐԱԻն

ՏՈՀՄԱՔԱՂԱՔ

Քաղաքը կը կանչէ զիս: Կ'անսամ իր կանչին եւ կ'երթամ հին փողոցներուն մէջ վերծանել զայն:

Սկիզբը չէի հասկնար այդ կանչը, որ երբեմն տրամադրութիւն էր, հին կեդրոնը երթալ թափառելու անգուսպ փափաք: Ուրիշ անգամներ կարօտ էր, անհասկնալի կարօտ մը անիմանալի բաներու, որոնք կը կապուին հին թաղերուն, ուր արեւը իր ամենէն նիհար ճառագայթներով միայն կրնայ մտնել, եւ ուր անցքերը շատ խորհրդաւոր դուռերու վրայ կը բացուին:

Քաղաքը զիս կ'առնէ իր թաղերու բազուկներուն մէջ, կը գրկէ եւ կարօտի խօսքեր կը մրմնջէ ունկերուս:

Քաղաքը հեքեաթներ կը պատմէ աչքերուս: Հեքեաթները հին թաղերէն ծայր կ'առնեն ու կը հասնին մինչեւ գերեզմանատուն: Այդ հեքեաթները երբեմն մամռաչոր տապանաքարերէն կը սկսին, կը կապուին այլ քարերու եւ կը դառնան ամբողջ գիրք մը մահուան եւ մոռացումի: Բայց քաղաքը շունչ կու տայ մոռցուած հեքեաթներուն, որոնք ոգիներու խաղաղութեամբ կը թափառին թաղերուն մէջ ու կը ցանցեն զիս:

Փոշի ու ճառագայթ կը թափի անոնցմէ:

Ո՛չ բանաստեղծութիւն, ո՛չ երեւակայութիւն: Քաղաքն ալ ունի իր ծիները պապերուս տուներուն, Քառասնից Մանկանց եկեղեցոյ աւելցող որմերուն եւ ծեր ծառերու բուներուն մէջ բռնուած: Այդ ծիները ձայն կու տան իմիններուս, կ'արթնցնեն, կը կանչեն եւ ի վերջոյ կը տանին զիս իրենց ետեւէն:

Պարապ կիսաբակ մը կ'երեւի կիսաբաց դռնէն. քարերը օճառ կը բուրեն, եւ ձեթի մեծ թիթեղներու մէջ ցանուած *ֆրլլէները*¹ փոքրիկ շատրուանին կանչը կ'ունկնդրեն: Տեղէ մը նարկիլէին հոտը կը հասնի, խաղաղութիւնը երջանկութեան վերածելով:

Պատուհաններէն կը հոսի նոյն այն երաժշտութիւնը, որուն հնչիւններուն տակ պարեր էր հարսնացած եւ Զուարթ դարձած մեծ մայրս՝ Խանումը.

-Ալլէմունէ, լէմունէ...

Քաղաքը, որ դէմք կը փոխէ անընդհատ, կը շարունակէ

աղուոր ճիգով մը անխաթար պահել գանկը, իրեն ուրոյնութիւն տուող ոսկորներուն շարքը:

Ծերունիներ կը մեռնին, եւ անոնց հետ ի՛նչ հեքեաթներ կը մեռնին:

Քաղաքը կը թաղէ իր ծերերը, բայց կը պահէ անոնց հեքեաթները: Միայն լսող ըլլայ. մարդիկ պահ մը անջատեն հեռատեսիլները, ռատիոները, օթոներուն շշակները, կարենան լռել պահ մը...

Այն ատեն Հալէպի բերդը պիտի բանայ Զոյգ Օձերու դարպասը եւ խօսի. Քուէք գետը վերստին պիտի ոռոգէ հազարի դաշտերը, եւ հին տապանաքարերէն պիտի վերնայ մամուռը:

Եւ քաղաքը, որ պահեր է հեքեաթները, պիտի երգէ գանոնք:

Բայց յիշողութիւնը աչկապուկ կը խաղայ միտքերու բաւիղներուն մէջ. երբեմն կ'երեւի, երբեմն կը կորսուի. յաճախ ինքզինք կը փոխէ այնքան, որ կը թուի թէ այլ դէպքեր են, այլ ժամանակներու մէջ պատահած այն բոլորը, որոնք կու գան որպէս արեան կանչ:

* * *

Տոհմածա՞ն:

Ծառին մասին չէի մտածած: Հողին վրայ կ'ապրէինք, կամ՝ գրեթէ: Ամատախիլ ըլլալու վիճակ չունէինք, ոչ ալ վախ: Քառասնից Մանկանցը տասը դարէ ի վեր կայ, տասն քանի սերունդ մկրտեր-պսակեր-թաղեր է: Գերեզմանատունը կայ իր «փոխադրուած» տապանաքարերով (նախկին գերեզմանատունէն բերուած. իսկ նախկինը իմ հօրենական տանս տեղը եղած է): Հայերու թաղերը կան, հիմա արդէն խառն բնակչութեամբ: Երեք ճեմարաններ, տասն երկու եկեղեցիներ, եւ ութը դպրոցներ շէն են ու պայծառ:

Բայց մանաւանդ կայ լեզուն: Ինչո՞ւ ուրեմն ծառը փնտռել, արմատները որոնել:

Ամերիկայէն երրորդ կարգի զարմիկ մը կազմեր է ընտանիքին ծառը եւ հոս՝ Հալէպ դրկեր է, կարելոր լրացումներ ընելու համար:

Վերադարձը կարծես միշտ դէպի հոս է, Արեւելք, Հալէպ, ամբողջացնելու համար ինչ որ չ'ամբողջանար Արեւմուտքի մէջ, գիտութեամբ թէ այլ մասնագիտութիւններով: Արե՞ւն է, որ կը

պահէ թարմութիւնը պատմութեան, այնպէս ինչպէս կը պահէ դդումն ու սմբուկը՝ չոփ-չոփ, խշրտան, բայց թարմ, երբ պետք ունին անոնց, թէ՛ հողն է, այնքան մօտ մեր հողերուն, դրացի անոնց, նոյն կշռոյթով շնչող հողը, ու վրան՝ նոյն վատնումը արեան:

Այդ երրորդ կարգի զարմիկը ամէն օր գործի գացեր եւ վերադարձեր է այնքան յոգնած, որ մոռցեր է ընտանիք կազմել. յետոյ օր մը, ինք ալ չէ զգացեր երբ, թոշակառու եղեր է եւ սկսեր է խեղդուիլ լայն ու առատ ժամանակին մէջ: Այն ատեն է, որ Ծառը օգնութեան հասեր է. աւելի ճիշդ՝ Ծառին գաղափարը, որ զինք փրկէր է:

Եւ կազմուեր է կիսատ-պռատ Ծառ մը, որ հիմա թելերը երկարած, ամբողջանալու կը ձգտի:

* * *

Հալէպ: Ուրֆայէն Հալէպ, Տիգրանակերտէն Հալէպ, Խարբերդէն Հալէպ ...

Ինչո՞ւ Հալէպ: Ի՞նչ հմայք է ասիկա, որ հայերը քաշեր է Արեւմտահայաստանի գաւառներէն ու գիւղերէն մինչեւ Հալէպ, Ջարդէն ու տեղահանութենէն ալ առաջ, երբ տակաւին քաղաքը գաղթականներով չէր ողողուած:

Եկած են անոնք, շատեր այլ երկիրներ եւ քաղաքներ երթալու նպատակով, ուրիշներ այստեղ հաստատուելու վճռակամութեամբ: Եկեր են ու գտեր այլ տեսակի հայեր, մարդիկ իրենց նման, բայց եւ այնքան տարբեր իրենցմէ: Մուրբ Քառասնից Մանկանց եկեղեցւոյ բակը նայեր են իրարու, բայց չեն կրցած խօսիլ: Ինչպէ՞ս զիրար հասկնային Արեւմտահայաստանի թրքախօս կամ հայախօս հայերն ու Հալէպի արաբախօս դարձած հայերը, որոնց պատարագն անգամ արաբերէն լեզուով սկսեր էր ըլլալ վերջին տարիներուն:

Բայց արեան յիշողութիւն մը կայ, կամ Պատմութեան յիշողութիւն մը, որ կը մաղուի Մասնայ Ծռերու մոռցուած տողերէն եւ այս քաղաքին անունը կը դարձնէ սիրուած ու մտերիմ.

«Դաւիթ ուր զՄելիք սպանեց,
Կըց գպաների հետ զՄելիքի հողեր,

քաղաքնին տիրեց:

Առաջի անգամ կնաց Հալաբ տիրեց.

Շինեց Հրլաբու պերթ»:

Այս հմայքն է, թէ՛ պատումներն են վաճառականներուն, որոնք խօսեր են Հալեպի առատութեան եւ անոր բնակիչներու բարութեան մասին, կրկնակի հմայք մը, որ քաշեր է տոհմապապերը եւ հաստատեր զիրենք հոս, քաղաքին եօթը դռներէն ներս:

ԹՕՓՃԵԱՆ-ԳԱՍՊԱՐԵԱՆ

ՖԻԼԻՓ

Կը զգար, որ պիտի մեռնէր, այս անգամ ի՛նք պիտի մեռնէր կնոջմէն առաջ, եւ ասիկա ոտքին ցաւին չափ խորունկ եւ մեծ ցաւ կը պատճառէր իրեն:

Ֆիլիփ Թօփճեանը երկու կին թաղէր է. ասիկա երրորդն է, եւ կ'ացութենէն դատելով, այս անգամ կ'ինն է որ զինք պիտի թաղէ:

Երկու շաբաթ առաջ սերժանթ Ֆիլիփը եկեր էր հեւալով, բաճկոնին կոճակները բաց, վրան գլուխը փոշի, անկողին ինկեր եւ ա լ չէր ելեր:



Նստած աջէն առաջինը՝ Ֆիլիփ, Թօփճեան գերդաստանի նախահայրը

Զինք դէպի մահ քաշողը ոտքը չէր, որ օրէ օր կը փտէր, այլ՝ քահանան.

-Շան որդի տերտերը անիծեց,- կ'ըսէր ակռաները ցաւէն սեղմելով,- եւ քանի տերտեր է, Աստուած իրէ՛ն մտիկ կ'ընէ, թէ եւ ե՛ս եմ իրաւունքովը:

Սերժանթ Ֆիլիփը գոյ քահանան հալածէր էր Սալիպէի նեղ թաղերէն մինչեւ գերեզմաններու ամայքը, որ շատ ծանօթ վայր էր քահանային համար, իսկ սերժանթին՝ խորշելի: Հոն էր, որ ոտքը տապանաքարի մը զարկէր ու հասակով գետին փռուէր էր, մինչ քահանան կծիկը կը դնէր, բախտը օրհնելով:

-Անիծեց ... Ոտքի ելլեմ, ցոյց կու տամ այդ շան որդիին ի՞նչ ըսել է գողնալը...

-Մեղք ունի, մարդ Աստուծոյ, կը բաւե,- կ'ըսէ աստուածավախ ու եկեղեցասէր կինը Անիթան, որ ամէն Կիրակի չորս զաւակները հաւաքած եկեղեցի կ'երթայ:

Բայց ոչ այս Կիրակի: Ֆիլիփին վիճակը ծանրացեր է. աչքերը փակ են, բայց կոպերը ցաւէն կը թրթռան: Տասնապետը, որ նաեւ սենեկապանի դեր կը կատարէ, աֆիոնի գլանիկ մը փաթթեր, վառեր եւ մեծաւորին բերանը դրեր է. ցաւը թրթուցնելու ամենէն արագ միջոցն է. ու երբ գլանիկը իյնայ սերժանթին շրթունքներէն, տասնապետը կը հասկնայ, որ երկու ժամ գոնէ ցաւ պիտի չզգայ իր մեծաւորը:

Անիթան անկողինը դրեր է բակը, լեւոնի ծառին տակ, փոքրիկ աւազանէն քիչ մը անդին. թէեւ գիտէ, որ ամուսինը կը սիրէ լիվանին² մէջ երկննալ, բայց գիտէ նաեւ, որ լեւոնին ծաղիկներուն հոտը «սիրտ կը բանայ»:

Չորս տղաքը լիվանին անկիւնը քաշուեր են. չեն խաղար. կը սպասեն, որ մայրիկը հրաման տայ քովի բակը երթալու: Հայրիկին «պառկելէն» ի վեր Անիթան աւելի թոյլատու դարձեր է. ամէն անգամ, որ սերժանթը արթննայ եւ տասնապետը կանչէ, Անիթան աչք-ունքով զաւակները դուրս կը դրկէ, դրացիներուն բակը, ուր կիները զիրենք անսովոր գուրգուրանքով կ'ընդունին:

Ինչ գողցեր էր քահանան, մոռցուեր է. ինչո՞ւ օսմանեան բանակի սերժանթ հայ Ֆիլիփը անպայման կ'ուզէր բռնել զինք, այդ ալ մոռցուեր է: Եւ մնացեր է մահը, որ վերջ պիտի դնէ ոչ միայն սերժանթ Ֆիլիփին կեանքին, այլ իր ամուսնութիւններու շարանին:

Ո՞վ պիտի խնամէր վեց մանչերն ու միակ աղջիկը. Անիթա՞ն. բայց ինք եւս կը մեռնէր ամուսինէն քիչ ետք: Արդէն առաջին կնոջ երկու մանչերը Կարապետն ու Պարգելը հասուն երիտասարդներ են. նոյնքան հասուն է երկրորդ կնոջ Լուլուին մանչը՝ Բարսեղը: Անիթային տղաքն են որ մատ մըն են տակաւին եւ խնամքի կարօտ:

Անիթան տխրութեամբ նայեցաւ զաւակներուն, մինչ երեք տղաքը իրենց քրոջ ձեռքէն բռնած արտօրանքով բակէն դուրս կ'ելլէին. վազեց անոնց ետեւէն ու փսփսալով ըսաւ մեծին, Գրիգորին, արաբերէն.

-Չուշանաք. տասնապետը կը դրկեմ, անմիջապէս կու գաք:

Հալէպ ծնած մեծցած Անիթան հայերէն չէր գիտեր. այդ օրերուն ո՞ր հայը հայերէն գիտեր, կամ տան մէջ հայերէն կը խօսէր. բոլոր Տէօքմէճիները, Էքմէքճիները, Ֆաթթալները, Նահիասները եւ մնացեալ հին հայերը Սուրբ Գիրքը արաբերէն կը կարդային, եւ Քառասնից Մանկանցին մէջ արաբերէն պատարագ կը լսէին:

-Եկեղեցին կնիկներուն գործն է,- կ'ըսէր սերժանթ Ֆիլիփը եւ Կիրակի առտունները սրճարան կ'երթար,- Էրիկմարդ ըսածդ զէնք վերցնող պիտի ըլլայ:

Տան մէջ գտնուող ամենէն հին նկարին մէջ սերժանթ Ֆիլիփը կը հաստատէ, որ այս «մաքուր» բաժանումը կնիկ-Էրիկմարդ գործերու միայն խօսք չէ, այլ համոզում է եւ ապրելակերպ. պէխերուն ծայրերը դէմքէն դուրս երկարած, մեծ զէնքը գիրկը եւ աչքերը կարեւոր կէտի մը յարած, սերժանթ Ֆիլիփը իրապէս եկեղեցի գացողի պիչիմ³ չունի:

Օր մըն ալ Անիթան կիրակնօրեայ զգեստները հագցուց զաւակներուն եւ տարաւ եկեղեցի, ուր իրենց հայրը, իր ամբողջ շքեղութեամբ կը քնանար փայտէ նեղ անկողինի մը մէջ:

Մեծը, Գրիգորը յաճախ պիտի յիշէր այդ պահը, իր խորունկ ուրախութիւնը՝ հայրիկը լաւացեր է եւ ի նչ հանգիստ կը քնանայ, յետոյ նոյնքան խորունկ զարմանքը՝ Բայց ինչո՞ւ հոս է, ինչո՞ւ տուն չի գար ...: Երկա՛ր ատեն պիտի փնտռէր հօր խոժոռ ներկայութիւնը, բամբ ձայնը եւ իրենց վախը ի լուր թաղին մէջ արձագանգող անոր ոտնաձայներուն:

Տարիներ ետք հեռաւոր եւ անձանօթ մնացած զարմիկ մը պիտի կազմէր Թօփճեաններուն տոհմածառը եւ հոն նշէր Ֆիլիփին մայրը: Բայց ո՞վ էր հայրը, ուրկէ՞ Նալէպ հասեր էր, այդ օրերուն ո՞ր էին ընտանիքին մնացեալ անդամները, որոնք շատ հաւանաբար թիւ պիտի կազմէին մէկ ու կէս միլիոնին մէջ:

Կարապէտ էր հայրը ... թերեւս. թէ ոչ ինչո՞ւ Ֆիլիփը իր անդրանիկ մանչը Կարապետ պիտի կոչէր, եւ վերջին զակին՝ աղջկան պիտի տար մօր անունը՝ Մարիամ: Սակայն Մարիամը մահացեր է կանուխ, եւ մնացեր է Թօփճեաններուն միակ քոյրը Արմենուհին:

Մնացեր են երկու խմբանկարներ սերժանթ Ֆիլիփին «անմահութիւն» ապահովող:

ԹՕՓՃԵԱՆՆԵՐԸ

Թօփճեանները յոզնակի մարդիկ են, ոչ միայն որովհետեւ անոնց նախնին, որուն կրցեր ենք հասնիլ Ֆիլիփ Թօփճեանը երեք կիներ ունեցեր է՝ Լուլուն, Անէթան եւ Մէճիտէն, որոնց երեքին ջանքերով ծներ են վեց մանչեր եւ երկու աղջիկներ, այլ նաեւ որովհետեւ անոնք սիրած են կեանքը լայնօրէն ապրիլ, ցմրուր ըմպելով քաղցրութիւնն ու դառնութիւնը միաժամանակ, ճիշդ սեւ սուրճին պէս դառն, բայց աննկարագրելիօրէն համեղ:

Թօփճեանները յոզնակի են նաեւ անոր համար, որ անոնց ապրած կեանքը – գոնէ անոնցմէ ոմանց ապրած կեանքը – կրնայ անիրական թուիլ, ինչպէս եղած է կեանքը շատերու, որոնք անցած են Համաշխարհային Ա. Պատերազմի դժոխքէն: Այդպէս են Ֆիլիփ Թօփճեանին եւ անոր ամենէն կրտսեր տղուն՝ Արմէնին կեանքերը:

Եւ մնացեր է թոռնիկներէն մէկը, որ իր անունը կը կրէ հպարտօրէն՝ Ֆիլիփ Թօփճեան կրտսեր, մեծ Ֆիլիփին ամենէն փոքր մանչուն՝ Արմէն Թօփճեանին միակ զաւակը:

Իսկ Արմէն Թօփճեանը...

Անոր պատմութիւնը այլ խորք եւ տարածք ունի: Յետոյ կը պատմեմ:



Թօփճեան 6 եղբայրք եւ 2 քոյրեր

ԲԱՐՍԵՂ ԹՕՓՃԵԱՆ

Բարսեղ Թօփճեանը ամուսնացած է Տիրուհի անունով կնոջ մը հետ, որուն քոյրը – պատմութիւնը մոռցած է անոր անունը – սիրահարուած է Մեղրիկեան անունով երիտասարդի մը հետ:

Մեղրիկեանը սակայն կ'ամուսնանայ այլ աղջկայ մը հետ:

Տիրուհիին քոյրը կը սպաննէ Մեղրիկեանը եւ տանիքէ տանիք փախչելով կը հասնի Բարսեղին դաշնակցական փոքր եղբոր Արմէն Թօփճեանի քով եւ կ'ըսէ.

-Սպաննեցի Մեղրիկեանը:

Արմէնը, կուսակցութեան միջոցով աղջիկը կը հանէ քաղաքէն ու կը դրկէ Հայաստան: Սովետական կարգերու հաստատումէն ետք այդ աղջիկը Հալէպ կու գայ եւ Հալէպէն Ամերիկա կ'երթայ:

Բարսեղ Թօփճեանը Տիրուհիէն երկու զաւակներ կ'ունենայ՝ Գառնիկ եւ Նուարդ, որոնք իրենց մօր մահէն ետք Ամերիկա, իրենց մօրաքրոջ մօտ կը դրկուին:

Բարսեղ Թօփճեան կրկին կ'ամուսնանայ Մէճիտէ Շէմսիին հետ, որուն բոլորը Հարսիկ Մէճիտէ կը կոչէին:

Մէճիտէն կը պատմէր, թէ իրենք Արեւեան եղեր են, բայց հայրը ատենին անհամաձայնութիւն մը ունենալով, դաւանափոխ դարձեր եւ Սիրեան Կաթողիկէ եղեր է, նաեւ մականունը Շէմսի վերածեր է (արաբերէնի թարգմանելով իրենց Արեւեանը):

Հարսիկ Մէճիտէին քրոջ երկու զաւակներէն մէկն ալ կը միանայ Սիրեան Կաթողիկէ դաւանանքին, եւ Լիբանան գալէ ետք ալ այդ յարանուանութեան վարդապետ, ապա զարտինալ կը դառնայ:

Բարսեղ Թօփճեան իր երկրորդ կնոջմէն՝ Հարսիկ Մէճիտէն չորս զաւակներ ունեցեր է՝ Լեւոն, Աստղիկ, Սիրուն, Արշալոյս:

Հետաքրքրական է, որ Լեւոն Թօփճեան իր մականունը չ-ով գրեր է միշտ Թօփճեան: Բայց ինչպէ՞ս պիտի հաստատենք, որ ինք ալ նոյն Թօփճեան գերդաստանին կը պատկանի...

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Թօփճեան գերդաստանի գաւակները բոլորն ալ Ներսիսեան վարժարան կը յաճախէին, աշակերտութեան թերեւս մէկ ութերորդ թիւը կազմելով. Ֆիլիփ Թօփճեանին եօթը գաւակներուն բազմաթիւ գաւակները մօտաւորապէս երեք տասնեակ կը կազմէին:

Ամէն տարեմուտի Արմէն Թօփճեանը, *կարածի* տղաներէն մէկուն թելը մտած Ներսիսեան վարժարան կ'երթար, կ'արձանագրէր իր բոլոր եղբօրորդիներն ու միակ քրոջ գաւակները, կը վճարէր տարեթոշակները ամբողջութեամբ, եւ պարոն տնօրէնին հետ սուրճ մը խմելէ ետք, առօք-փառօք կարած կը վերադառնար:

Այդ տարեմուտին ալ Թօփճեանները խումբով դպրոց գացին: Քանի մը ժամ ետք Արմէն Թօփճեանը հաշուեց կրթաթոշակներուն գումարը, դրամը ծոցագրպանը դրաւ եւ դպրոց ուղղուեցաւ:

Դպրոցի մուտքին մէկը բարեւեց զինք.

-Բարեւ, Արմէն էֆէնտի:

Արմէն Թօփճեանը պահ մը ուշադիր մտիկ ըրաւ ձայնը. յետոյ լայն ժպիտ մը տարածուեցաւ դէմքին:

-Բարեւ ձեզ, բարեւ, Իսկէնտէր էֆէնտի:

Գրիգոր եղբօրը քենեկալն էր, Զուարթին քրոջ՝ Էլիզային ամուսինը. լաւ ընտանիքի գաւակ, գէշ մարդ չէր Պէշլեան Իսկէնտէրը:

-Տարեմուտ է, աչքդ բաց-գոցէ տարին կը բոլորուի: Երեք աշակերտ ունինք, լաւ է որ երրորդը ձրի կը կարդացնենք,- Պէշլեան էֆէնտին շատ ուրախ էր իր ըրած սակարկութեամբ, որ երկու տարիէ ի վեր, այս ալ երրորդը, ի գօրու կը մնար:

-Մէկ չէ, երկու չէ, երեք է, պարոն տնօրէն, երեք, շուկայի օրէնքն է ասիկա,- ըսեր ու պնդեր էր, մինչեւ պարոն տնօրէնը, ճարահատ, տեղի տուեր էր:

Արմէն էֆէնտին գլուխը երերցնելով առաջ պիտի շարժէր, երբ ժպիտը թռաւ դէմքէն, ու կեցաւ ոտքը սեմին, դէմքին գիծերը պրկուեցան... յետոյ վճռականօրէն քայլ առաւ դէպի ներս,

Պեշլեանին ըսելով.

-Լաւ ըրեր ես, լաւ...

Պեշլեանը, իր ուրախութեան մեջ չանդրադարձաւ այդ «լաւ»ին:

Պարոն տնօրէնը, տեսնելով Արմէն Էֆէնտիին մուտքը, անմիջապէս յարգանքով ոտքի ելաւ, բազկաթոռը ցոյց տուաւ ուղեկցող տղուն եւ տնտեսը կանչեց.

-Աստուտ իր, քաղցր սուրճ մը Արմէն Էֆէնտիին:

-Չ'ուզեր,- խիստ խօսեցաւ հիւրը:

-Ինչպէ՞ս թէ չ'ուզեր, յոգնած եկեր էք, բարի էք եկեր,- տնօրէնը կը փորձէր գուշակել պատճառը այս խոժոռութեան եւ կ'աղօթէր, որ իր հետ կապ չունենայ այս բարկութիւնը, որովհետեւ յստակ էր, որ Արմէն Էֆէնտին շատ, շատ բարկացեր էր:

-Պարոն տնօրէ՛ն, քանի՞ աշակերտ ունինք ձեր քով:

-Քսանեօթը կամ քսանինը, ճշգրիտ չեմ գիտեր,- սրդողած պատասխանեց մարդը:

-Ճշգրիտ գիտնալու ես, պարո՛ն տնօրէ՛ն. երեք աշակերտ ունեցողներուն թիւը աւելի ճիշդ գիտես, քան մերիններուն թիւը...

Տնօրէնը լռեց, որովհետեւ միտքով արագ կը հաշուէր՝ երե՞ք աշակերտ, ո՞վ ունի երեք աշակերտ, հա՛, Պեշլեան Էֆէնտին, հիմա դուրս ելաւ, բայց ի՞նչ է կապը երեքին եւ քսանեօթին, մանաւանդ ի՞նչ է կապը այս թիւերուն եւ սա Թօփճեանին բարկութեան...

-Բոլորին ալ թղթածրարները կը պատրաստե՛ս, կարած կը դրկե՛ս:

Որոշումը շատ արագ ինքզինք ներկայացուցեր էր Արմէնի միտքին. պիտի հասկնար երեքին մէկը ձրի կարդացնելու այս արարքը, եթէ Պեշլեանը կարիքաւոր մէկը ըլլար. բայց Պեշլեանն ալ բաւական անուն եւ վարկ ունեցող մէկն էր քաղաքին մէջ:

Արմէն Թօփճեանը ինչպէ՞ս գիտնար, որ երեքին մէկի այս որոշումը աղաչանքի հասնող պնդումի եւ պնդերեսութեան արդիւնք էր: Ի՞նչ ալ ըլլար, տնօրէն Էֆէնտին տեղի տալու չէր:

-Բայց ինչո՞ւ...

Տնօրէնը զգաց որ կաթուածի պիտի ենթարկուէր. այսքան

թիւով աշակերտ մէկ անգամէն կորսնցնելը խաղալիք բան չէ:

-Դպրոցը պիտի փոխեմ. աղջիկները մայրապետներուն, տղաքը ֆրէրներուն:

Որքան ալ տնօրէնը փորձեց Արմէն էֆէնտիին *խաթորը* շինել, գոնէ այս վճռական քայլին պատճառը իմանալ, չկրցաւ: Արմէն էֆէնտիին որոշումը որոշում էր:

Եւ այսպէս էր, որ Թօփճեան աշակերտները սկսան ֆրանսական դպրոցներ յաճախել: Աւելի ուշ անոնցմէ երկուքը՝ Վարդգէս եւ Նուպար (Գրիգորին միակ մանչը) Թօփճեանները Պէյրութի ֆրանսական համալսարանէն որպէս բժիշկ վկայուեցան, իսկ աղջիկներէն մէկը՝ Արուսեակ Թօփճեանը (Գրիգորին կրտսեր աղջիկը), նոյն այդ համալսարանէն, նոյն տարին վկայուեցաւ որպէս մանկաբարձուհի:

Թօփճեան գերդաստանին համար ձրի չեղաւ այս փոխադրութիւնը հայկականէն ֆրանսական դպրոցներ՝ անոնք աղջիկ գաւակ մը նուիրաբերեցին Անարատ Յղութեան Քոյրերուն Գրիգոր Թօփճեանին երրորդ աղջիկը՝ Անժելը, որ վերանուանուեցաւ քոյր Մելանի Թօփճեան, եւ երկար տարիներ վարեց Անարատ Յղութեան քոյրերու տարբեր դպրոցներու տնօրէնութիւնը՝ Հալէպ, Պէյրութ, Պաղտատ, Գահիրէ, Թեհրան, Պոլիս եւ Հռոմ, Զուիցերիա ուսանելէ ետք:

ԿԱՐՄԻՐ ՏԵՏՐԱԿԸ

Թօփճեան վեց եղբայրներուն կրտսերը, որ նաեւ ամենէն անգուսպը եղեր է, բնական է որ մտած պիտի ըլլար ՀՅԴի շարքերը:

Պապ Էլ Ֆարաճի իրենց խանութը չէր գոհացներ զինք, թէւ գործը շատ էր, իսկ յոգնութիւնը՝ աւելի:

Մարտական ըլլալը անսովոր բան չէր Թօփճեաններուն համար, մանաւանդ այն օրէն, որ Գրիգոր եղբորը կնոջ՝ Զուարթին հայրը գացեր Ուրֆայէն իրեն հարս բերեր էր Թափթափեաններուն (որոնք ճանչցուած էին որպէս Եօթնեղբայրեաններ) միակ քոյրը՝ Աննան:

Դժուար օրեր էին: Երկրէն եկող լուրերը ցնցող էին: Թօփճեան եղբայրները իրենց ձեռքէն եկածը կ'ընէին: Արմէն էր միայն, որ միտքը դրեր էր երթալ կոուիլ. այնքան եռանդ կար մէջը, որ հաւատացած էր՝ կրնար այդ «շուններուն արմատը չորցնել»: Բայց հրաման չէր ստացած երթալու. «քեզի հո՛ւ պէտք ունինք» ըսեր ճամբեր էին զինք:

Միակ միտքարութիւնը Լուրֆիէն էր, այդ քնքուշ ծաղիկը, որ ամէն առաւօտ պատուհանը կ'ըլլար եւ իր օրը կ'օրհներ քաղցր ժպիտով, աչքերէն ծորող անհուն սիրով եւ Արմէն Թօփճեանին սիրտը կ'ուռչէր, հոգին թեւ կը բանար եւ մեծ, սեւ աչքերը կրակ կ'առնէին:

-Ի՛նչ աղուոր գոյգ են,- կ'ըսէին ընկերները:

Բացայայտ չէր իրենց սերը, բայց երբ նոյն տեղը գտնուէին, այդ սերը կը ճառագայթէր, գոց սենեակէ մը դուրս յորդող լոյսի պէս:

Օրերը կը թաւալէին միօրինակ, անմիջադէպ: Արմէնին համար ներքին քարտէսներուն վրայ էր, որ ամէն բան տեղի կ'ունենար՝ եթէ Լուրֆիէն օր մը ուշանար պատուհանէն դուրս նայելու, կամ երբ ցաւալի լուրեր հասնէին Երկրէն, Արմէնին հոգին՝ թուխս նստած աղաւնի, իր շատ տոկուն արտաքինին տակ, կը տագնապէր ու կը բաբախէր, բանտարկուած:

Շրջան մը վերջ ի վերջոյ եկաւ սպասուած լուրը: Այդ հրահանգը սակայն տարբեր էր իր սպասածէն:

-Ճեմալ փաշան, որ Հալեպ պիտի այցելէ երկու ամիս ետք, տէրորի պիտի ենթարկուի: Ռումբերը դուք պիտի պատրաստէք...

Մինչ Արմենը գիշերները խանութին մառանը իջած մէկ մումի լոյսին տակ ռումբ կը պատրաստէր, անդին տէրորը կը պատրաստուէր, իր ամենայետին մանրամասնութիւններով:

Բայց «պզտիկ զատիկը մեծէն առաջ կու գայ», կ'ըսէր մեծմայրիկս: Ճիշդ այդ փութկոտութեամբ Սահմանադրութիւնը վրայ հասաւ: Տարին՝ 1908:

Կուսակցութիւնը սառեցուց իր մարտական բոլոր գործողութիւնները:

-Ռումբերը ո՞ր են,- փսփսուքով հարցուց Նշանը եղբօր:

-Գիտէ՞ս ուր են, վարը:

-Թող հոն ալ մնան:

-Նայինք:

Արմենը որոշէր էր ընելիքը:

Օրը արեւածագէն առաջ սկսէր էր կարծես: Ժողովուրդը պայթումին ձայնէն արթնցեր էր: Կիները իրենց դրացիներուն հետ կը քջբչային տագնապահար, իսկ տղամարդիկ գիշերազգեստներով փողոց ինկեր էին:

-Ի՛նչ եղաւ, ի՛նչ էր...

1896-ի ջարդերուն արձագանգները դեռ չէին մարած եւ շատ թարմ էին բոլորին համար:

Նշան եղբայրը, փորձելով նախազգացումէն ծնած տագնապը զսպել, արագ մը «ճիւլպէն» վրան անցուցեր էր եւ բռներ խանութին ճամբան:

-Տէր Աստուած, սխալական ըլլամ...

Նախազգացումը ճիշդ էր. խանութը շրջապատուէր էր օսմանցի զինուորներով, որոնք հսկելը մոռցած, ներս, խանութին խորքը կը նայէին:

Մինչ Նշանը կը հասներ, Արմենը արհնլուայ դուրս կը բերէին: Նշանին սիրտը կարծես աղմուկով փլաւ:

-Էֆէնտի,- մօտեցաւ հարհուրապետը,- մեզի հետ կուգայիք...

Հարցում որպէս ձեւակերպուած խօսքը որպէս հրաման

հնչեց:

-Ո՛ւր... Արմէ՞նը...

-Արմէն էֆէնտին զինուորական հիւանդանոց կը տանին եւ ամբողջ պէտք եղածը կ'ընեն, հոգ մի ընէք...

«Պէտք եղածը», Նշանը շատ լաւ հասկցաւ, որ կրնար խնամքէ տարբեր բան ըլլալ:

Հարիւրապետը վճռական ձեռքը դրաւ Նշանի ուսին եւ զինք հրեց դէպի զինուորները: Իր քաղաքավար բառերը Նշանին մորթին վրայէն խխունջի պէս սահեցան, էութիւնը փշաքաղելով:

Արմէնը տարեր էին արդէն:

-Ինչո՞ւ եկար:

Լուրֆիէն կեցաւ դրան մէջ: Հազիւ զսպուած արցունքները կրկին սկսան թափիլ աչքերէն:

-Չե՞ս լսեր, ինչո՞ւ եկար կ'ըսեմ:

Լուրֆիէն մօտեցաւ, ծունկի եկաւ Արմէնին ոտքերուն առջեւ եւ բռնեց վիրակապուած ձեռքերը:

Ցաւը սուր դանակի պէս զարկաւ Արմէնին դէմքը, կամ ինչ որ կ'երեւեր դէմքէն: Վիրակապը սկսաւ արիւնիլ:

Լուրֆիէն շարունակեց լռել: Ուզէր իսկ չէր կրնար խօսիլ:

Եկեր էր իր անունն ու պատիւը վտանգի ենթարկելով: Ընկերները կը հասկնային: Բայց գաղութը՝ խիստ եւ աւանդապահ, պիտի չներէր իրեն այդ քայլը:

-Ի՞նչ, սիրածը տեսնելո՞ւ գացեր է...

-Արմէն, չլքես զիս,- փսփսաց խորտակուած:

-Մոռցի՞ր: Վերջացած պատմութիւն է: Ելի՛ր տուն գնա՛, քանի մարդ չէ տեսեր գալը: Գնա՛, մոռցի՛ր, կեանքդ ապրի՛ր:

-Առանց քեզի ի՞նչ կեանք:

Իրապէս ալ կեանք չեղաւ Լուրֆիէին կեանքը Արմէնէն հեռու: Կեանք չէր նաեւ Արմէնին կեանքը՝ առանց սիրոյ, անձեռք, անաչք...

Հալէպի հին հայերուն մէջ գեղեցկուհիի համբաւ վայելող Լուրֆիէն ամուսնացուցեր էին բժիշկ Կարապետ Պապիկեանին հետ:

Լուրթֆիէն շարունակեր էր պատուհանին առջեւ սպասել: Երբեմն կ'անցնէր Արմէնը տղաներէն մէկուն թելը մտած: Եւ Լուրթֆիէն կրկին ու կրկին կ'ապրէր պայթումին օրը, արիւնելով, մեռնելու չափ բզկտուելով:

-Թող մնային, երանի չքակէր, որո՞ւն ինչ ըրեր էին այդ ռումբերը... թող մնային...

Տարիները սահեցան, բայց տիկ. Լուրթֆիէ Պապիկեանը բանտարկուած մնաց պայթումի օրուան եւ պատուհանին միջեւ, մինչեւ իր մահը, որ եկաւ Արմէնին մահէն առաջ:

Գագանճոնց հարս Արուսեակը, որ Թօփճեան Գրիգորին ամենէն պզտիկ աղջիկն էր, եւ ամենէն մօտն ու մտերիմը Ամսօ Արմէնին, կը յիշէր, որ Ամսօն կարմիր տետրակ մը ունէր, ուր իր օրագրութիւննէ ըր թէ այլ բաներ գրեր էր:

Ուր մնաց այդ կարմիր տետրակը:

ԱՄՍՕ ԱՐՄԷՆԸ



Արմեն Թօփճեան 19 տարեկան

Արմենը, Ֆիլիփ Թօփճեանի ամենէն փոքր մանչը:

«Կոյր էր Պարոն Արմենը, Պարոն Արմեն Թօփճեանը, կոյր եւ հաշմանդամ»:

Այսպէս կը սկսի Ալիս Արարատեան-Միւտճեան իր յօդուածը, որ երկու անգամ լոյս տեսած է «Նոր Կեանք»ի էջերուն՝ նախ 1987-ի Ապրիլ 29-ի, ապա 1991-ի Մայիս 22-ի թիւերուն մէջ:

Ալիս Ա. Միւտճեանէն առաջ սակայն, 1963-ին, Արմեն Թօփճեանի մահուան Ա. տարելիցին առիթով Վ. Ճինսնեան երկար յօդուած մը ստորագրած է «Յեղափոխական Ալպոմ»ի Դ. Շարքին թիւ 8(44)-ի մէջ, «Արմեն Թօփճեան» խորագրով:

Մեզի համար սակայն Ամսօ Արմեն էր ան, թէ՛ մօրս, որուն հօրեղբայրն էր, թէ՛ ինձի համար: Հակառակ անոր, որ կը վախնայի իր փակ աչքերէն եւ խիստ դիմագիծերէն, կը սիրէի մօրս հետ երթալ իրեն այցելութեան: Զիս կը գրաւէր մանաւանդ իր ձախ ձեռքը, որ կարծեմ դաստակէն անդամահատ էր – աջին վրայ մէկ-երկու մատ մնացեր էր - եւ որուն շուրջ մետաղէ օղակ մը կ'անցընէր ամէն անգամ, որ սուրճ ուզէր խմել. այդ օղակին

վրայ կը տեղադրէին սուրճին պնակն ու գաւաթը եւ ինք... կը դիտէի թէ ինչպէս հեզասահ կերպով կը բարձրացնէր թելը եւ կը մօտեցնէր սուրճին գաւաթը շրթունքներուն. ամէն անգամ վախ կ'ապրէի որ սուրճը պիտի թափի, եւ ամէն անգամ հիացումով կը դիտէի սուրճին... չթափիր:

Այնքա՛ն պատմութիւններ ունէր մայրս իր Ամմօ Արմէնին մասին. այդ պատմութիւններէն ամենէն աւելի տպաւորէր է զիս իր մեծ սիրոյ պատմութիւնը: Այսօր չեմ գիտեր թէ իրապէ՛ս մեծ էր այդ սէրը. բայց քանի առաջինն էր, անշուշտ որ մեծ պիտի ըլլար իրեն համար:

Ամմօ Արմէնը խօսած-պատմա՞ծ էր մօրս այդ մասին. չեմ գիտեր, որովհետեւ մտիկ կ'ընէի իրենց զրոյցը, բայց շատ բան չէի հասկնար անկէ, եւ եօթը տարեկանս:

Ամմօ Արմէնին «մեծ» սէրը կը շարունակէր ապրիլ մեր քաղաքին մէջ. ամուսնացեր էր բժիշկի մը հետ եւ կ'ապրէր քաղաքին ազնուական թաղերէն մէկուն՝ Ազիզիէի հին, գեղեցիկ վանդակորմերով շէնքի մը երկրորդ յարկին վրայ: Առաջին յարկը բժիշկին դարմանատունն էր:

Մայրս կը պատմէր, թէ «ղէպքէն» ետք Լուիֆիէն – այդպէս կը կոչուէր աղջիկը – գացեր Արմէնին, խնդրե-աղաչե-ր-պաղատեր է, որ չլքէ զինք, իրեն համար աչք-ձեռք կարելոր չեն, կարելորը իրենց սէրն է... Բայց Ամմօ Արմէնը անդրդուելի մնացեր է Թօփճեաններուն նշանաւոր սառն դատողութեամբ եւ նոյնքան նշանաւոր յամառութեամբ:

Իսկ «ղէ պքը». ե ըբ իմացայ այդ մասին, յստակ չեմ յիշեր. ի վերջոյ ռումբերն ու թուրքերը այնքան ալ յարմար նիւթեր չեն փոքրիկներուն պատմուելու համար: Բայց երբ իմացայ – կ'երեւի արդէն պարմանուհի էի – այնպիսի հպարտութիւն մը ողողեց զիս... Մեր արդար պայքարին երկար անուններու ցանկին մէջ կար մէկը, որ մեր ընտանիքէն էր, մերն էր եւ այնքան ալ հեռու չէր մեծ հօրեղբայր էր, մեծ հօրս փոքր եղբայրն էր...

«1909-ին, Ժեօն թուրքերուն կողմէ կազմակերպուած ջարդը Կիլիկիոյ հայութենէն կը իլէ բազմահազար գոհեր, յատկապէս Ատանայէն: Հալէպահայութիւնը ամբողջ շաբաթներ հաւաքական ջարդի մը մղձաւանջը կ'ապրի: Կը մտածեն

ինքնապաշտպանութեան մասին:

Այդ օրերուն Եգիպտոսէն Հալէպ կը ժամանէ Տիգրան Ծամհուր (Ֆէրիտ Մէճիտ): Հ.Յ.Դաշնակցութեան կողմէ անոր կ'առաջարկուի, որ Արմէն Թօփճեանին ռումբ պատրաստելու արուեստը սորվեցնէ: Արմէն կարճ ժամանակամիջոցի մէջ կը մասնագիտանայ:

Օրուան բարեսիրտ արաբ կուսակալին վճռական կեցուածքին պատճառով հալէպահայութիւնը բարեբախտաբար կը խնայուի հաւանական ջարդէն:

Վտանգը անցած ըլլալով, Արմէն Թօփճեան հրահանգ կը ստանայ իրենց խանութին անկիւնը թաղած 15 ռումբերը տեղափոխել»:

Ահա թէ ինչպէս կը պատմէ ինք՝ Արմէնը.

«1909-ի Դեկտեմբեր 29-ն էր: Ապակեփեղկը ներսէն գոցեցի: Նիզը դրի, ռումբերը հանեցի եւ ջուրով լեցուն դոյլի մը մէջ դրի որ թրջուին: Հինգ հատը պարպած էի եւ պատեանները դրած պատին ետեւը: Վեցերորդին խէժը լաւ չէր թրջած, աճապարանքէն քափսիւր շարժեցի, փոխանակ ուղիղ քաշելու, ետեւի քափսիւրը պատեանին դանալով, կանաչ լոյս մը ելաւ ահագին պայթիւնով», այսպէս կը գրէ Վ. Ճինանեան, Արմէնին խօսքերով նկարագրելով «դէպքին» պատահած վայրկեանը :

«Արմէն ծանրօրէն կը վիրաւորուի աչքերէն, ձեռքերէն եւ մարմնին զանազան մասերէն: Կը մտածէ դոյլին մէջ գտնուող ռումբերը առնել ու հեռանալ. չի կրնար: Խանութը ծուխով կը լեցուի: Ծնչահեղձ չըլլալու համար խարխափելով կը մօտենայ դրան, կէս մը կը բանայ: Անցորդներէն ոչ ոք կը համարձակի ներս մտնել:

Վերջապէս կը մտնէ սասունցի սրճեփ Գրիգորը եւ անմիջապէս զինք կառքով տուն կը հասցնէ: Լուրը կայծակի արագութեամբ կը հասնի Արմէնի ընկերներուն, որոնք կ'երթան ռումբերը կ'առնեն եւ խանութը գոցելով կ'անհետանան:

Առաւօտուն ոստիկանապետը, ընկերակցութեամբ հարցաքննիչ դատաւորին, կ'երթայ խանութ, կը կնքէ եւ Արմէնէնց տունը գալով կ'ուզէ հարցաքննութեան ենթարկել»:

Արմէնին եղբայրները բանտ կը տարուին: Քանի մը օր ետք ազատ կ'արձակուին շնորհիւ քաղաքապետութեան վճռական

միջամտութեան, առարկելով թէ «անոնց բացակայութեամբ քաղաքին կայունութիւնը կ'անդամալուծուի», որովհետեւ Թօփճեան եղբայրները Հալէպի թաղապետութեան կապալառուներն էին, իրենցն էր պատասխանատուութիւնը քաղաքին լուսաւորութեան, պողոտաներու ոռոգումին, ջուրի հայթայթումին, Սէպիլի պարտեզի սպասարկութեան, միսի հայթայթումին եւ այլն:

«Արմէն կը փոխադրուի բանտին հիւանդանոցը»:

«Շնորհիւ դատարանի վանեցի նախագահին իր հայրենակից Դաւիթ Ադա Ճիտեճեանի հետ ունեցած մտերիմ բարեկամութեան, դատավարութիւնը շուտ կ'աւարտի եւ Արմէն երկու տարիէն բանտէն կ'արձակուի»:

«Ապրող սֆինքս մըն էր,- կը գրէ Ալիս Ա. Միւտճեան-, ուսեալ, զարգացած, հարուստ մտապաշարով, պարթեւահասակ, թիկնեղ, գեղադեմ, ուղիղ քալուածքով, միշտ ուրախ, լաւատես»:

Ալիս Միւտճեան դուստրն է Մկրտիչ Արարատեանին, որ եղած է քարտուղարը Արմէն Թօփճեանին.

«Միա յն քարտուղարը. Պարոն Արմէնին աչքերն էր, ձեռքերն էր. “Երբ Մկրտիչը քովս է, թեւէս մտած, աշխարհի մէկ ծայրէն միւսը կրնամ երթալ” կ'ըսէր»:

«Հիմա կը մտածեմ թէ ինչքան եզակի, ինչքան բացառիկ անձ մըն էր: Ուրիշ մը այդ դժբախտութիւնը ծրարած պիտի ողբար միայն, նպաստ սպասելով շուրջիններէն. ինք, այդ վիճակով, հարիւր առողջ մարդու գործ կը տեսներ, միշտ օգնելով, բարիք սփռելով շուրջը: Ուժեղ կամքի տէր, բազմակողմանի գիտելիքներով, «Ազգային Վերին Մարմին»ի խորհուրդի անդամ, շատեր կու գային իրեն որեւէ խնդրի առնչութեամբ հարց տալու...» կը պատմէ Ալիս Ա. Միւտճեան:

Պէլրութի հաստատուելէ ետք կը բնակէր Անթիլիասի մօտիկ գեղատեսիլ բարձունքի մը վրայ, ուր իրեն մշտական այցելուները եղած են Երջանկայիշատակ Զարեհ Կաթողիկոսը, Երուանդ Տասնապետեանը, «Սքանչելի խօսակից, մտաւորական, եկեղեցական, ազգային-կուսակցական մեր ընտրանիին հաւաքատեղին էր իր տունը», կը յիշէ Ալիս Ա. Միւտճեան:

Կ'ըսուի թէ գեղեցիկ ձայն ունեցած է եւ առիթներով յաճախ

երգած.

Միրուհիս քեզ համար կեանքս կէս եղաւ,
Քու անունդ էր միայն, որ ինձ կեանք տուաւ.

Այդ սիրուհին իր սիրած աղջիկն էր, թէ սիրած
կուսակցութիւնը. հաւանաբար երկրորդը, որուն համար
իրապէս կեանքին երկու երրորդը տուած է Արմէն Թօփճեան,
մեր Ամնօ Արմէնը, իր շատ երիտասարդ հասակին:



Տէր եւ Տիկ. Արմէն եւ Ալիս Թօփճեան

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

-Այս վեց քարերը կը տեսնե՞ս,- կ'ըսէ մայրս, մամռոտած տապանաքարեր ցոյց տալով,- ասոնք Թօփճեաններուն քարերն են, հին գերեզմանատունէն բերուած:

Առաջին անգամ է որ կը լսէի հին գերեզմանատան մասին. հի՞ն. բայց մեր այս գերեզմանատունը հին չէ՞, հին, անկանոն, առանց ուղիներու այնքան, որ կը ստիպուիս տապանաքարերու վրայ կոխկոտելով հասնիլ պապերուդ:

Ուրեմն աւելի հին մըն ալ գոյութիւն ունեցեր է:

-Մեր հիմակուան տան տեղն էր հինը:

Մեր «հիմակուան» տունը հրշէջներու դիմացի իջուածքին վրայ է, Սիրիան կաթովիկ եկեղեցւոյ ետեւը, այլ խօսքով՝ շատ բանուկ եւ խճողուած փողոցի մը վրայ. նախապէս հոս գերեզմանատուն եղեր է ուրեմն:

Լուսանկարներ չեմ տեսած, բայց տակաւին միտքիս մէջ են Թօփճեաններուն վեց տապանաքարերը, քովէ քով շարուած, մէկը երիտասարդ մահացած կնոջ մը, երկրորդը փոքրիկի մը, իսկ մնացեալ չորսը չեմ յիշեր:

Բաւական հին են, 1800-ականներէն. անոնց նման թերեւս միայն տասնեակ մը տապանաքարեր կան, որոնք անմիջապէս աչքի կը զարնեն իրենց տարբերուող ոճով: Կարծես հին օրերուն այնքան ալ հիմնական չէ եղած խաչեր կամ հրեշտակներ կանգնեցնելը տապանաքարերուն վրայ:

Այս նոյն վեց տապանաքարերուն համար էր որ քեռիս ըսաւ՝ «Բայց ինչպէ՞ս երթամ, երբ հօրս եւ պապերուս գերեզմանները հո՞ս են». Գանատա պիտի գաղթէր:

Գերեզմանատուն մը փոքրացուած քաղաքի մը կը նմանի իր մատուռով, փողոցներով եւ թիւերով. քաղաք, որ նաեւ իր նշանաւոր եւ մեծ «բնակիչները» ունի, որոնցմէ հպարտօրէն կը յիշենք Յակոբ Օշականն ու Քարէն Եփփէն, քաղաք, ուր ապրողները չէ որ կ'ապրին, բայց որ կեանք ունի, յիշատակներով տրոփուն կեանք ու երբեմն նաեւ խօսքով ու ողբով ապրող կեանք:

Զաւակներս փոքր էին, երբ Շաբաթ օրերը կ'երթայինք իմ եւ

իրենց մեծ հայրերուն այցելութեան, բոլորին հերթով, բոլորին համար աղօթելով, մումեր վառելով: Իրենց հօրենական մեծ մայրը, երբ լսեց այս այցելութիւններուն մասին, ուղղակի գայթակղեցաւ «Քա մեղք են չոճուխները, աստի՛նչ երթալիք տեղ է որ...»: Բայց մեր այցելութիւնները ընտանեկան պատմութեան տարբեր գլուխներու ընթերցումի մը կը վերածէր մայրս, ամէն անգամ յուշեր պատմելով. եւ այնպէս կը պատմէր, կարծես այդ մարդիկը կը շարունակէին տակաւին ապրիլ, պարզապէս կ'ապրէին այլ աշխարհի մը մէջ:

Շատեր կը նախընտրէին Շաբաթէն տարբեր օր մը այցելելութեան երթալ, առանց հետաքրքրի աչքերու եւ ականջներու ներկայութեան հաղորդուելու եւ գլուխ-գլխի զրուցելու իրենց սիրելիներուն հետ:

Տարօրինակ հեւքով մը կ'երթաս, կարծես այդ լուռ տարածքէն ներս հրաշքները կարելի կը դառնան, եւ օր մը իրապէ՛ս պիտի հանդիպիս անոր, որուն փնտռելու եկեր ես: Երկար ժամանակ կը տեւէ մինչեւ հասկնաս, որ այստեղ լռութիւնը վերջնական է, որ այստեղ միայն ծիծեռնակները խօսք ունին, իսկ մնացեալը կը խոկայ կեանքի առեղծուածին մասին:

«Փոքրերը պետք է սորվին նաեւ, թէ այլ կեանք մը կայ, որ երբ հանդիպին անոր, ցնցումը այնքան ալ մեծ չըլլայ», համոզուած էր մայրս:

Դարպասէն իսկ զգալի է, որ այս վայրը նաեւ խաղաղութեան, վերջնական խաղաղութեան վայրն է, հոս հոն ցրուած լուռ հրեշտակներով, որոնք, տարօրինակ *փարատոքսով* մը, հաւատք կը ներշնչեն կեանքին հանդէպ:

Կը յիշեմ երբ հօրենական մեծ մայրիկս մեռաւ եւ յետոյ զինք թաղեցին: Այսքանը կը յիշեմ միայն: Եւ կը յիշեմ տան անսովոր լռութիւնը առանց իր ներկայութեան, թէեւ ինք կեանքին վերջին տարիներուն, հակառակ տիգրանակերտցի ըլլալուն՝ (տիգրանակերտցիներուն այրերը լռակեաց կ'ըլլան, կիները՝ շատախօս), դարձեր էր գրեթէ լռակեաց, Երուսաղէմի ձիթապտուղի կուտերով համրիչը ավէն կախուած (ո՛ր մնաց այդ համրիչը, զոր հիմա տարօրէն կը կարօտնամ, կարծես եթէ

ափերուս մեջ ըլլար, Նէնէ Հայկանոյշիս հանդէպ ունեցած կարօտս կրնար մեղմանալ), երբեմն մրափելով ու երբեմն աղօթքներ մրմնջելով:

Մայրս սակայն ուրիշ դէպքեր կը յիշէ: Լսած եմ առաջին անգամ, երբ կիներու հաւաքի մը, չեմ գիտեր ի՛նչ նիւթի առնչութեամբ, ներկաներէն մէկը հարց տուեր էր.

-Ո՛վ է ձեր տաներէցը:

Որուն մայրս հանդարտօրէն պատասխաներ էր.

-Մենք տաներէց քահանայ չունինք:

-Չունի՞ ք... ինչպէ՛ ս... կ'ըլլա յ...

-Ինչո՞ւ պիտի չըլլայ. երբ մեռնիմ, հարկաւ զիս թաղող մը կ'ըլլայ,- ըսեր էր մայրս նոյն հանդարտութեամբ:

-Բայց ինչո՞ւ:

Եւ մայրս պատմեր էր.

«Մեր տաներէցը Տէր Մկրտիչն էր, բայց քանի որ շատ ծերացեր էր, իր փոխարէն նոր քահանայ մը որոշուեր էր: Երբ կեսուրս մեռաւ, Առաջնորդարան լուր ըրինք. այդ նոր, աւելի երիտասարդ քահանան ղրկեցին մեզի, որ եկաւ եւ սկսաւ տան կարգը կատարել: Յանկարծ Տէր Մկրտիչը փոթորիկի պէս ներս մտաւ մեր տան բաց դռնէն եւ սկսաւ գորգոռալ «Դուն ո՞վ ես որ իմ ծովներս գողնալու ելեր ես...»: Խեղճ քահանան չէր կրնար պատասխանել եւ ըսել, թէ զինք Առաջնորդարանէն ղրկեր են: Մինչ այդ մեր տունը լեցուն է զանազան զարմանազան մարդոցմով... Գետնին տակ անցայ այդ բոլոր օտարներուն առջեւ»:

Մօրս «օտար» ըսածը մեր ընտանիքին տարբեր դաւանանքներու անդամներն էին պարզապէս եւ անշուշտ անոնց ազգական-բարեկամները. փոքր մօրաքոյրս ամուսնացած էր բողոքական հալէպահայու մը հետ, որ հին հայերէն ըլլալուն, ա՛լ հայերէն լաւ չէր խօսեր. մօրաքոյրս՝ պապէն աւելի պապական, ամուսինէն աւելի բողոքական դարձեր էր:

Երրորդ մօտաքոյրս կաթողիկէ մայրապետ եղեր էր վաղուց, հօրը անակնկալ մահուան որպէս հակազդեցութիւն կարծես. անշուշտ իր բոլոր ընկերուհիները եկեր էին թաղումին ներկայ ըլլալու:

Բողոքական մօրաքրոջս մեծ տղան շաբաթապահ դարձեր էր, չեմ գիտեր ի՛նչ պայմաններու տակ, եկեր էր եւ իր հետ իր բարեկամները բերեր էր:

Ներկայ էին նաեւ Կիւլպէնկեան մայրանոցին խնամակալները՝ արաբ քրիստոնէայ մարդիկ, ծանօթներ, բարեկամներ:

Իրապէ՛ս զանազան-զարմանազան ամբոյս մը: Եւ այս բոլորին դիմաց՝ հայ առաքելական եկեղեցւոյ երկու քահանաներու կոթի: Տարիներ ետք երբ կը մտաբերեմ այս դէպքը, կամ կը յիշեմ մօրս պատմածը, միտքիս մէջ Յակոբ Պարոնեանի քահանան կը յայտնուի եւ չեմ կրնար լրջութիւնս պահել:


«Թաղումին յաջորդ օրն իսկ Առաջնորդարան գացի եւ պաշտօնապէս ըսի, որ տաներէց քահանայ չեմ ուզեր: «Հապա պսա՛կ, թաղո՛ւմ եւ այլն», ըսաւ պաշտօնեան, ես ալ ըսի՝ երբ մեռնիմ, հարկա՛ւ զիս թաղող մը կ'ըլլայ»:

Մայրս մահացաւ սուրիական պատերազմի թէժ օրերուն եւ ինչպէս մնացեալ բոլորը, զինք ալ մէկ հոգիով եւ մէկ քահանայով թաղեցին, հեռու այն հողին մէջ, որ պետութիւնը տուեր էր բոլոր քրիստոնէաներուն թաղման համար, որովհետեւ մեր գերեզմանատան շրջանը խիստ վտանգաւոր էր այդ օրերուն: Կարծես մօրս խօսքը՝ «Հարկաւ զիս թաղող մը կ'ըլլայ» մարգարէութիւն ըլլար:

Ամէն անգամ որ դուրս կու գամ գերեզմանատան դարպասէն, մէկ աղօթք ունիմ միայն առ Բարձրեալը.

«Տէր Աստուած, կ'աղաչեմ, հերթը մի շփոթեր»:

ՈՒՐՏԱ ՀԱԼԷՊ ԵՐԹՈՒՂԻՆ



Յակոբ Էֆենտի Գասպարեան կնոջ Աննային, երկու մանչերուն՝ Արմէնին եւ Երուանդին, եւ երկու դուստրերուն՝ Խանրմ-Չուարթին եւ Չէքիլէին հետ

Յակոբ Գասպարեանը տասնհինգ տարեկան էր եւ ճիշդ ա՛յդ պատճառով չէր հանդուրժեր ինքզինք մօր տեղը դրած մօրուին: Ի՛նչ ունէր այս կինը իր մօրմէն աւելի՝ ո՛չ աղուորութիւն, ո՛չ քաղցրութիւն: Ի՛նչ ունէր ...

Կեա՛նք:

Մայրը մահացեր էր, իսկ մօրուն շատ էր կեանքով լեցուն, այդ մահը մոռցնելու չափ շրջապատին, մանաւանդ՝ հօրը:

Ա՛լ չէր հանդուրժեր: Եւ առաւօտ մըն ալ դպրոցի ճամբան բռնելու փոխարէն, բռներ էր Հալէպի ճամբան:

Ի՛նչ գիտէր ինք Հալէպի մասին: Ոչի՛նչ, բացի ասդին-անդին պատահաբար լսուածներէն՝ օսմանեան կայսրութեան կեդրոնէն հեռու այդ քաղաքը կ'ըսէին թէ ապահով է աւելի քան Այնթապն ու Ուրֆան, կ'ըսէին թէ պերէքթ⁴ ունեցող քաղաք է՝ գործը շատ, շահը առատ: Ինչո՞ւ չերթար:

Եւ Յակոբ Գասպարեանը բռներ էր Հալէպի ճամբան:

Մտածե՛ր էր թէ ի՛նչ պիտի աշխատի հոն հասնելէն ետք.

Ի՛նչ ըլլայ կ'ընեմ, կարելորը գործ ըլլայ աշխատիմ...

Յակոբ Գասպարեանը Հալէպ մտեր էր քաղաքին եօթ

դռներէն Անտիոքի դռնէն: Համեմներու եւ թաց բուրդի հոտ մը քիթին զարկեր էր ու քաշեր զինք դէպի անոր աղբիւրը: Մեծ թիով մարդիկ, գետի հոսանքի արագութեամբ եւ խտութեամբ մէկ ուղղութեամբ կ'երթային: Միացաւ անոնց:

Հրապարակ հասնելէն ետք չորս կողմ նայեցաւ: Հրապարակին մէջտեղը ժամացոյցին աշտարակն էր. անկէ դէպի աջ կ'երկարէր ճամբայ մը, որուն վերջաւորութեան կամուրջի պէս բան մը կ'երեւէր: Դէպի հոն շարժեցաւ, թէւ արդէն սկսեր էր յոգնիլ: Նաեւ մտահոգ էր գիշերելիք տեղ մը գտնելու համար:

Կամուրջ չհասած խանութ մը գրաւեց ուշադրութիւնը. մարդ մը կը փորձէր երկաթէ գլանիկը երկու կեռերու վրայ նստեցնել.

-Օգնէ մ,- հարցուց թրքերէն:

Մարդը չլսեց:

Յակոբը քայլ մը ներս մտաւ ու կրկնեց.

-Օգնէ մ:

-Ի՞նչ,- հարցուց մարդը արաբերէն:

Սկիզբն էր: Յետոյ վարպետ ու աշկերտ այդպէս կը խօսէին. վարպետը թրքերէն կը սորվէր, Յակոբը՝ արաբերէն: Վարպետը հաւատարիմ ու նուիրեալ աշկերտ մը գտեր էր, Յակոբը ապահովութիւն:

Տարիները սահեցան Հալէպի գիշերներուն պէս հեզասահ: Յակոբը մեծցաւ եւ իր հետ մեծցաւ գործը: Վարպետը քովի խանութն ալ գնեց: Աչքին լոյսին պէս կը պահէր իրեն ուղուր⁵ եկած այս իսելացի, լռակեաց ու գեղադէմ տղան: Աղջիկ ալ ունէր:

Յակոբը չվախցաւ ոչ ըսելու.

-Ես մեր գեղէն հարս պիտի բերեմ,- ըսաւ ցած, բայց հաստատ ձայնով:

* * *

Մոռցեր էր, թէ որքա՛ն հեռու է իրենց գիւղը. մոռցեր էր, թէ քանի՞ օր քալեր էր հոս հասնելու համար: Ճամբան շատ երկար կը թուէր, իսկ իր համբերութիւնը կարճ էր, շատ կարճ:

Որոշեր էր առնելիք հարսը՝ Աննա կը կոչուէր, Աննա Թափթափեան, ֆիտայի եօթ եղբայրներուն մէկ հասակի քոյրը, որ այն օրերուն հազիւ տասը տարեկան էր: Հասունցած ըլլալու է հիմա:

Ջորիին վրայ նստած Յակոբ Գասպարեանին սիրտը տրոփ մը փախցուց հապա՞ եթէ մինչեւ իր հասնիլը Աննան կարգուած ըլլայ ...

Շուրջը նայեցաւ խորունկ յուսախաբութեամբ: Երկու օր ունէին Ուրֆա հասնելու: Աննային հարսնացած ըլլալու հաւանականութիւնը սկսաւ տանջել զինք: Ինչո՞ւ ճամբայ ելլելէն առաջ չէր մտածած: Կրնար մարդ դրկել, հասկնալ ...

Եւ Յակոբ Գասպարեանը մեռնելու չափ կարօտցաւ մայրը, Աննան, իրենց տունը:

* * *

Յակոբին ըսին՝ «Մենք մեր աղջիկը դուրս հարս չենք տար»:

-Շա՛ տ աղէկ,- ըսաւ Յակոբը, - խանութ մը վարձեց, տուն մը առաւ, կահաւորեց եւ կարգուեցաւ:

Տարի մը չանցած ամէն բան փակեց, առաւ Աննա հարսը եւ վերադարձաւ Հալէպ:

-Օրհնուած քաղաք է, բարիքը առատ, մարդիկը բարեխիղճ,- ըսեր էր,- հոն գործս աւելի լաւ է...

Իր մեծ, իսնի չափ մեծ տան նոյնքան մեծ բակին մէջ տեղի ունեցեր են մեծ մօրս՝ Յակոբին աղջկան Խանըմ-Ձուարթին պսակն ու հարսանիքը:

ԱՄԵՆԷՆ ՓՈՔՐԸ



Արուսեակ Թօփճեան Ֆրանսական համալսարանի ուսանող

Երբ Նուպարը ծնաւ երեք աղջիկներէն յետոյ, մայր-հայր փորձ մը եւս ուզեցին ընել: Բայց ծնողը Արուսեակն էր, Արուսը, մօտիկներուն համար: «Սեւուկ ուլիկս» որոշեր էր հայրիկը: Իրապէս ալ Արուսը սեւուկ ուլիկ էր, երրորդ քրոջ՝ Անժելին՝ հրեշտակային սպիտակութեան կողքին: Արդէն հայրն էր ըսողը՝ Հրեշտակս, թարգմանելով անունը:

Երբ Գրիգոր Թօփճեանը մեռաւ դեռ քառասուն տարեկանը չբոլորած, Արուսը վեց տարեկան էր միայն, նախակրթարանի առաջին դասարանի աշակերտ:

-Քոյրիկդ Անժելը կու լայ կոր, եղեր պապանիդ մեռեր է:

-Ինչո՞ւ կու լայ կոր. եթէ մեր պապան չմեռնէր, ուրիշի մը պապան պիտի մեռնէր:

Տարիներ ետքը, Արուսը ինքն ալ կը զարմանար վեց տարեկանի իր տրամաբանութեան վրայ, եւ կը բացատրէր «Շատ ուրախ բնաւորութիւն ունէի, թէեւ շատ տխուր մանկութիւն ապրեր եմ ...»:

Ֆիլիփ Թօփճեանին վեց մանչերէն չորրորդին՝ Գրիգորին մահը իրապէս կսկծալի էր. գիւղի ճամբուն վրայ, ուր կ'երթար «փաթոսները» լարելու, ինքնաշարժը կը դառնայ, կրակ կ'առնէ,

եւ վարիչը, փոխանակ օգնէ Գրիգորին դուրս ելլելու այրուող ինքնաշարժէն, կը փախչի, ազատելու համար հաւանական հետապնդումէ. եւ Գրիգոր Թօփճեանը կը մահանայ այդտեղ, այրուող ինքնաշարժին հետ ինքն ալ այրուելով:

Ջուարթը, Արուսին մայրը երեսուն երկու տարեկանին կ'այրիանար, հինգ զաւակներուն հոգը իր վտիտ ուսերուն:

-Մամաս երեսուն տարի սեւ հագուեցաւ, պատուհաններն ու հայելիները սեւով պատեց ու չզգաց, որ մեր սիրտն ու հոգին ալ սեւով կը պատէ: Նուպարին պսակին էր որ սեւը հանեց:

Մինչեւ հօրը մահը, Արուսին կեանքը քաղցր յիշատակներու փոքրիկ շարոց մըն է, գոր Արուսը ամուր-ամուր կը պահէ հոգիին մէջ: Ամառները Հաճի Հապիպլիք, Հալէպի այլ հարուստ ընտանիքներուն հետ, ձմեռները Եւրոպայէն հասած բացիկներով խանդավառ, որովհետեւ բացիկներէն յետոյ երբ պապան տուն գար, այնքան զարմանալի բաներ պիտի բերէր իրենց:

Հօրը մահէն ետք կեանքը դիմակ փոխեց, բայց շարունակուեցաւ: Արուսը երբ տան մթնոլորտը շատ ծանր գտներ, կը վազէր քեռկիներուն քով, որոնք կը սիրէին իր ուրախ, աշխատասէր, օգնելու միշտ պատրաստ բնաւորութիւնը, եւ զինք մասնակից կը դարձնէին իրենց տուներու գործին եւ ուրախութեան:

Յետոյ օրերը անցան, երկու մեծ քոյրերը ամուսնացան, Անժելը որոշեց կուսակրօնութեան երթալ. այն օրերուն Թօփճեաններուն բոլոր աղջիկները մայրապետներուն դպրոցը կը յաճախէին (այդ ալ ուրիշ պատմութիւն) եւ բնական էր, որ Անժելը մայրապետ ըլլար: Մէկը դէմ չեղաւ:

Մնաց Արուսը մօր հետ: Իններորդը աւարտեց: Սկսաւ աշխատիլ որպէս ուսուցչուի:

Յետոյ ինչպէ՞ս, ուրկէ՞ ուր մտածեց մանկաբարձութիւն ուսանիլ Պէյրութի համալսարանը, ուր Նուպարը բժշկութիւն կ'ուսանէր: Միասին աւարտեցին:

Արուսը մոռացութեան տուեր էր հօր բացակայութիւնը, կարենալ ապրելու համար:

Միջնակարգի իններորդ դասարանը աւարտեր եւ անմիջապէս հրաւիրուեր էր Աւետարանական վարժարան

դասաւանդելու:

-Աշակերտներս հազիւ քանի մը տարի ինձմէ փոքր էին,- կ'ըսէր:

Հոն ծանօթացեր էր Գեղամին՝ ուսուցիչի մը, որուն հետ նշանուեր էր – այստեղ կա ր սիրոյ պատմութիւն մը արդեօք, որուն ուրուագիծը մօրս խօսքերուն տխրութենէն կը զգայի – բայց որովհետեւ իր ամենամեծ քոյրը՝ Ազնիւր յարմար չէր տեսեր այս գոյգին կապը, նշանը ետ դրկուեր էր: Ո՞վ էր դրկողը, մայրս չէր ըսեր, որովհետեւ ինչ իմաստ պիտի ունենար մանրամասնութիւններ պատմելը, «դրկուեր էր» եւ այդ պատմութիւնը աւարտի հասեր էր, դեռ չսկսած:

Ասիկա էր պատճառը, թէ՛ մօրս զարգացումի ծարարը, որ զինք մղեր էր «անլսելի» յամառութեան, Պէյրութի Ֆրանսական համալսարանը մանկաբարձութիւն ուսանելու: Եօթանասուն տարի առաջ ո՞ր ծնողքը պիտի ուզէր իր աղջիկը ուսումի դրկել, այն ալ ուրիշ քաղաքի մը մէջ: Հօրեղբայրները դէմ կ'եցեր էին, բայց ինք յամառօրէն հետապնդեր էր ուզածը՝ թուղթեր պատրաստել, մուտքի քննութեան պատրաստուիլ ... Կար նաեւ միակ եղբօր՝ Նուպարին նոյն համալսարանին մէջ բժշկութեան ուսանող ըլլալու հանգամանքը:

-Եթէ մայրդ հետդ գայ,- ըսեր էին հօրեղբայրները:

Գացեր էին Պէյրութ, տուն մը վարձեր էին եւ երեքը միասին երկու տարի ապրեր էին հոն, յետոյ քոյր ու եղբայր միասին աւարտեր էին համալսարանը:

-Քանի մենք քոյր-եղբայր էինք, արտօնեցին որ եղբօրս քով կենամ վկայականի խմբանկարին մէջ. դայեակները պէտք էր երկու կողմերը կենային. ես եւ Նուպարը նկարին ճի շղ մէջտեղը կ'եցեր ենք,- կ'ըսէր մայրս հպարտութեամբ:

Հալէպ վերադարձէն ետք անմիջապէս Կիւլպէնկեան մայրանոց հրաւիրուեր էր աշխատանքի:

Շատ բան չէր պատմեր. պատմածները աւելի կը բեւեռուէին Զէյթուն Խանի մէջ ապրողներուն եւ անոնց օգնելու իր ճիգերուն մասին:

Մէկ բան միայն, որ խորապէս ազդեր է վրաս.

-Երբ առաւօտ կանուխ ծննդաբերութեան մը կ'օգնեմ, երբ կը տեսնեմ թէ ծնող երեխան ինչպէ՛ս ճիգ կը թափէ դուրս գալու մօր

արգանդէն, գլուխը աջ ու ձախ շարժելով, եւ երբ այդ պահուն մօտակայ մզկիթէն կը հնչէ առաւօտեան աղօթքին մեղմ կանչը՝ Ալլա հու Աքպար (Աստուած մե՛ծ է), այն ատեն կը հաւատամ մարդ արարածի հրաշքին ...

Մայրս երբ իմ այս տարիքիս էր, արդէն երկու թոռներ ուներ եւ արդէն դադրեր էր իր մօրը մասին խօսելէ: Սկիզբները յաճախ կը խօսեր ու կը պատմէր.

-Հօրս մահէն ետք մայրս մեր կեանքը սեւ դարձուց, ամէն կողմ սեւով պատեց, մինչեւ պատուհաններն ու հայելիները սեւ կտորներով ծածկեց, եւ մինչեւ Նուպարին ամուսնութիւնը, սեւը չհանեց... սիրտերնիս սեւ դարձեր էր. ես ալ ամէն առիթի կը վազէի քեռկիներուս տունը կ'երթայի:

Երկու քեռիները՝ Արմէնն ու Երուանդը Հալէպի հին եւ նշանաւոր Խէնտէկ թաղին վրայ նոյն շէնքին մէջ կը բնակէին:

-Զիս շատ կը սիրէին իմ ուրախ բնաւորութեանս եւ աշխատասէր ըլլալուս համար. կտոր եւ թելեր կու տային որ ձեռագործներ հիւսէի...

Ինք ըլլալով ընտանիքին հինգերորդ եւ վերջին զաւակը, մայրը յաճախ զինք անելորդ գտեր է ամուսնին մահէն ետք. երեք աղջիկներու վրայ տղայ մը ունենալէ ետք, փորձեր են երկրորդ տղայ մըն ալ ունենալ, բայց եկեր է... մայրս:

-Գոնէ դուն չըլլայիր,- յաճախ ըսեր է հինգ որբուկներ մեծցնելու ծանրութեան տակ կքած երեսուն երկու տարեկան մայրը:

Մայրս իմ զաւակներովս զբաղած, գրեթէ մոռցեր էր տխրութիւնը եւ դադրեր էր մօրը մասին մտածելէ եւ խօսելէ:

Իր կեանքին վերջին տարիներուն ա՛լ դադրեր էր աշխատանքէ եւ զաւակներս – որոնք իր խնամքին կը յանձնէի յետմիջօրէններուն, երբ աշխատանքի կ'երթայի – արդէն համալսարանական էին եւ ինքնաբաւ:

Ընթերցումի սերը, որ մեծ յաջողութեամբ փոխանցեր էր հօրս, վերածուեր էր կիրքի. անդադար կը կարդար, առաւօտեան անկողինէն ելլելէ առաջ, կէսօրուան հանգիստի ժամերուն եւ մանաւանդ իրիկունները: Բայց իր ամենէն սիրած պահը գիշերն

էր, քունի անցնելէ անմիջապէս առաջ. ու եթէ ես կամ իր բարեկամուհիին տիկ. Վերժինին աղջիկը Անոյշը – մօրս մեծ դուստրը – գանգէր ու հարցնէր.

-Հիմա ի՞նչ պիտի ընես, տիկի՛ն Արուսեակ:

Մայրս անմիջապէս կը պատասխանէր.

-Թագուհի պիտի ըլլամ:

Սկիզբը ո՛չ ես, ո՛չ ալ Անոյշը գիտէինք թէ ի՞նչ է այս «Թագուհի ըլլալ»ը, կամ թէ մայրս ինչպէ՛ս Թագուհի կ'ըլլար:

-Կը պատրաստուիմ քունի եւ երբ անկողին մտնեմ, բարձերը կռնակիս կը դնեմ, եւ գիրքս ձեռք կ'առնեմ... Թագուհի կ'ըլլամ ...

Իրեն համար Թագուհի ըլլալը վիճակ էր՝ օրուան, կեանքին իր վրայ դրած բոլոր պարտականութիւնները կատարելէ ետք, խաղաղ խիղճով ինքզինքին նուիրել հաճոյքի պահիկ մը միայն. ահա՛ թէ ինչպէս Թագուհի կ'ըլլար մայրս:

Հեռաձայնեցին որ ինկեր է, աստիճաններուն վրայ. մէկը զինք հիւանդանոց տարեր է եւ հիմա զիս կը սպասեն:

Տուն դրկեցի մաքրութեան կինը, վրաս անցուցի վերարկուս եւ վազեցի հիւանդանոց:

Գլխուն բացուածքը բժիշկը արդէն կարեր էր, մաքուր ու գեղեցիկ, հպարտութեամբ ալ ցոյց տուաւ: Միրտս ի՛ր ցաւով սեղմուեցաւ:

-Ճնշումը հիմա՛ քսան է,- ըսաւ բժիշկը,- ինկած ատենը 23-24 եղած ըլլալու է:

Բացաւ կուրծքը եւ ցոյց տուաւ մեծ ուռեցք մը, որ կարծես աւելի կը մտահոգէր զինք:

-Ասկէ լուր ունի՞ս:

-Ո՛չ,- ըսի:

Թերեւս «ոչ»ս քիչ մը խիստ էր, բայց անակնկալն ալ խիստ էր՝ մարդ նման ուռեցք կ'ունենայ եւ բան չ'ըսէ ընդհանրապէս իր հարազատ զաւկին:

-Հի՛ն բան է,- հարցուցի բժիշկին: Չայնս կրկին խիստ դուրս եկաւ, որովհետեւ շուրջս դուռ-դրացի հաւաքուած ուշի-ուշով մտիկ կ'ընէին, կարծես իրենց մայրը ըլլար: Շնորհակալ էի որ զինք հիւանդանոց բերեր էին, որ ինծի լուր տուեր էին, բայց ալ

պէտք չէ՞ր զիս ազատ ձգէին գոնէ բժիշկին հետ:

-Ըստ տեսածիս՝ երկու տարուան բան ըլլալու է:

Գիտէի որ մայրս շատ գաղտնապահ է, ոչ ոքի ոչինչ կ'ըսէ, մանաւանդ իր հարցերուն եւ խնդիրներուն մասին, որովհետեւ, որքան կ'ենթադրեմ, մօրը խօսքը «ականջին օղ ըրեր է»՝ «բերանդ արիւնով ալ լեցուած ըլլայ, մօրդ, քրոջդ առջեւ մի թքեր»:

Մայրը չէր ըսած «աղջկադ առջեւ մի թքեր», միակ աղջկան, որ իր երեք քոյրերուն եւ մէկ հատիկ եղբօրը մահէն ետք միակ հարազատը մնացեր էր: Ամուսինը երբեք հարազատ չէր եղած իրեն. զգացեր էի ատիկա. «ամուսնանալ պէտք էր, ամուսնացանք», ըսեր էր հայրս իր մահուան օրը:

Եւ հիմա պէտք է կարենամ յարաբերիլ իր վիճակին ԵՒ այս ուռուցքի գոյութեան հետ:

-Կը նկարենք, քննութիւններ կ'ընենք ու եթէ պէտք է՝ գործողութիւն կ'ընենք,- ըսաւ բժիշկը:

Գլուխս շարժեցի: Ոչինչ ունէի ըսելիք այդ պահուն, ոչինչ կրնայի ըսել, մինչեւ չմարսէի այս բոլորը, մինչեւ չհասկնայի իր կացութիւնը եւ իր հետ իմս:

Նախ կար կուրծքին ուռեցքը. քաղցկէ՞ղ, հաւանաբար, որովհետեւ մեր ընտանիքին մէջ նախ խալէ Ձեքիյէն, մօրենական մեծ մօրս քոյրը, յետոյ թանթ՝ Նազենիկը, մօրաքոյրս, յետոյ թանթ՝ Արաքսը, մօրս զարմուհին, յետոյ՝ Լուսին Ջարիկեանը, մօրս հօրաքրոջ թոռը եւ վերջինը՝ Սօնա Համալեանը, մօրս հօրեղբօր կողմէ երկրորդ զարմուհիս, հետեւաբար նաեւ.... հաւանաբար...

Ձէ, բառը միտքիս մէջ իսկ ինզինքիս չըսի:

Տակաւին կար հարցը իրեն հոգ տանելուն, որ կ'ենթադրէր որ իմ տունս ձգեմ եւ իր տունը երթամ ապրելու, որովհետեւ հակառակ որ երկուքս ալ առանձին կ'ապրէինք՝ ինք արդէն քսան տարիէ ի վեր, ես՝ երկու տարիէ ի վեր, եւ հակառակ չորս կողմիներուն յորդորներուն «կա մ ղուն իր քով ապրիր, կամ ի՛նքը քու քովդ թող ապրի», մայրս յամառեր էր մինակը ապրիլ՝ «ամէն մարդ ի ր տունը» կ'ըսէր բոլորին այնպիսի խիստ ոճով, որ ըսողները զրոյցին նիւթը կը փոխէին, «ամմա զօրաւոր կին է եղեր» մտածելով:

Այս բոլորը խուժեցին վրաս բժիշկին խօսած ատենը: Գլուխս

շարժեցի եւ սպասեցի, որ մայրս դուրս բերեն MRI-ի սենեակէն:

Ութսուն ինը տարեկան է. արդէն նկարելու տարին զինք, առանց կարծիքս հարցնելու, յետոյ վստահ եմ որ արեան բոլոր տեսակի քննութիւնները պիտի ընեն, յետոյ ալ՝ գործողութիւն: Կը դիմանա՞յ սիրտը:

Հօրենական մեծ մայրս ալ, Նէնէ Հայկանոյշս ութսուն չորս տարեկան էր, երբ լեղուցի պատմութիւն մը ունեցաւ եւ բժիշկը գործողութիւն թելադրեց.

-Բայց սիրտը կրնայ չդիմանալ,- ըսած էր մօրս:

Այն օրերուն բժիշկները աւելի խիղճով էին կ'երեւի:

Մեծ մայրս կը կանչէ հարսը՝ մայրս իր քով ու կ'ըսէ.

-Նայի՛ր, Արուսեակ, հիւանդը ես եմ, խնամողը դո՛ւն ես, աղջիկներէս *խէր* չեմ սպասեր, այնպէս որ սա գործողութիւն է ինչ է ընենք, Աստուած կեանք տուեր է *նէ*, կ'ապրիմ...

Թէեւ հօրս կողմինները բոլորը երկարակեաց են, բայց կ'երեւի Աստուծոյ տուած կեանքը այդքա՛ն էր, որովհետեւ «գործողութիւնը շատ յաջող անցաւ, բայց հիւանդը... մահացաւ»:

Հիմա մայրս է. սիրտը պիտի դիմանա՞յ գործողութեան:

Հիւանդանոցը անցուած այդ առաջին օրը, հակառակ ցնցումներուս եւ յոգնութեանս, քնանալ չկրցայ. կը վախնայի որ կրնայ քունին մէջ մահանալ եւ ես չեմ զգար իր մահը:

Մնարին քով նստած ինչէ՛ր կ'անցնէին միտքէս:

Կը թուէր թէ եթէ ինք այդ գիշեր մահանար, մեծ անկիւնադարձ մը պիտի ունենար կեանքս. բայց թէ ինչո՞ւ, տակաւին չէի գիտեր, չէի հասկնար:

Այդ գիշերը անցաւ: Մայրս չմահացաւ այդ օրը, բայց բացուեր էր փանտորային հսկայ սնտուկը, որուն գոյութեան կասկածն իսկ չունէի:

2013-ի Դեկտեմբերի վերջին օրը հողին յանձնեցի մայրս՝ Արուսեակ Թօփճեան-Գազանճեանը, կին մը, որ ասկէ կէս դար առաջ վկայուած է Պէյրութի ֆրանսական Սէն Ճոզէֆ համալսարանէն, կին մը, որ երկար տարիներ ծառայած է Կիւլպէնկեան մայրանոցէն ներս որպէս դայեակ, գլխաւոր դայեակ եւ տնօրէնուհի, կին մը, որուն համար ասկէ քառորդ դար առաջ Հալէպի հայ թէ ոչ-հայ մայրերուն մեծամասնութիւնը

կ'ըսէր իր գաւակներուն՝ «Լա՛ւ նայէ այս կնոջ, ասիկա է, որ քեզ մեզի տուաւ, ասիկա քու երկրորդ մայրդ է»: Տիկ. Արուսեակը սիրելի էր մանաւանդ զէյթունցիներու հիւղաւանին՝ Ջէթուն խանին մէջ, որուն բնակչութեան կիներն ու աղջիկները մայրանոցէն ներս կ'աշխատէին եւ իրենց պատմելի, մանաւանդ անպատմելի ցաւերը եւ հարցերը իրեն կը պատմէին՝ «տիկ. Արուսեակ, դուրպան, ճար մը ըրէ, դուն խելացի կին ես. ըսէ, ի՞նչ ընեմ...»: Եւ կ'ըսէր տիկ. Արուսեակը, յաճախ պատասխանատու կողմերուն դիմելով Առաջնորդ, Առաջնորդարան, ոստիկանապետ եւ այլք...:

Միշտ չէ, որ մայր մը խնամքէ եւ գուրգուրանքէ անդին կարող ըլլայ այլ բան տալ իր գաւակներուն: Ինչ որ մայրս տուած է ինձի, անգնահատելի է եւ անսովոր՝ առողջութիւն, անչափելի խստութեան կողքին, ժուժկալութիւն, տոկունութեան կողքին, անչափելի կամք, լռելու (յաճախ անտեղի) պարտադրանքին կողքին: Բայց այս բոլորէն անդին եւ այս բոլորէն շատ աւելի մեծ եւ խորունկ բան մը ժառանգ ձգած է ինձի՝ գաւակներս դաստիարակելու, անոնց հետ իմ յարաբերութիւնս մշակելու, եւ ի վերջոյ գանոնք իմ մտերմագոյն բարեկամներս ունենալու քաջութիւն, որովհետեւ աստիկա պիտի նշանակէր մերժել իր ձեւաւորած կաղապարները եւ շինել նորը, իմ նախընտրութիւններուս եւ իմ ժամանակիս յարմար կաղապարը: Շնորհակալութի՛ւն, մայր...

Իր մօրը՝ հողին, Մայր բնութեան յանձնեցի մայրս, ու թէեւ վերջնական չէ իր հանգիստը հոն, որովհետեւ մեր գերեզմանատան, մեր դամբարանին, հօրս կողքին չէ, բայց հանգիստ է ի վերջոյ: Եւ ինչպէս կ'ըսէ Ջարեհ Որբունի իր վեպերէն մէկուն մէջ.

«Անոնք մասնիկ առ մասնիկ պիտի լուծուին հողին, հողէն պիտի բարձրանան բոյսերու, ծառերու արմատներէն մինչեւ տերեւներուն, ծաղիկներուն ու այդ կատարներէն, երկնքին մօտիկցած, անարգել պիտի ծծեն արեւին լոյսը, երկնքի օրհնութիւնը»:

Արուսեակ Թօփճեան-Գազանճեանը ռահվիրայ էր Հալէպի մէջ, երբ որպէս կին, միայն ու միայն իր յամառ պնդումներով է,

որ ծնողքը ի վերջոյ յօժարեր էր զինք դրկել Պէյրուօթի Սէն Ժոզէֆ համալսարանը, պարզապէս որովհետեւ «մեղմացուցիչ դէպք յանցանաց» մը կար՝ եղբայրն ալ նոյն համալսարանին մէջ կ'ուսանէր: Եւ այս կէս դար առաջ, երբ կիները միայն ամուսնութեան ատակ կը տեսնուէին:

Վկայականի հանդիսութիւնը յաւերժացնող լուսանկարին ճիշդ կեդրոնն են Նուպար եւ Արուսեակ Թօփճեանները, մին որպէս նորաւարտ բժիշկ, միւսը՝ դայեակ:

Մայրս իր աշխատանքը սկսած էր Կիւլպէնկեան մայրանոցէն ներս – միակ հայկական մայրանոցը Սփիւռքի տարածքին – եւ հոն ալ աւարտած յիսուն երկու տարիներ ետք:

Այդ աւարտը սակայն, որ պէտք էր իր գեղեցիկ վերջաբանը ունենար՝ հանդիսութեամբ կամ գոնէ ողջերթով մը, կարգ մը ապիկար մարդոց պատճառով անցաւ ամբողջական լռութեան մէջ: Մակայն մայրս՝ միշտ զուսպ եւ լուռ, գոհացած էր ժողովուրդին անսակարկ սիրով եւ գնահատանքով: Ջինք եւ իր հմտութիւնը կը շարունակէին յիշել արդէն մեծ-մայր դարձած կիներ, կը շարունակէին յիշել իր խստութիւնն ու կարգ-կանոնը պահելու յամառութիւնը եւ հիանալ իր քաջութեամբ.

-Պիտի մեռնէի, եթէ ինք չըլլար,- կ'ըսէ կին մը:

-Ամիս մը շարունակ խնամեց հագի մէկ քիլօ ծնած զաւակս, երբ ես գրկել իսկ չէի կրնար զայն,- կ'ըսէ ուրիշ մը:

-Ի՞նք ծնցուցեր է զաւակներդ,- կը հարցնէին ինծի,- հապա կ'ըսեն լաւ չէ որ մայր մը իր աղջկան ծննդաբերութեան ներկայ գտնուի...

Մայրս սիրուած էր ու յարգուած մանաւանդ Մայրանոցի պաշտօնէութեան կողմէ եւ շահած անոնց ամբողջական վստահութիւնը. գիտէին, որ տիկ. Արուսեակը իրենց ամենէն նեղ եւ դժուար պարագաներուն օգնութեան պիտի հասնի, եւ այդ պատճառով ալ, հակառակ իրենց կեանքի խեղճութեան, - գրեթէ բոլորն ալ Զէյթուն խան կ'ապրէին – ինքնավստահ կը զգային:

Մօրս գլխաւոր յատկանիշներէն մէկն ալ, աշխատասիրութեան, ուղղամտութեան եւ ընթերցասիրութեան կողքին – կատաղի ընթերցող մըն էր, գիրքը միշտ ձեռքը – իր սկզբունքներուն մի շտ հաւատարիմ ըլլալն էր, երբեմն մինչեւ

ինքզինքին վնասելու գնով: Այս յատկություններն են սակայն, որոնք զինք կը դարձնեն տիկ. Արուսեակ, Հալեպի ամենէն երկար պաշտօնավարած եւ ամենէն աւելի սիրուած ու յիշուած դայեակը:



Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի Տիկնանց Յանձնախումբ, օրուան Առաջնորդ Երջանկայիշատակ Զարեհ Սրբազանի հետ (ապա՝ Զարեհ Ա. Կաթողիկոս). ոտքի, մէջտեղը՝ Արուսեակ Թօփճեան-Գազանճեան. 1954.

THE FIRST TRUE IRON WOMAN OF MY LIFE

ARA YERAMIAN

During winter, sitting close to the fireplace while enjoying a warm bread dried over the fire place, or some chestnuts (shakanag, kastana). During summer, sitting on the balcony enjoying some Aleppo zaatar with olive oil and bread, or lemon tea. Whatever snack we had, it was to accompany the countless stories she used to tell us.

Over 20 years of going to grandma's on a daily basis, the stories she told us were never ending. Every time a new one. Of course, after all, she used to be the head nurse at Gulbenkian maternity hospital (for 49 years!). Stories about families, their struggle in life, how the first waves of Armenians arriving to Aleppo used to live in unbelievable poor conditions (at Zeitun Khan, which no longer is), and much more.

Stories not only about her life at the hospital, but stories about her own family dating back to the late 1800s, with some photos almost 100 years old. She helped countless number of families and individuals, regardless of their origin or religious background. Every single person knew Mrs. Arousiag Kazanjian for the past 50 years.

Arousiag Topjian-Kazanjian's story is a long and a very interesting one, something worth of a book or a movie starting with the family in 1894 or so, when Aleppo was part of the Ottoman empire, and some of her uncles and cousins being rebellions (I remember the story about uncle Armen Topjian who got blind during a fight)... stories from 1894 or so, all the way until 2013.

The Topjian family of Aleppo, her birth family, were the first to automate agriculture in Syria through her father importing the first automatic agriculture machines from France, besides importing the very first bicycle to Aleppo. And of course her brother, the well known Dr. Noubar Topjian, one the first and top 5 doctors in Aleppo at the time (and of all times in the history of Aleppo).

She wrote the last chapter of the Topjian's legacy of Aleppo, a legacy full of sacrifice, love, giving, helping, supporting not only

Aleppo but Syria as well, not only Armenians but local citizens as well (again, regardless of their background), during war and peace.

Still a lot to say, but I will finish this long post by saying that, what I will miss the most is her smile... oh man, that magical warm smile and the gut-laughter which were her mark.

That street in Azizieh, where we used to leave dad's office and go to grandma's right across the street, her home being our meeting point after a long day, having some tea or sweet rose drink (sharab el ward, varti osharag), talking, laughing, arguing, telling/hearing stories, then go home waiting for the next day for a new round of getting together and storytelling.

The first true Iron Woman of my life, grandma Arousiag Topjian-Kazanjian, you got the peace you deserve after such a colorful life.

But now, let's celebrate the present. With THE Mrs. Arousiag of Aleppo, dad (architect Kevork Yeramian of Aleppo), and mom (author, pianist, PhD, Maroush Yeramian of Aleppo), the legacy of Kevork-Maroush Yeramians has started years ago, and is undergoing. Mom (the only other true Iron Woman of my life), Lara, Berdj, Nova. Syria. Aleppo. Mom. Stay strong.



Գրիգոր Թօփճեան եւ Զուարթ Գասսպարեան-Թօփճեան, իրենց զաւակներուն հետ՝ Նուպար, Անժէլ (ապա Մայր Մելանի), Ազնիւ եւ Նազելի.

A WOMAN OF STEEL

LARA YERAMIAN-MORA

You may wonder who I am talking about when I say “a woman of steel”. Well, this is a story about a girl who was made of steel even before she turned into a woman... she was my grandmother.

From the very young age of six, she had lost her father, and because she was the youngest of five, she was the one who suffered the most from this loss. My great grandfather used to call her “his little black lamb”, because he noticed how strong and special she was, and I bet he knew that she was going to be an extraordinary person in her life.

I vividly remember all the stories that she used to tell me, and how fascinated I would be with every single detail. I used to ask her to tell me some stories over and over again, because I couldn’t get enough of the exciting real-life events as if they were coming out of novel pages.

Well, from the beginning, she was a smart and an exceptional student, even though she had to share the studying table and the candlelight with her four older siblings. She loved to learn more than to study, and I know this because even till the last days of her life, before her illness, she kept reading, learning and seeking to know more.

When she was in middle school, she realized that her sight is deteriorating. Therefore, she asked her mom to take her to a doctor. Well, the first doctor that they went to, actually scolded my great grandma, and told her that instead of buying eyeglasses for her daughter, she should buy her some clothes, make her pretty, and find her a husband before anyone finds out about her weak eyesight. It turned out that at that time in Aleppo, it was an embarrassment for a girl to wear eyeglasses. The next day, my grandma went to Dr. Jebjian, the famous eye surgeon, and asked him if he would check her eyes and write her a prescription, because she needed to wear eyeglasses at school. He didn’t even hesitate to help her. You would think that she would’ve had second thoughts about the whole eyeglasses issue, but no. She was a strong individual who was way ahead of her

time, and wasn't afraid to step outside of the accepted boundaries.

After finishing the 9th grade examinations with excellent grades, she wanted to go to the university with her brother, who was couple of years older than her. So my great grandma took both of her kids and went to Beirut, Lebanon, rented out a small apartment, and registered them both in a medical school. Apparently, the 9th grade certification was enough to get someone into college back then. She started attending the midwifery school and her brother the medical school. Some of the family elders were not happy with the fact of their niece attending college, but again, my grandma's will to learn more, didn't stop her. She became one of the very few girls who actually got higher education, at that time.

After her graduation, she came back to Aleppo, and couple of years later she got married, which is a whole different story that I may or may not tell, but I will tell you this, my grandfather was 23 years her senior, TWENTY THREE!!! Well, as you have probably guessed, maybe it was the only time that she couldn't have defied the family elders. Still, she was such a positive person, that she made it work, and my grandparents were actually happy.

She started working at the Guilbengian maternity hospital as a chief midwife, after she was married. She stayed in her full-time job for 52 years. It puzzles me till today, especially now that I am a working mom as well; I keep wondering how she had ever done it??? Back then, when there were none of the facilities of today's world, she was taking care of her daughter, her husband, her BLIND mother in-law, and she was doing every kind of domestic work, even things that you couldn't expect (like making *haytaliye* FROM SCRATCH!!!), while having an unbelievably demanding job, and doing it exceptionally. How was she pulling it off????!!! I have the answer... A WOMAN OF STEEL ...

But I know another secret too; about her strength... she just loved her job. She had so much passion for her career, which was her calling. She enjoyed the fact that she could help little miracles come to this world, and I bet that was one of the sources which fed her strength.

The Gulbengian maternity hospital was the only one that had a

delivery section for a very long time. She became familiar with everyone in the city, Armenians, Arabs, and Kurds. From the time that I was a little girl and whenever I went out with her, someone always stopped her to chat or to say “thank you”. Sometimes, there would be more than one, and even when she didn’t recognize the person, she never expressed it, not to seem rude.

As I explained before, she was a pioneer. She was one of the first people who owned a car, a Peugeot 403 and one of the first LADIES who drove in the city. She was never afraid to try new things, to go to new places and to learn new things.

She enjoyed reading a lot, and she kept doing it till her sight no longer allowed her. She was a master in Armenian traditional needlework, specially Marashi kordz and she has made such beautiful art pieces of tapestry and hand work.

Even in her retirement, she was such a strong-will lady. She was the one who delivered my brother and me. After our birth, she played such an active role in raising us. Her influence on both of us is so great, and I feel such a lucky person to have had an individual like her help in shaping me, to become the person I am today.

If I start telling all the stories about how she has helped many people, the stories of the unbelievable events that have occurred in her life, I would probably end up writing a book.

Many of Aleppo’s Armenian community members knew her, and I believe that most of them saw her as a woman of steel too, but I wanted to share my point of view... my thoughts and feelings regarding my idol... a pioneer in so many different ways... a personality with a distinct character... a lady of real strength... a woman of steel.

I am so grateful that I have descended from a line of strong women and I know that the “woman of steel” feature didn’t end at my grandmother. It also went on to my mom, and now I am waiting and trying to prove that I am worthy of that feature as well... that I will be able to pass it on to my daughter.

Arousiag Kazandjian... The Woman of Steel... may your soul rest in peace.

February 1, 2014

ԿԱՍԻԱՆ

Կասիան մեծ մօրաքրոջս՝ Ազնիւին փոքր աղջիկն է, Սոնիկէն եւ Օհանէն ետք:

Բայց զարմուհիներուս մէջ - որոնք քիչ չէին՝ քսաներեք զարմիկ-զարմուհիներ ունեցեր եմ - Կասիան կը տարբերէր, թերեւս անոր համար, որ տարիքով ամենէն մօտն էր ինծի. մեր միջեւ հազիւ տասը տարի կար միայն. մինչ ինք մեծ մօրաքրոջս փոքր աղջիկն էր, ես իր ամենէն փոքր մօրաքրոջ միակ աղջիկն էի, ծնողքիս ամուսնութենէն եօթը տարի ետք ծնած. ահա թէ ինչո՞ւ ինք տարիքով ամենէն մօտն էր ինծի:

Կասիան տարբեր էր նաեւ անոր համար, որ խառնուածքով ամենէն ուրախն էր - այդ առումով մօրս շատ կը նմանէր - եւ իր այտերուն փոսիկները մի՛ շտ խորունկ էին:

Զարմիկ-զարմուհիներուս մէջ Կասիան միակն էր, որ լուրջի կ'առնէր ըսածներս, որքան ալ խելացի բաներ չըլլային անոնք, ի վերջոյ 6-7 տարեկան մանուկ մը ի՞նչ խելացի բան կրնայ ըսել, հարցումներէն զատ: Եւ հարցումներս շատ էին, իրապէ՛ս շատ էին, այնքա՛ն բան կար, որ չէի հասկնար, եւ շուրջս մէկը չկար որ պատասխանէր:

Կասիան կար: Այնքան ատեն որ Հալէպ էր, Կասիան կար եւ համբերանքով կը պատասխանէր բոլոր հարցումներուս, մանաւանդ այն օրերուն, երբ սկսաւ Կիւլպէնկեան Մայրանոց գալ մօրս հետ կանոնաւոր կերպով: Չէի հասկնար թէ ինչո՞ւ կու գար: Այդքա՛ն հետաքրքրական տեղ էր մայրանոցը:

-Երէկ լա՞ւ էր sortie-դ,- կը հարցնէ մայրս դադարի պահու մը:

-Եղեր իր տարեդարձն էր եւ զիս Սօկամպօ տարաւ,- կ'ըսէ Կասիան յայտնի դժգոհութեամբ,- արդէն ամէն անգամ, որ տղայ մը աղջկայ մը հրաւիրէ, տարեդարձը կ'ըլլայ,- շարունակեց հեզնանքով:

-Կասիան ինչո՞ւ մայրանոց կու գայ,- հարցուցի օր մը շատ վախով եւ շատ ցած ձայնով, յուսալով որ մամաս չի լսեր:

Բայց լսեց եւ, զարմանալի, պատասխանեց.

-Որովհետեւ կ'ուզէ Անգլիա երթալ եւ դայեակութիւն ուսանիլ. թերեւս յետոյ ալ գայ եւ հոս աշխատի:

Շատ զարմացեր էի:

Ուսումէն չվերադարձաւ Կասիան, Անգլիա մնաց. բայց տակաւին Հալէպ էր, սպասելով ճամբորդական թուղթերուն ամբողջացումին:

Տարեդարձներէս մէկուն որոշեր էի խնդրել «Մանուկներու Բեմը» գիրքը, գոր կը յիշեմ մանկութեանս դպրոցին, Հալէպի Կիւլպէնկեան Ազգային վարժարանի մանկապարտէզէն, որուն մանկապարտիզականուհին – որուն անունը, ցաւ ի սիրտ մոռցած եմ, բայց երբէ՞ք չեմ մոռնար իր շքեղ արտաքինը սեւ սաթ մագերը, մեծ օղակաձեւ ականջօղերը եւ իր վարակիչ խանդավառութիւնը – մի շտ այդ գիրքը կ'օգտագործէր մեզի նոր ոտանաւորներ, երգեր եւ զաւեշտներ սորվեցնելու համար: Նոյնիսկ նոր խաղեր կ'այլին այդ գիրքին մէջ, որ այդ օրերուն աչքիս շատ մեծ եւ շատ հաստ կ'երեւար:

Մայրս գործով այնքան տարուեր էր, որ Կասիայէն խնդրեց ինձի համար այդ գիրքը գնել: Զարմուհիս շատ զարմացած, բռնեց ձեռքէս եւ գրախանութ տարաւ.

-Ըսէ՛ նայիմ ի՞նչ գիրք է ուզածդ:

Եւ երբ ցոյց տուի «Մանուկներու Բեմը» իրեն, իր զարմանքը կրկնապատկուեցաւ.

-Ա՛յս գիրքը կ'ուզես:

Թէ՛ ինք, թէ՛ գրախանութին տէրը – արդեօ՞ք Կիւլպէտր Տէմիրճեանն էր – այնպէս նայեցան, կարծես ըսել ուզէին այս աղջնակը ինձ նո՞ր է թէ...

Կասիան համոզուած չէր թէեւ տարեդարձիս այս նուէրով, բայց գնեց: Կարծես ասիկա միակ անգամն էր, որ ուզածս ունեցայ, հակառակ անոր որ «յարմար» չէր...

Մինչեւ հիմա ունիմ այդ սիրելի գիրքը, թէեւ Հալէպի մնացեալ գիրքերուս հետ ա՛ն ալ հոն մնաց:

Այնքան փոքր էի, որ ոչ իսկ նայեցայ թէ ո՛վ էր անոր հեղինակը. նոյնիսկ չեմ յիշեր թէ տիկի՞ն մըն էր հեղինակը եւ կ'ափսոսամ որ հիմա ձեռքիս տակ չէ այդ գիրքը:

Տասնեակ մը տարիներ ետք էր միայն, որ Աղաթօն գրադարանի գիրքերուն մէջ (ՀԲԸՄ Եգիպտոս) գտայ այդ գիրքը եւ տեսայ թէ անոր հեղինակը տիկիին մըն է՝ Զապէլ Զաքարեան, վկայեալ մանկավարժ:

«Երբ մանկավարժական ուսումնասիրություններ կատարելու համար, 1914 թուականին Ջուիցերիա կը գտնուէի, բախտաւորութիւնը ունեցայ ներկայ գտնուելու գծագրութեան նոր մէթոտը մանկապարտեզի մէջ տարածելու համար կազմակերպուած դասախօսութիւններուն»:

Նոյն այս ներածութենէն կ'իմանանք, որ 1924-1925 դպրոցական տարեշրջանին տիկ. Զաքարեան վարիչ մանկապարտիզպանուհիի պաշտօն ստանձնած է Գահիրէի (Եգիպտոս) Գալուստեան Ազգային Մանկապարտեզէն ներս: Շատ հաւանաբար իր փորձառութիւնն ու բնածին տաղանդը դեր ունեցած են պատրաստելու համար այս գիրքը, որ իր սկզբնական շրջանին փոքր պրակներով հրատարկուեր է:

Կասիային այդ զարմացած նայուածքը վերջնականօրէն կ'ապուած մնաց «Մանուկներու Բեմը»ին:

Երբ Հայկազեան վարժարանը աւարտեց, Կասիան Հալէպի ամերիկեան Aleppo College-ը գնաց երկրորդական ուսումը շարունակելու: Հոն եւս, անգլերէնի ուսուցիչը զինք «ապագայի գրագիտուհին» կը կոչէր, անգլերէն գրած իր շատ գեղեցիկ շարադրութիւններուն համար: Կը պատկերացնեմ, թէ ինչպէ՛ս *հիւմըր*ով համեմած պիտի ըլլայ իր գրութիւնները, որոնց բառերուն մէջէն իր ժպիտը լայնօրէն կ'երեւար հաւանաբար:

Կասիան չամուսնացաւ: Մայրս կ'ըսէր՝ «Կասիան Նէպիլին կը սիրէր, բայց Նէպիլը Միմիին կը սիրէր, անոր հետ ամուսնացաւ»: Կասիան չամուսնացաւ, հակառակ որ հոյակապ կին եւ սքանչելի մայր կրնար ըլլալ: Ինչո՞ւ չամուսնացաւ: Իր առաջին եւ մեծ սիրո յն գոհուեցաւ:

Իր մասին Վարդի Դանիէլեան յուշ մը պատմեր էր դիմատետրի իր էջին վրայ, որ մեծ ուրախութիւն պատճառեց ինձի, որովհետեւ հոն գտայ Կասիային ա յն երեսակը, որ անձանօթ էր ինձի:

«Թերթանուշը պատմութիւն ունի: Հալէպի Հայկազեան վարժարանի 6-րդ կարգի շարադրութեան պահն է: Աշակերտը բարձրաձայն, դասարանին առջեւ կը կարդայ գրածը, եւ Աստուած գիտէ, թէ գլխուն ինչ պիտի պայթի: Կասիա Բալուլեանն է, մեր դասարանին ապագայ «գրող»ը, որ կաս կարմիր կտրած կ'անցնի պատին առջեւ գրածը կարդալու,

որքան որ կը յիշեմ, կադանդի առթիւ նկարագրութիւն մըն էր, որուն մէջ Կասիան «թերթանուշ» բառը գործածէր էր:

-Կեցի ր,- ըսաւ պարոն Մկրտիչեանը. զինք ճանչցողները պէտք է յիշեն իր դէմքը, երբ քթին տակէն քիչ մը ծիծաղով, քիչ մը փաղաքշական շեշտով, դէպի վեր ու վար ընող յօնքերուն ու դէպի ձախ ծռած գլխու շարժումով դիտողութիւն կ'ընէր,- «թերթանուշը համո՛վ էր»,- հարցուց:

-Միսա՛լ է, պարո՛ն, մամաս ըսաւ որ...,- Կասիան շուարած սկսաւ պատասխանել. մնացեալը չլսեցինք:

Մենք լուռ կը սպասենք, որ ահա ուր որ է մեր «գրող» յորջորջուած Կասիային գլխուն պիտի պայթի իր ըրած «գիտը»՝ թերթանուշը: Հոս փակագիծ մը բանամ, որ յստակ դառնայ թէ ինչո՞ւ այդքան ուշադրութեան կ'արժանանար Կասիան, որ այնքան «ինքզինքը կը տեսնէ ր» Պարոնին կողմէ իրեն տրուած «մեր ապագայ գրողը»-ի նշումով, որ արդէն մեր մէջ կը վայելէր իսկական գրողի համբաւ: Ինքն ու ես այնքան միամտօրէն ու դէռ այնքա՛ն մանուկ ու անգիտակ կը վիճէինք իրարու հետ, թէ ո՞րն է աւելի լաւ, բանաստե՛ղծ ըլլալը թէ գրող ըլլալը, որովհետեւ Պարոնը օր մը ինծի ալ ըսած էր՝ «դուն բանաստեղծի զգացողութիւն ունիս»:

-Թերթանո՛ւշ... եւ նոյն հա՛մը ունէր...

Կասիան սկսաւ դողալ, աչքերը լեցուեցան, քիթը սկսաւ վազել, պարոնը տեսաւ, իր թաշկինակը երկարեց. «ունիմ պարոն» ըսաւ Կասիան, աղմուկով քիթը մաքրեց, մենք իր արցունքները կը դիտէինք շուարած, իսկ ինք «ես ա՛լ գրող չեմ»ի նայուածքը յառած էր գետին, երբ Պարոնը շարունակեց.

-Է՛հ, շատ լաւ նկարագրած ես թէ մթնոլորտը, թէ սեղանը, բայց սա թերթանուշիդ համը չեմ առներ, սրւոր *փախլաւա* չըսէ ս, *փախլաւան* հայկական անուշեղէն չէ, արաբական է, եւ երբ թերթանուշ կ'ըսես, գրութիւնդ իր գոյնը կը կորսնցնէ...

Կասիան անցաւ իր տեղը: Յաջորդ դասին, Պարոնը մեզի կարդաց Յակոբ Օշականէն կտոր մը, տեղական գոյն ու բոյրի կարեւորութիւնը բացատրելու համար: Երուսաղէմէն եկած ուսուցիչ էր, եւ այնքա՛ն բան ունէր տալիք, որ յաջորդ տարին զինք կարգեցին Ճեմարանի բարձրագոյն կարգերու հայերէնի ուսուցիչ, եւ ան ալ ի՛նչ ուսուցիչ: Բոլորս մեծ երախտագիտու-

Թեամբ կը յիշենք զինք, մեր անկրկնելի պարոն Մկրտիչեանը»:

Հայկազեանը ասարտելէ ետք Կասիան Հալէպի ամերիկեան Aleppo College գնաց. հոն եւս նուաճեր էր «ապագայի գրագիտուհին» կոչումը, իր անգլերէնով գրուած շատ լաւ շարադրութիւններուն համար: Կը պատկերացնէ մ, թէ ինչպիսի ժպիտ եւ ինչպիսի նուրբ հիւմըր թաքնուած էին իր բառերուն տակ...»:

Կասիան «ապագայ գրող»-ը, գրագիտուհի»-ն, բայց ինչո՞ւ եւ ոչ մէկ բան գիտեմ իր ա՛յս յատկութեան մասին, ինչո՞ւ մայրս կամ մօրաքոյրս՝ Կասիային մայրը չեն խօսած այդ մասին, չեմ հասկնար:

Տակաւին Կասիան՝ «ապագայ գրող»ը ինչո՞ւ դադարէր է գրելէ, ո՞վ կտրէր է սաւառնելու իր թեւերը. կրնա՞յ ըլլալ իր անպատասխան սէրը պատճառ դարձեր է ո՛չ միայն բնաւ չամուսնանալու իր որոշումին, այլ նաեւ ձեռք քաշելու ամէն բանէ, որ հոգի-սիրտ ըսուածին հետ կապ ունի. որովհետեւ ի՞նչ գրել, երբ հոգի-սիրտ չունիս հոն դնելիք...

Կասիա՛ն... տարիներէ ի վեր չեմ տեսած զինք, բայց պահեր եմ այն վերջին քարտը, որ տարեդարձիս առիթով դրկեր էր Անգլիայէն իրեն պէս ժպտուն, հմայիչ ու գեղեցիկ, մազերը հովին տուած աղջկայ մը գեղանկարը: Միտքիս մէջ այդ նկարն ու Կասիան միացան, դաջուեցան մէջս տեղ մը, եւ մինչեւ այսօր կարօտի ու սիրոյ ալիքներով կ'օրօրեն մանկութեանս յուշերը:

ՇՈՒԿԱՅԻ ԲԱՂՆԻՔ

-Ես չեմ գացած, բայց եթե կ'ուզեք, զինք տարեք,- ըսած էր մայրս Կիւլպէնկեան Մայրանոցի նըրսերուն, որոնք որոշէր էին իրենց գործէն ետք բաղնիք երթալ:

-Դո՛ւն ալ եկուր, տիկի՛ն Արուսեակ:

-Ես... կը գանիմ:

-Հապա աղջիկդ ինչպէ՞ս կը դրկես:

-Թող երթայ տեսնէ եւ գիտնայ թէ ի՛նչ է շուկայի բաղնիքը:

Կը կարծէի թէ որոշ գաղափար մը ունիմ շուկայի բաղնիքին մասին, որովհետեւ երբեմն «վերի» բաղնիքը կ'ելլէինք եւ հոն կը լոզնայինք:

«Վեր»-ը Մայրանոցին տանիքն էր, ուր կը գտնուէր լուացքի մե՛ծ սենեակը եւ անոր կողքին բաւական փոքրիկ բաղնիք մը, որուն վառարանը երբ վառուէր, բաղնիքը շատ-շատ տաք կ'ըլլար, շատ աւելի, քան մեր տունին բաղնիքը:

Տակաւին՝ Մարոշիկը, որ Մայրանոցին օգնական խոհարարուհին էր եւ շատ կապուած մօրս - ինչպէս էին Մայրանոցի բոլոր աշխատողները, որոնց պաշտպան փաստաբանն էր մայրս եւ թերափիստը - քառորդ ժամ ետք կու գար, կամացուկ մը բաղնիքին դուռը կը թակէր եւ ներս կ'երկարէր պաղ թանով լեցուն սափոր մը եւ ստկուած ու ջարդուած նարինջ մը:

Ի՛նչ հաճելի էին պաղ թանն ու նարինջին բուրմունքը:

Կը կարծէի թէ նման բան մը պիտի ըլլար շուկայի բաղնիքը, հաւանաբար քիչ մը աւելի մեծ, ապա թէ ոչ ինչպէ՞ս պիտի բաւէինք հինգս չորս նըրսերը եւ ես:

Այդ առաջին երթալուս մանրամասնութիւնները չեմ յիշէր, բայց տպաւորութիւնս դրական էր՝ հաճելի տեղ մըն էր սա շուկայի բաղնիք ըսուածը, մայրս ինչո՞ւ չէր սիրէր, չէի հասկցած:

Հայրս ալ շատ կը սիրէր բաղնիք երթալ. իր գացածը փակ շուկային պղնձագործներու թաղին մէջ գտնուող բաղնիքն էր - սու՛ր ըլ Նահիասին - որ գետնափոր տեղ մըն էր, դէպի վար գացող երկա՛ր աստիճաններով, եւ որ, ըստ հօրս պատմածին,

շատ գեղեցիկ էր եւ մաքուր:

Հալէպը քանի մը բաղնիքներ ուներ, որոնք բոլորն ալ առաւօտեան ժամերը կիներուն յատկացուցեր էին, իսկ այրերը իրիկունը կ'երթային. շատեր նոյնիսկ կրնային հոն գիշերել. բայց ոչ Նահիասինի բաղնիքը, ուր կիներուն մուտքը բացարձակապէս արգիլուած էր:

Աւելի ուշ, երբ Հալէպի երկու բաղնիքները նորոգուեցան՝ Եալպուղան եւ Կարմիր Դուռը - Պապ ալ-Ահմար - հայ կիները սկսան երթալ: Առաջին անգամուան համար, որքան կը յիշեմ, միութիւն մը որպէս ձեռնարկ-պտոյտ կազմակերպեր էր բաղնիքագնացութիւնը: Յետոյ գացողները սկսան իրենց ազգական-բարեկամ-ընկերուհիները տանիլ...

Շատ կը սիրէի Կարմիր Դուռը, որովհետեւ աւելի փոքր էր քան Եալպուղան եւ աւելի ժողովրդային, մինչ Եալպուղան արդէն յստակօրէն զբօսաշրջիկներուն համար պատրաստուած էր: Իսկապէս ալ, ամէն անգամ որ հոն երթայինք, անպայման կը հանդիպէինք ճափոնցի, չինացի, մանաւանդ իտալացի կամ ռուս կիներու, որոնց դէմքը երջանկութիւն կը ճառագայթէր...

Որքան ազդած են արեւելեան այդ բաղնիքները մեր գրագետներուն վրայ, որոնք տողեր եւ էջեր նուիրեր են նկարագրելու անոնց ներքին խորշերը - երբ մանուկ, իրենց մայրերուն ընկերացեր են - բայց մանաւանդ խօսելու այդ բաղնիքներուն մթնոլորտին եւ խորհրդաւորութեան մասին:

Լեւոն Զաւէն Միրսէլեանի I Ask You Ladies and Gentlemen գիրքին բաղնիքին նուիրուած գլուխը կարդալու է: Առաջին անգամ երբ կարդացի, թուեցաւ թէ մեր Հալէպի բաղնիքներէն մէկն էր նկարագրածը, այնքան յստակօրէն նման էր Պոլսոյ իր նկարագրած բաղնիքը մերինին:

Իսկ Վարուժանի «Արեւելեան Բաղանիք»-ը, ո՛ր... ուրիշ հաճոյք է, երբ կը մտաբերես քերթուածին տողերը, բաղնիքին տաք յատակին պառկած, ոտքերդ գուռէն վազող տաք ջուրին յանձնած եւ նայուածքդ վեր՝ ինկող կաթիլներուն, գմբէթներուն գնդաձեւ ապակիներուն...

«Յանկարծակի կը սարսռան՝ երբ գմբէթէն կը կաթի Ցուրտ ցօղ մ'իրենց ծոծրակին հեշտագրգիռ փոսին մէջ»

Եւ ճիշդ ճամբորդութեան սկսելու նման, երբ կը նստիս

ինքնաշարժը, պասը կամ օդանաւը, կը զգաս որ առօրեադ իր տաղտուկներով եւ հոգերով կը քակուի վրայէդ շերտ առ շերտ եւ կը մնաս թեթեւ, հանգիստ, նոր արկածախնդրութեան մը պատրաստ, ճիշդ նոյն ձեւով ալ երբ դէպի բաղնիք ճամբայ կ'ելլես, արդէն կը զգաս այդ թեթեւութիւնը, որովհետեւ տաք ջուրին յանձնուած ոչ միայն մարմնիդ կեղտերը շերտ առ շերտ կը թափին, այլ հոգիդ կը թեթեւնայ պահ մը հանգստացած, կը քակուի իր բազմաթիւ կնճիռներէն եւ կը դառնայ նոր ու փայլուն, պատրաստ նոր օրուան մը մարտահրաւերներուն: Հոգիի ճամբորդութեան տարբերակ մըն է արեւելեան բաղնիք երթալն ու այդ փորձառութեան լիովին յանձնուիլը...

Բայց նախ կեցէք ներս մտնենք:

Լայն ու բարձր դարպասին առջեւ նստած է թխադէմ ու խոժոռ կին մը, որ խստօրէն կը գննէ մտնողները, մանաւանդ՝ փոքրիկները՝ մանչեր եւ աղջիկներ, որոնք կը կախուին իրենց մայրերուն փէշերէն. խուզարկու աչքերով կը չափէ մանչերը ու երբեմն կ'արգիլէ անոնց մուտքը ոչ թէ հասակին համեմատ, ինչպէս շատեր կը կարծեն, այլ... նայուածքին, ուր արթնութիւնը կը կայծկոտի:

Այն ատեն կը սկսի պոռչտուքով համեմուած սակարկութիւն մը. բայց պահակ կինը անկոտորում կը մնայ, որովհետեւ նուազագոյն սխալով ինք կրնայ գործը կորսնցնել:

Ի վերջոյ մենք, որ կեցած կը սպասենք իրենց, կը մտնենք երբ պահակ կինը կը բարկանայ.

-Ասդի ն կեցիր, սա տիկիներուն տէ՛ղ տուր:

Մեզի տիկին կ'ըսէ, մինչ միւս կինը՝ իր նման լաչակաւոր, իր նման քաղաքին «ներսի թաղերէն», ինչպէս մենք կ'ըսենք, միայն կին է, նոյնիսկ կնիկ իրեն համար:

Կը մտնենք եւ մեծ դարպասը կը փակուի մեր ետեւէն:

Կանուխ է. գրեթէ մարդ չկայ. Հալէպի նշանաւոր դեղին քարը կը պսպղայ, մինչ մենք խորունկ կը շնչենք դարբնի հոտը, Հալէպի նշանաւոր դար օճառէն բուրոդ, որ լեցուեր է բաղնիքին «դուրսի» սրահը, հոն ուր քանի մը աստիճաններէն վար մեծ սրահն է, մէջտեղը անխուսափելի արաբական շատրուանաւազանը, իսկ պատերուն տակ՝ թախթերը, ուր կը դնենք մեր ծանր պայուսակները եւ կը սկսինք հանուիլ:

Մարդ չկայ տակաւին. ըլլար իսկ, ոչ ոք կը դիտէ միւսները, բոլորն ալ կ'աճապարեն ներս, բաղնիքին ներսի սրահը նետուիլ, հոն ուր տաքն է, ջուրը, շոգին եւ... անոնցմէ ծնած հաճոյքը:

Ներսի սրահը աւելի փոքր է, ճիշդ մեջտեղը՝ սեւ կամ տաք քարը, որուն տակ է բաղնիքին մեծ հնոցը եւ ուր կը փռուին կիները քեսէյվելու համար, քեսէճիին խիղճին յանձնուած. եթէ պատահի, որ գանգատիս իր բրտութենէն, անմիջապէս աչքդ կը խոթէ «ֆիթիլները».

-Կը տեսնէ՞ս կոր, մատա՛մ, աս ֆիթիլները, աս ամմէնը քեզմէ կ'ելլայ կոր, ասանկ չընեմ նէ աղտոտ կը մնաս աղտոտ տ... հապա...

Ճարահատ կը լռես եւ միտքէդ կ'աղօթես որ այս տառապանքը վերջ ունենայ, միաժամանակ ինքզինքդ այպանելով՝ կարեւոր էր քեսէյվիլդ...

Չորս կողմը փոքր սենեակներ են, ուր բազմանդամ ընտանիքները կը հաւաքուին իրենց ուտելիքներու կապոցներով, թմբուկներով, դափերով, անհատնում ծիծաղով եւ փոքրերուն ճիչերով. երբեմն այնքան մեծ կ'ըլլայ իրենց խրախճանքին աղմուկը, որ կողքի սենեակներէն շատեր կը շտապեն տեսնելու թէ ի՞նչ կայ.

-Հարսնցո՞ւ բերեր են,- կը հարցնեն իրարու եւ մերկ մարմիններով կը հրմշտկեն զիրար, հարսնցուն տեսնելու:

Ինչպէս ծովուն առջեւ, այստեղ ալ մարդիկ գրեթէ հաւասար են, ջուրի հոսքին տակ ջնջուած են կարծես ընկերային բոլոր դասակարգերը, եւ կիները իրենց բարձր տրամադրութեան մեջ կը դառնան իրարու բարեկամ, զրոյցը կը հոսի օտարներու միջեւ, յաճախ տեղացի կիները օտար զբօսաշրջիկներուն - իրենց գիտցած մէկ-երկու բառ անգլերէնով - հարցումներ կ'ուղղեն, կ'ուզեն հասկնալ թէ ինչպէ՞ս է կեանքը հոն, անոնց քաղաքին մեջ, եւ թէ արդեօք հաւնեցա՞ն մեր Հալէպը...

Օտար զբօսաշրջիկները բոլորն ալ հաւնած կ'ըլլային մեր Հալէպը այնքան, որ իրենց բարեկամներուն հետ կրկին կ'այցելէին:

Պատերազմի ընթացքին երեք բաղնիքներն ալ աւերակի վերածուեցան: Այսօր չեմ գիտեր թէ նորոգուեցա՞ն անոնք,

որովհետև ո՞վ պիտի մտածէ հաճոյքի մասին - իսկ
բաղնեզնացութիւնը արդէն հաճոյք դարձեր էր - երբ առօրեան
իր հոգերով կը ստիպէ մարդոց այլ կողմ նայիլ:

Օր մը թերեւս կրկին իրենց դարպասները բանան Հալեպի
բաղնիքները, իսկ կացութիւնը այնքան ապահով եւ բարօր ըլլայ,
որ մարդիկ վերագտնեն իրենց կորսուած հաճոյքները:

ՆՈՒԱՐԴ

-Նուա՛րդ, քեզ պիտի ամուսնացնեմ:

-Չէ, Ամսօ, չէ, ոտքիդ *փապուճ* կ'ըլլամ, հետդ կ'ամուսնանամ, զիս այս տունէն դուրս մի՛ ընէր:

Նուարդին խօսքերը կը կորսուէին արցունքներուն տակ, եւ Ամսօ Արմէնը կը լռէր:

Նուարդը, տասնմէկ տարեկան որբուհի էր երբ եկեր էր Արմէն Թօփճեանին տունը, աչազուրկ մարդուն օգնելու, եւ հիմա, արդէն քսան-քսանմէկ տարեկան, դարձեր էր տան վերակացուն, թէեւ ամէն բան որոշողը Արմէնն էր, հիմա եօթանասունի դռներուն:

Կեանքը ապրեր էր գէշ-աղէկ, պայթումը մոռցած, բայց իր վիճակը անձեռք եւ անաչք, չէր կրնար մոռնալ:

Նաեւ չէր կրնար անգործ նստիլ: Սկիզբը Թօփճեան կարած կ'երթար որպէս հսկիչ, իր շատ զօրաւոր լսողութեան վստահած:

Յետոյ Գրիգոր եղբայրը Ֆրանսայէն վառարան մը բերաւ եւ անոր ձեռով սկսան վառարաններ շինել կարածին մէկ կողմը, նորոգուող ինքնաշարժներէն եւ գիւղերը գացող-եկող թաքսիներէն հեռու:

Արմէնին երկու թեւերը կը կապէին ճախարակին, զոր չորս կամ հինգ անգամ կը դարձնէր, «տիրսէկ»ներ շինելու համար:

Օրապահիկը կը շահէր: Երբ տարիներ ետք եղբայրները մեռան եւ կարած Թօփճեանը ծախուեցաւ, իրեն ինկած բաժինը ապահովեր էր իր ծերութիւնը:

-Ամսօ, սուրճը:

Արմէնը երկարեց դաստակը, եւ Նուարդը սուրճին պնակն ու գաւաթը տեղաւորեց ձեռքին ամրացուած օղակին մէջ: Ամսօն վարժ շարժումով երկու ձեռքերը տարաւ շրթունքներուն, «ֆը բթ» շառաչով պուտ մը խմեց ու մտածեց.

-Մա աղջիկը ինչո՞ւ չ'ուզեր ամուսնանալ. զիս կ'առնէ եղեր. պարապ բան. ոչ թէ հօրը, մեծ հօրը տարիքը ունիմ: Չէ, բան մը եղած ըլլալու է: Երբ Արուսը գայ, չմոռնամ ըսեմ թող խօսի Նուարդին հետ, նայինք ի՞նչ է այս չեմ-չեմին պատմութիւնը:

Հարցը այն էր, որ Նուարդը քսանմէկ տարեկան եղեր էր եւ

մինչև անցեալ շաբաթ իրմով հետաքրքրուող չէր եղեր:

«Այդ երիտասարդը փախցնելու չէ», մտածեց Արմէնը մտահոգութեամբ:

-Ուրիշ բան կ'ուզե՞ս, Ամնո:

-Ո՛չ,- Արմէնին ձայնը սովորականէն աւելի խիստ հնչեց:

-Երթամ լուացքը փռեմ ուրեմն:

-Նուարդ, կեցի՛ր, ի՞նչ էր այդ երիտասարդին անունը:

-Ո՞ր երիտասարդին,- Նուարդը կարմրեցաւ:

-Այն որ քեզ կ'ուզէ:

-Չեմ գիտեր, Ամնո, ինք կ'ուզէ, ես չեմ ուզեր, ոտքդ պագնեմ, քովդ պահէ՛ զիս,- Նուարդը սկսաւ լալ:

-Անո՛ւնը:

-Եղիա Քէպպապճեան,- Նուարդը լեղապատառ ներս, խոհանոց գնաց եւ ա՛լ մօտ չեկաւ Արմէնին:

Այդ գիշեր երկուքն ալ անօթի քնացան եւ առաւօտուն նոյն մտահոգութեամբ արթնցան:

Արմէնը լուր դրկեց Արուսին:

-Շուտ շուտ Ամնո Արմէնին պիտի երթաս, ըսելիք ունի եղեր:

Արուսը ձգեց տան գործերը եւ վազեց:

-Ի՛նչ է արդեօք ըսելիքը:

Ամբողջ ճամբան միտքը աշխատցուց, չկրցաւ գիտնալ թէ Ամնո Արմէնը ի՞նչ խօսելիք կրնայ ունենալ իր հետ: Երկու մեծ քոյրերն ալ Հալէպ կ'ապրին, անոնց ինչո՞ւ չ'ըսեր ըսելիքը, կամ եղբորը, որ անշուշտ իրմէ աւելի խելացի է, փորձառու:

-Խէ՛ր է, Ամնո:

-Նստի՛ր: Նուա՛րդ, սո՛ւրճ:

Նուարդը սուրճը բերաւ եւ կարմրած աչքերով նայեցաւ Արուսին: Գոնէ առիթ ունենար նախ ինք խօսելու: Նուարդը վստահ էր, որ Արուսին գալը իր հետ կապուած է:

-Ի՞նչ ունիս, Նուարդ, կրի՛ փ ես թէ լացեր ես:

-Չէ,- ըսաւ Նուարդը, յետոյ աչքով-ունքով բան մը հասկցնել ուզեց Արուսին, ու երբ տեսաւ, որ այս վերջինը չի հասկնար ըսածը, գլուխը կախ ետ խոհանոց քաշուեցաւ:

-Ամնո ...

-Մտիկ ըրէ՛ ինձի: Նուարդին ուզող այդ երիտասարդին ի՞նչ պիտի ըսենք: Նուարդը ոտքը կոխեր է՝ չեմ ուզեր կ'ըսէ: Ինչո՞ւ:

Ինչո՞ւ չ'ուզեր: Սկսայ կասկածիլ որ բան մը կայ: Դուն կին ես, կրնաս իր հետ խօսիլ: Հարցուփորձ ըրէ՛, հասկցիր ի՞նչ է պատմութիւնը:

Ուրեմն այս էր եղածը: Արուսը հանգստացած շունչ քաշեց: Բայց եւ նեղուեցաւ՝ ինչո՞ւ Ազնիւին չ'ըսեր, չէ՞ որ Ազնիւը քաղցր լեզու ունի...

-Լաւ, Ամմօ, կը խօսիմ, կը նայիմ:

-Երկու օրէն պատասխան պիտի տանք:

Պատասխանը տուին, Նուարդը պսակեցին Եղիային, առագաստի փախլաւան ալ կերան: Ամմօն միայն Արուսը կանչեր էր փախլաւա ուտելու:

Նուարդը շարունակեց Արմէն Թօփճեանին քով աշխատիլ:

Մանչուկը գրկած, տաք պաղ չէր ըսեր, կու գար, կ'աւեր, կը մաքրէր, լուացք կ'ընէր, ճաշերն ալ կ'եփէր ու ետ կը վազէր մինչեւ Ջէթուն Խանի իր համեստ տնակը:

Օր մըն ալ լալով եկաւ: Արուսը հոն էր:

-Ի՞նչ կայ, Նուարդ, ինչո՞ւ կու լաս:

-Հապա՛, աս չոճուխս ալ լայրի՞՞ չեն տեսներ ինծի... պասին մէջ, եկած ատենս երկու կիներ նստեր էին քովս, պիշ-պիշ նայեցան չոճուխիս, յետոյ ըսին՝ ո՞ւր կ'երթաս, ըսի՝ տունի մը մէջ կ'աշխատիմ, ուրեմն ասիկա տիկինիդ տղան է կ'երեւի ըսին, ասքան աղուոր, ճերմակ-փայլուն... իմ չոճուխս ինծի լայրի՞ս չտեսան...

Եւ կու լար վիրաւորուած:

Իրաւ ալ Նուարդին եւ Եղիային առաջին մանչը, Յակոբը, այնքան խարտեաշ եւ գեղեցիկ էր, որ...

Աստուած վարդ կ'ուզէ հոտոտալու համար, կ'ըսեն արարները:

Յակոբը երիտասարդ մեռաւ:

Եօթանասունի դռներուն Արմէն Թօփճեանը պսակուեցաւ Ալիս Քէօշկերեանին հետ եւ ունեցաւ մանչ մը:

Արմէնը եօթը զաւակներէն միակն էր, որ հօրը անունը տուեր էր զաւկին՝

Ֆիլիփ Թօփճեան, կրտսեր:

ՄԻՐՈՒՆ

Կիւլպէնկեան մայրանոցի պահակ պարոն Պետրոսը, տախտակեայ փոքրիկ տնակին մէջ կը մրափէր, լայն ու ճերմակ աստիճաններէն իր վրայ ցուացող արեւուն տակ, երբ փոքրիկ թփթփոց մը լսեց: Աչքերը կիսով բացաւ եւ անմիջապէս տեղէն թռաւ.

-Ո՞ւր կ'երթաս, ծո՛...

Պահակը չհասաւ գլխարկը գլուխը անցնել. եւ այդպէս բաց գլուխով վազեց մանչուկին ետեւէն, աստիճաններէն վեր:

Մինչ այդ մանչը ինքզինք ներս նետեր էր Մայրանոցի մեծ դռնէն ու կը պոռար.

-Միրունին տունը փլա՛ւ... շուտ շուտ թող գայ...

Միրունը, վարի յարկի մաքրութեան կինը, որ խոհանոցէն դուրս կ'ելլէր փոշիի լաթը ձեռքը, զարմացած նայեցաւ մանչուկին.

-Օօ Մագուլիկ, ի՞նչ կ'ընես հոս:

-Միրուն քոյրիկ... հա՛, փլաւ... ըսաւ որ շուտ շուտ գաս:

-Ի՛նչը փլաւ,- Միրուն չէր հասկնար տղուն տազնապար:

-Տունդ:

-Տո՞ւնս... ծօ տունս ինչպէ՞ս փլաւ:

-Վերի օտան⁷ վար ինկաւ:

-Ամա՛ն:

Միրունը գետին պիտի իյնար, եթէ խոհարարուհին, որ իրենց ձայները լսելով դուրս ելեր էր խոհանոցէն, չբռնէր զինք:

-Երթա՛ մ,- մանչուկը հարցուց խոհարարուհիին:

-Նախ շէն-շնոր ըսէ ըսելիքդ, յետոյ:

-Միրուն քոյրիկին տունը փլաւ, վերի օտան վար ինկաւ,- կրկնեց մանչը,- հիմա երթա՛ մ,- մանչուկը կ'աճապարէր ետ երթալու հոն, ուր այսքան արտասովոր դէպքեր կը պատահէին:

-Գնա՛:

Նըրսերը հաւաքուեր էին, վախ-վա՛խ կ'ընէին ու չէին գիտեր թէ ուրիշ ի՛նչ կրնան ընել:

-Նազելի՛, դուն Զէյթուն խան գնա՛, նայիր ճիշդ ի՞նչ է պատմութիւնը,- կարգադրեց տիկ. Արուսեակը, Կիւլպէնկեան

մայրանոցին գլխաւոր դայեակը, որ նաեւ տնօրէնուհիի պաշտօն ունէր,- դուն ալ, Աստղի կ, բռնէ՛ Սիրունին ձեռքը եւ սա դիմացի սենեակը, անկողնին վրայ դրէք զինք:

-Առաջի՞ն կարգի սենեակը,- շատ զարմացաւ նրբա Աստղիկը, որ ծանօթ էր դայեակին ժուժկալութեան:

Քառորդ ժամ ետք Նազելին վերադարձեր էր հաստատելով Սագուլիկին բերած լուրը՝ երկու օրուան անձրեւները խմորի վերածեր էին Սիրունին նոր պատել տուած վերի սենեակին պատերը, որոնք փլեր վար թափեր էին:

-Ի՞նչ եղաւ ինձի,- սթափեցաւ Սիրունը եւ տեսնելով քովը կանգնած դայեակը, ուզեց ինք ալ ոտքի ելլել: Բայց լսածին յուշը վերադարձաւ իրեն: Ետ ինկաւ անկողնին:

-Տունս... ամա ն...

-Սիրուն, վերի սենեակն է միայն, բայց թէլէվիզիոնդ կատուի հոգի ունի կ'երեւի, սեղանով միասին, չորս ոտքի վրայ վարի սենեակը իջեր տեղաւորուեր է: Փառք տուր որ աղջիկներդ դպրոց գացեր էին, մէկուն վնաս չէ հասեր:

-Ամա ն, աղջիկներս,- ըսաւ Սիրունը եւ յանկարծ սկսաւ լալ ու ծունկերը ծեծել:

-Նազելի, սուրճ մը հասցո՛ւր... Սիրո՛ւն, խելքի եկուր, աղջիկներդ ողջ-առողջ դպրոցն են:

-Դպրոցը չէ ն, տիկ. Արուսեակ, դպրոցը չեն,- շարունակեց ողբալ կինը:

-Սիրուն, այսօր երկուշաբթի է, աղջիկներդ դպրոց գացեր են:

-Չէ՛, տիկ. Արուսեակ, չէ, առտուն պիտ'սէի քեզի, ըսի գործերը ընեմ լմնցնեմ, յետոյ կ'ըսեմ. դպրոցէն ետ դրկեցին շաբաթ օր, եղեր թուղթ կ'ուզեն:

-Ի՞նչ թուղթ:

-Անձնաթուղթ:

-Չունի՞ն:

-Ուրկէ՞ ունենան. գիտե՛ս:

Գիտէր տիկ. Արուսեակը. երբ Սիրունը Մայրանոց դիմեր էր աշխատանք փնտռելով, Նազելին միջնորդեր էր եւ պատմեր Սիրունին ողբերգութիւնը:

Դուռ-դրացիներն էին, որ որբ Սիրունին ամուսնացուցեր էին որբ Սեդրակին հետ:

-Երիտասարդ, աշխատասեր տղայ է,- ըսեր էին,- քեզի տեր կ'ըլլայ:

Ճիշդ է որ Սեդրակը երիտասարդ ու աշխատասեր էր, բայց Սիրունն ալ Ձեյթուն խանի գեղեցկուհին էր՝ գեղուղեշ հասակ մը, երկար, նուրբ, միջնադարեան սրբանկարներուն մատոննաները յիշեցնող դեմքով: Սիրունը երկու աղջիկներուն ծնունդէն ետք ալ պահեր էր մարմնին ու դեմքին նրբութիւնը, ահա թէ ինչո՞ւ Սեդրակը երկու օրը անգամ մը կռիւ կը սարքէր անցնող-դարձող տղամարդոց, նոյնիսկ պատանիներուն հետ:

-Օօ շուշանորդի,- կը պոռար,- անդին նայի՛ր, ի՞նչ է աչքդ կնիկիս դրեր ես:

Եւ օր մըն ալ դանակը քաշեց խրեց փորը տղամարդուն, որ «կնիկ չտեսած-չունեցածի պէս» իր Սիրունին կը նայէր:

Ձարկաւ: Փախաւ:

Այդ փախչիլն էր:

Եւ Սիրունը կրկին որք մնաց, այս անգամ երկու մանր գաւակներով:

-Հիմա ո՞ւր են աղջիկներդ,- հարցուց դայեակը, բարձրացող տագնապը թաքցնել ջանալով:

-Չեմ գիտեր:

-Նազելի՛:

Նազելին կրկին Ձեյթուն խան վազեց ու վերադարձաւ երկու աղջիկներուն ձեռքէն բռնած:

-Մամա՛, Անուշիկս կոտրեցաւ- լացաւ պզտիկը:

-Մամա՛, գիրքերս տետրակներս աղտոտեցան, օրիորդը վրաս պիտի բարկանայ,- լացաւ մեծը:

-Դրացիին տունն էին, առի բերի, որ մայրերնին տեսնայ, սիրտը հանգստանայ,- բացատրեց Նազելին:

Քանի մը ժամ ետք, երբ Սիրունը գացեր աչքովը տեսեր էր տունին վիճակը, տիկ. Արուսեակ կրկին զինք կանչեց.

-Սիրուն, հիմա տուն գնա՛, վաղը եկած ատենդ ընտանեկան տետրակդ հետդ բե՛ր, որ սա աղջիկներուն անձնաթուղթ հանել տանք. մէկը կը ճանչնամ, անոր կ'ըսեմ որ ընէ:

-Չունիմ,- կմկմաց կինը:

-Ընտանեկան տետրակ չունի՞ս: Լա՛ւ, իրենց ծնունդի վկայագիրները բեր:

-Չունիմ,- շատ ցած ձայնով ըսաւ կինը եւ աղօթեց որ դայեակը չլսէ. անոր բարկութեան բոլոր աստիճաններուն ծանօթ էր:

-Ուրեմն չէ՞ն արձանագրուած: Լա՛ւ, այդ ալ կ'ընենք: Պսակիդ հաստատագիրը բէ՛ր:

Բայց երբ երրորդ անգամ ալ կինը «չունիմ» ըսաւ, դայեակը ինքզինք կորսնցուց.

-Ճանը մ, գնա՛ ինչ թուղթ որ ունիս գտի՛ր բե՛ր – պտոսաց կնոջ երեսին:

-Տիկ. Արուսեակ, դուրպա՛ն, մի՛ պտոսար, թուղթ չունիմ,- աղաչեց Սիրունը:

-Հիմա գնա՛ :

Կինը հեռացաւ տխուր եւ մտահոգ:

-Ինչո՞ւ կը բարկանաս կնիկին վրայ, տիկ. Արուսեակ,- մօտեցաւ նրբա Նազելին,- արդէն Աստուած զարկեր է խեղճին:

-Աստուած չէ զարկեր, ի՛նք իր գլխուն զարկեր է. ինչ թուղթ որ հարցուցի, չունիմ ըսաւ, ոչ չընտանեկան տետրակ ունի, ոչ զաւակներուն ծննդեան վկայագիր, ոչ ալ ամուսնութեան հաստատագիր:

-Է ի՞նչ պիտի ըլլայ հապա,- Նազելին ինք ալ տագնապեցաւ:

-Տեսա՛ր, իրաւունք չունի՛մ բարկանալու: Չեմ գիտեր: Երթամ Մուլազէմ Քէխիայի հարցնեմ:

Մուլազէմ Քէխիան Նոր Գիւղի ոստիկանապետն էր եւ Մայրանոցին «մշտական» յաճախորդն ու դրացին՝ անոր երկու տուները – ամէն մէկ կնոջ մէկ տուն – Մայրանոցին ճիշդ դէմն էին:

Տարին անգամ մը Մուլազէմ Քէխիան զաւակ կ'ունենար՝ տարի մը հին կնոջմէն, յաջորդ տարին նոր կնոջմէն: Զաւակներուն թիւը այսօր գիտեր, վաղը կրնար հաշիւը կորսնցնել:

Մուլազէմ Քէխիան նաեւ Մայրանոցին եւ տիկ. Արուսեակին «փրկիչն» էր. պետական ի՛նչ հարց որ ըլլար, Մուլազէմը պատրաստ էր օգնելու:

-Դուք միայն իմ կնիկներուս լաւ նայեցէք, շփացուցէք, ինծի ալ ասլան մանչեր տուէք,- կ'ըսէր:

Տիկ. Արուսեակը, առանց վրայէն հանելու բժշկական ճերմակ

շապիկը, ճերմակ կօշիկներով կտրեց թաղը, մտաւ ոստիկանատուն, շիտակ Մուլազէմին սենեակը:

-Բարի եկար, Մատամ, նորէն ի՞նչ կայ:

Դայեակը ինդիրը պարզեց:

-Աս աղջիկներուն անձնաթուղթ պէտք է հանուի, որ դպրոց երթան,- վերջացուց պատմութիւնը:

-Հարց չկայ, Մատամ, թող մօր վրայ արձանագրուին:

-Ի՞նչ կ'ըսես, Մուլազէմ Քէխիա, չըլլար, ատանկ բան բնաւ չըլլար. վերջը ո՞վ կ'նութեան պիտի առնէ սա աղջիկները: Ո՛չ ոչ, մենք հայ ենք, ատանկ բան բնաւ չըլլար, ուրիշ բան մը մտածէ, մուլազէ մ:

-Գիտեմ, գիտեմ ձեզի, հայերը ասանկ բաներու շատ կարեւորութիւն կու տան... ուլաք՞ Ահմա՞տ, լեղի սուրճ մը Մատամին, մինչեւ մտածեմ:

-Շնորհակալ եմ, սուրճը թող մնայ, դուն մտածէ՛, ես գործիս երթամ:

Յաջորդ առաւօտ ուլաք Ահմատը Մայրանոց եկաւ:

-Հոս սպասէ՛,- սաստեց պր. Պետրոսը,- ի՞նչ կ'ուզես:

-Մատամը... վարպետս Մատամին կ'ուզէ:

-Դուն գնա՛ վարպետիդ ըսէ Մատամը հիմա կու գայ – եւ վստահ ըլլալէ ետք, որ ոստիկանը դարպասէն դուրս ելաւ, գնաց տիկ. Արուսեակը տեղեկացնելու:

-Շունի ճինս են. եկեր է ներսի կիները դիտելու ախորժակ ունի... ինք գայ ըսելիքը ըսէ չըլլա՞ր... վարպետս Մատամը կ'ուզէ կոր եղեր,- աստիճաններէն ելլելով կը մրթմրթար պահակը,- տիկ. Արուսեակ, ատ Մուլազէմին շունը եկաւ, կ'ըսէ թէ վարպետը քեզի կ'ուզէ եղեր:

Գործէն արձակուելէ ետք տիկ. Արուսեակ ոստիկանատուն մտաւ:

-Ի՞նչ է, ճերմակ շապիկով չես,- մտերմութիւն ցուցաբերեց Մուլազէմը դայեակին, որ չլսելու տուաւ եւ ուղղակի նիւթին անցաւ.

-Բան մը կըրցա՞ր մտածել:

Մուլազէմը, եթէ զգաց իսկ նուրբ հեզնանքը «կըրցա՞ր մտածել»ուն, ցոյց չտուաւ:

-Պէտք է այդ կիներ ամուսնանայ: Ուրիշ ճար չկայ:

Կ'երեւի զգացեր էր հեզնանքը. խօսքին վերջնական ոճը եւ քիչ մը խիստ ձայնը այդ կը հաստատէին:

-Լաւ, բան մը կ'ընենք, շնորհակալութիւն:

Եւ անմիջապէս դուրս ելաւ ոստիկանատունէն:

* * *

Քանի մը օր ետք տիկ. Արուսեակ ծանր քայլերով կը բարձրանար Զէյթուն խան տանող գառիվերը: Շատ մտածեր էր, շատ ծանր ու թեթեւ ըրեր էր Մուլազէմին առաջարկը, համոզուեր էր, որ լաւագոյն լուծումը պիտի ըլլար ատիկա, բայց... որո՞ւ պսակէր Սիրունը, որ «յօնք շինելու տեղ աչք հանած» չըլլար:

Եւ ի վերջոյ, յայտնատեսութեան պէս «տեսեր էր» ամենէն յարմար թեկնածուն:

Օրուան այդ ժամուն Զէյթուն խանի թարլան⁹ ամայի էր. տղաքը իրենց դպրոցները, երիտասարդները, կին թէ տղամարդ, իրենց գործերուն:

Աւետիս ամմին տեսաւ անդարպաս դռնէն մտնող կերպարանքը եւ ավիը ճակատին տարաւ, իբր թէ լաւ տեսնելու համար մօտեցողը:

-Բարի լոյս, Աւետիս ամմի,- բարձր-բարձր եւ հատիկ-հատիկ արտասանեց կինը:

-Բարլո՛ւս... հա...

-Մայրանոցի դայեակն եմ ես, ամմի:

-Հա, գիտիմ ծանօթ ձէն է, հա տիկ. Արուսեակ, դուրպան, բարով էս եկեր մեր խանը... ինչ էր է:

-Խէր է, ամմի, քո վո՞ր եկեր եմ:

-Հազար բարով, նստի,- եւ ցոյց տուաւ քովի քարը, որ նստարան որպէս կը ծառայէր:

-Ողջ մնաս, գործի պիտի հասնիմ: Խնդրանքով եկեր եմ դուող:

Եւ լռեց. ինչպէ՞ս պիտի ներկայացնէր այս շատ փշոտ խնդրանքը:

Լռեց եւ ծերունին ու կասկածով նայեցաւ կնոջ: Ի՞նչ կրնար ուզել իրմէ այս կինը, որ, ինչպէս լսեր է դուռ-դրացիներէն, ճիգ չի խնայեր հասնիլ-օգնելու դիմողին ալ, չդիմող կարիքաւորին ալ:

-Ըսէ՛, եաւրում,- ծերունին խօսեցաւ երկարող լռութենէն նեղացած:

-Ըսեմ, ամմի, թէեւ... Աւետիս ամմի, քեզ պիտի ամուսնացնեն,- արագ-արագ ըսաւ կինը, խորունկ շունչ մը քաշեց եւ սպասեց:

Ընուածը այնքան անսպասելի էր, որ ծերունին պահ մը կարկամած նայեցաւ կնոջ: Կը կատակէ՛ր: Թէ ոչ, ըսուելիք բան չէր ասիկա իր տարիքով մեկուն, ինք որ տասնեակ մը թոռներու տէր է արդէն – մէկ մասը թաղեր էր, մէկ մասն ալ ողջ-առողջ է, փառք Աստուծոյ:

Բայց տիկ. Արուսեակը ոչ միայն շատ լուրջ էր, այլ տեսակ մը վախով իր պատասխանին կը սպասէր:

-Եաւրում,- սկսաւ մարդը խեղճացած,- այս տարիքիս հետս շախա¹⁰ մ՛ըներ, սիրտս չի տանի...

-Աւետիս ամմի, շատ լուրջ եմ, ընելիքդ մեծ բարիք պիտի ըլլայ... գիտես Սիրունը, չէ՞, ան որուն տունը փլաւ քանի մը օր առաջ...

Ծերուկը ուշադրութեամբ մտիկ ըրաւ, գլուխը շարժեց, «ցըթ-ցըթ» ըրաւ, երբ կինը կը խօսէր աղջիկները մօրը անունին արձանագրելու այլընտրանքին եւ անոր հետեւանքներուն մասին: Յետոյ երբ պատմութիւնը վերջացաւ, երկա՛ր պահ մը լռեց եւ ի վերջոյ ըսաւ.

-Բայց ինձի նայէ՛, եկեղեցի-մեկեղեցի գացողը չեմ հա՛:

-Չէ չէ,- ըսաւ տիկ. Արուսեակը, համբուրեց ծերունին դողողոջ ձեռքը եւ շարունակեց,- դուն միայն անձնաթուղթդ տուր ինձի... ունի՛ս...

-Չէլպէթտէ¹¹ ունիմ. սպասէ՛ բերեմ:

* * *

-Չ՛ըլլար, տիկ. Գագանճեան, չ՛ըլլար, ինչպէ՞ս կարելի է երկու անձնաթուղթ պսակել,- քանիերորդ անգամ ըլլալով կ'ըսէր Առաջնորդ Սրբազանը:

Բայց տիկ. Արուսեակը յամառօրէն իր ըսածը կը պնդէր.

-Եթէ դուք ուզեք, կ'ըլլա՛յ, Սրբազան Հայր, ասիկա բարիք է, ընտանիք մը փրկել է. հապա՛ ի՞նչ պիտի ըլլան այդ երկու աղջիկները առանց անձնաթուղթի:

-Լա՛ւ,- ըսաւ Սրբազանը ճարահատ,- բայց ո՛չ մէկուն ո՛չ մէկ խօսք....

Կէս ժամ ետք տիկ. Արուսեակը կրկին կը մտնէր Մուլագէմ Քէխիային գրասենեակը:

Երբ Մուլագէմը պսակի հաստատագիրը տեսաւ, գլուխը շարժեց.

-Քեզի համար չըլլալիք քան չկայ, Մատամ, եթէ ինդիրը մարդոց օգնելու մասին է: Է՛հ, ուրիշը ինչ դրամ կը դիզէր... սա թուղթը հոս ձգէ, գալ շաքաթ անձնաթուղթերը կը դրկեն: Հա, սա աղջիկներուն անուններն ալ հոս, թուղթի վրայ գրէ տեսնեմ, անանկ ալ դժուար անուններ ունիք որ...: Կարծեմ կինս յղի է, նորը, դրկեմ անգամ մը նայիր, բայց Մատամ, ջանքդ ըրէ, որ ա՛ս ալ տղայ ըլլայ հա...

* * *

Տարիներ ետք Սիրունը հանգիստ փակեց աչքերը: Մեծ աղջիկը լաւ գործ ունէր, ինքզինքը կրնար պահել: Պզտիկն ալ ամուսնացեր է իրեն երեք թոռներու երջանկութիւն պարգևեր էր:

Փառքդ շատ, Աստուած:

ԱՂՋԻԿԸ

Դրացիները քահանայ մը բերին, դագաղ մը վարձեցին եւ Մարիամիկը տարին թաղեցին ամուսինին քով, որուն ոսկորները դեռ չէին չորցեր:

Պառաւր ամբողջ ընթացքին անկիւնը գետինը նստած մնաց, «Աստուած հոգին լուսաւորէ»ները եւ «հողը թեթեւ գայ»երը չլսեց կարծես:

Երբ դրացիները քաշուեցան, պաղ հով մը ինկաւ սենեակին մէջ. պատուհանին կոտրած ապակիէն ներս նայող հովը ծաղրանք թուեցաւ կնոջ. ջարդ ու «սէֆեր պերլիկ»¹² տեսած Խաթուն քոյրիկին համար այս մահերը ոչինչ էին եւ ամէն ինչ էին միաժամանակ:

Միւս անկիւնէն, լաթերու կոյտի մը մէջէն լսուեցաւ երեխայի մը ճիչը:

Խաթուն քոյրիկը մոռցեր էր կարծես երեխային գոյութիւնը.

-Դուն չէի ր մօրդ մահուան պատճառը. դո՛ւն երթայիր, ինքը մնար...

Երեխան, հազիւ երեք օրուան, քանի ժամ է անօթի էր ու չէր լռեր: Խաթունը ցաւէն եւ անզօրութենէն պիտի խենթանար կարծես: Ի՞նչ ըներ, ուրկէ՞ կաթ բերեր. կաթին համար դրամ պէտք էր, իսկ դրամին համար՝ աշխատիլ: Ինք աշխատէր, ո՞վ պահէր երեխան:

Երեխային ճիչերը սկսան անտանելի դառնալ:

Պառաւր մօտեցաւ, վերցուց խանձարուրուած աղջիկը, «գոնէ տղայ ըլլար» մտածեց եւ դուրս եկաւ սենեակէն:

Ջէթուն խանի վարի յարկին ամենէն հեռու եւ մութ սենեակն էր իրը. հոն ապրեր էր, գաւակ հասցուցեր, ամուսնացուցեր, թոռներ տեսեր, եւ պահ մը, շատ կարճ պահ մը խորհեր էր, որ վերջ գտեր էին իր կեանքին ցաւերը, եւ ա՛լ կրնար ամբողջ թոքերով շնչել, կրնար նստիլ իրիկնամուտերուն դրացիներուն հետ եւ «չէնէ» զարնել: Բայց սխալէր էր, մեծապէս սխալէր էր, դեռ տեսնելիք ունէր եղեր:

Դուրսը կիները նստած կը խօսէին ու քիչ անդին տղաք

աղմուկով կը խաղային. երբ տեսան Խաթուն քոյրիկը, լռեցին ու զարմացան: Խաղոց տղոցմէ մէկը վազելով եկաւ.

-Նէնէ՛, ո՞ւր կ'երթաս:

-Տանիմ սա չոճուխին կաթ տուող մը գտնեմ:

Կիները գլուխնին շարժեցին. գոնէ շուրջերնին տղացկան մը ըլլար, իր զակին հետ այս որբուկն ալ դիտեցնէր: Բայց չկար:

Թոռնիկը ետ իր խաղին գնաց:

-Միւսները ինչպէս ըլլայ կը մեծնան, խնդիրը նորածինն է:

Խաթունին երկու թոռները արդէն տասնմէկ եւ ինը տարեկան էին. մեծը աշկերտ էր սափորիչին քով, միւսն ալ գալ տարի աշկերտութեան կ'երթայ. ո՞ւր. ո՞ւր ըլլայ. միայն իր հացին փարան տուն բերէ:

Կինը քալեց Ձէյթուն խանը Կիւլպէնկեան մայրանոցին կապող թաղէն, ծանր քայլերով բարձրացաւ դուրսի աստիճաններէն եւ մտաւ մեծ սրահը:

-Ի՛նչ կ'ուզես մայրիկ,- մօտեցաւ նըրս Աստղիկը:

-Դայէկը:

-Ինչո՞ւ, ի՞նչ պիտի ընես:

-Բան ունիմ ըսելու:

Դայեակը, լսելով ձայները, դուրս ելաւ գրասենեակէն.

-Այո՛, - գործնական եւ խիստ:

Խաթունը պահ մը ըսելիքը մոռցաւ. լսեր էր որ խիստ կին մըն է դայեակը, բայց սիրտը այնքան բարի, այնքան օգնող-հասնող: Յետոյ նայեցաւ նըրսին, որ կեցած հետաքրքրութեամբ կը սպասէր: Դայեակը ինք ալ նայեցաւ նըրսին եւ աչքով հասկցուց հեռացի ր:

-Եկուր, մայրիկ, գրասենեակ մտիք:

Կինը մտաւ, առանց խօսելու խանձարուրը սեղանին դրաւ եւ «օ՛ ֆօ ֆ» ըսելով ետ դուրս ելաւ սենեակէն:

Դայեակը նախ շատ զարմացաւ իրեն տրուած քուրջերու այդ կոյտին համար. բայց երբ տեսաւ անոնցմէ հազիւ երեւցող նորածինին դէմքը, ըռպէտապէս հասկցաւ եղածը:

-Սա երեխան կա՛մ մեռնելիք է, կամ ալ արդէն մեռեր է,- մտածեց ու բացաւ քուրջերը:

Երեխան մեռած չէր, բայց լացէն ու անօթութենէն յոգնած կարծես մարեր էր:

Դայեակը գլուխը վերցուց եւ տեսաւ նրբա Աստղիկը, որ զարմացած զինք կը դիտէր:

-Շիշ մը կաթ շինէ, մաքուր լաթեր բեր եւ սենեակս եկուր,- կարգադրեց:

Կէս ժամ ետք նորածինի դէմքին քիչ մը գոյն եկեր էր. մաքուր լաթերու մէջ փաթթուած, նոյնիսկ քաղցր, սիրուն դէմք ունէր սա աղջիկը, որ որո՞ւ զաւակն էր արդեօք:

-Աստղիկ, հոս նայէ՛, աս եղածին մասին ոչ մէկուն ոչ մէկ խօսք: Հիմա ես երթամ, կէս ժամէն կու գամ:

* * *

Մէպիլը Թօփճեան եղբայրներուն էր, ինչպէս եւ ջուր քաշող հողմաղացը անոր տարածքին, ինչպէս գիշերային լամբերը քաղաքին, ինչպէս եւ մեքենաներու ներածումը: Մեծ գերդաստան էր վեց եղբայրներով, անոնց ընտանիքներով եւ զաւակներով: Տօն օրերը բոլորը միասին կ'անցընէին Մէպիլի պարտէզներուն մէջ, որոնց պահակին կ'ինը՝ «Մէպիլի Մարին» դարձեր էր իրենցմէ մէկը:

Մարին քանի տարի է ամուսնացեր էր, բայց տակաւին զաւակ չունէր:

-Արուսեակ, դուրպան, ճար մը ըրէ:

-Մարի, բժիշկի պէտք է երթաս:

-Գացի, դուրպան, գացի:

-Ի՞նչ ըսաւ:

-Ըսաւ չըլլար:

-Ուրեմն չըլլար, Մարի՛:

-Դուն ճար մը ըրէ, մայրանոցն ես:

Ամբողջ Հալէպի մէջ այս մէկ մայրանոցը կար, եւ անոր դայեակը տիկ. Արուսեակը, ինք ալ Թօփճեանի զաւակ:

Երբ Խաթունը դրեր էր երեխան իր սեղանին եւ առանց խօսքի հեռացեր, Արուսեակին աչքին առջեւ եկեր էր Մարին եւ անոր աղաչանքը՝ դուն ճար մը ըրէ...

Հիմա ամուր գրկած կուշտ ու մաքուր երեխան, Արուսեակ ինքնաշարժ մը կ'եցուց ու մէջը նետուեցաւ: Մէպիլը Նոր Գիւղէն բաւական հեռու էր, ինքն ալ խոստացեր էր կէս ժամէն գործին գլուխը ըլլալ:

* * *

Դայեակը, երբ երեխան գիրկը Մեպիլ կը շտապէր, բնաւ չէր մտածած իր արարքին կանոնական բաժնին մասին. երկրի մը մէջ, ուր որդեգրումը թէ՛ պետականօրէն, թէ՛ կրօնականօրէն արգիլուած է եւ մեղք կը համարուի, ինք պիտի կարենա՞ր հետեւանքները կրել: Երկու մտածում կը զբաղեցնէին զինք այդ պահուն՝ երեխան ստոյգ մահէ փրկել եւ Մեպիլի Մարին ուրախացնել: Երկու այնպիսի զօրաւոր մղումներ էին ասոնք, որոնք ոչ միայն այս արարքին, այլ Արուսեակի ամբողջ կեանքին ետեւ կը կենային եւ իր քայլերը կ'ուղղէին՝ փրկել եւ օգնել:

Մարին, տնակին մուտքի աստիճաններուն վրայ նստած, ամուսինին քաղած ազատքեղը կը մաքրէր: Ոտնաձայներուն մօտենալուն հետ գլուխը վերցուց «նորէն ի՞նչ կ'ուզէ» մտածելով, կարծելով որ ամուսինն է եկողը: Բայց ամուսինը չէր:

-Արուսեա՞կ:

-Մարի, տես ի՞նչ բերի քեզի:

Մարին նայեցաւ խանձարուրին, նայեցաւ Արուսեակին, գոյն տուաւ-առաւ.

-Ամա՛ն, չոճուխ է, ուրկէ՞...

-Մայրը մեռեր է, երեխան պահող չունի:

-Ի՞նչ է:

-Աղջիկ:

Մեպիլի Մարին, որ մեծ համարում ուներ դայեակին վրայ, ձեռքերը զոգնոցին վրայ սրբեց եւ առաւ խանձարուրը:

-Ի՞նչ կերցնեմ:

-Կաթ: Նայէ, մայրանոցը ձգեր-եկեր եմ, պետք է երթամ:

Ու գնաց:

* * *

Օրը իրիկուն եղաւ, գիշեր ու կրկին լոյս:

Լոյսին բացուելուն հետ սկսան գոցուիլ դայեակին աչքերը: Գործը առատ եղեր էր գիշերը: Երեխաներ լոյս աշխարհ կու գային, ու թէեւ աղքատ, բայց սիրող, գուրգուրացող եւ զօրաւոր բազուկներու կու գային այդ երեխաները:

Երէկուան ըրածին գոհունակութիւնը կը յամենար թէեւ Արուսեակի հոգիին մէջ, բայց երեխային պատմութիւնը մոռցուեր էր արդէն:

-Տիկ. Արուսեակ, կին մը եկեր է քեզ կ'ուզէ, հետն ալ նորածին մը կայ:

-Մարի՞, - դայեակը շատ զարմացաւ:

-Առ, ետ առ աղջիկը,- Մարին գրեթէ կու լար:

-Ինչո՞ւ, ի՞նչ եղաւ:

-Գիշերը ամբողջ լացաւ. Էրիկս հազար քիֆիր¹³ քաշեց, եղեր ասքան ատեն է անգաւակ ենք, հիմա ալ թող անգաւակ մնանք. առտուն ելայ Նուպարին տարի...

-Եղբօ՞ րս:

-Հա՛ : Ուրկէ՞ գտար սա հիւանդկախ երեխան հարցուց, ես ալ ըսի՛ քոյրդ տուաւ: Աւելի առողջ մը չկա՞ր ըսաւ... ա՛ն, Արուսեակ, Էրիկս ալ չուզէր կոր, ես ի՞նչ ընեմ...

Եւ Մարին հազիւ արցունքները զսպելով, դրաւ խանձարուրը դայեակին գիրկը եւ ինք վազելով գնաց:

Դայեակը չէր գիտեր թէ երեխան ուրկէ՞ էր, որո՞ւն էր, ո՞վ էր զայն բերողը:

-Տար կաթ մը տուր,- դարձաւ սպասող հիւանդապահուհին,- յետոյ բոլորը ժողովի կանչէ:

Վայրկենապէս ցնդեր էր գոհունակութեան մնացորդացը. տեղը ծանր մտահոգութիւն մը սկսեր էր լեցուիլ:

Հինգ հիւանդապահուհիները իրար հրելով գրասենեակ մտան. դայեակին ժողովները միշտ կը մտահոգէին զիրենք, միշտ յանդիմանութիւն մը կ'ըլլար լսելիք:

-Մա նորածինը երէկ կին մը բերաւ, մայրը մեռեր է ըսաւ, ձգեց գնաց: Ես ալ ծանօթ մէկու մը տարի: Այսօր ետ բերաւ, եղեր ամուսինը չ'ուզէր: Հիմա սա երեխան ետ տէրերուն տանելու ենք: Գիտէ՞ք որուն է, ուրկէ է:

Նելլին, որ հազիւ աշխատանքի մտած նշանուեր էր արդէն, կամացուկ մը, ամչնալով ըսաւ.

-Նշանա՞ծս Ձէյթուն խանէն է, ըսաւ որ...

-Հետս եկուր:

Գացին նախ նշանածին խանութը, յետոյ գացին գտան պառաւը, որ անկիւնը տաշտին առջեւ լուացք կ'ըներ: Մութ սենեակը խոնաւութիւն կը հոտէր: Դայեակին սիրտը կծկուեցաւ. սա խեղճ երեխան ինչպէ՞ս պիտի ապրէր հոս:

-Մայրի՛կ...

Պառաւր զլուխը վերցուց, նայեցաւ դայեակին, նայեցաւ երեխային ու հասկցաւ:

-Հոն դիր. կա՛մ կ'ապրի, կամ կը մեռնի. արդէն եթէ բախտ ունենար, մայրը չէր մեռներ:

* * *

-Տիկ. Արուսեակ, երեկուան կինը նորէն եկեր է:

-Մարի :

Դայեակը պահ մը կորսնցուց ժամանակի զգացողութիւնը. ինչո՞ւ դէպքերը կը կրկնուէին: Այս ի՞նչ կախարդանք է: Թէ՛ երագ է:

-Նայէ, Արուսեակ, ատ երեխան ետ առնելու եկայ: Խիղճս հանգիստ չտուաւ: Պիտ' մեռնի, թող քովս մեռնի, տաք ու կուշտ մեռնի...

Այս անգամ երեքը՝ դայեակը, Նելլին եւ Մարին գացին երեխան «պաշտօնապէս» ետ առնելու: Պառաւր ոչ նայեցաւ, ոչ ալ բան ըսաւ: Ոսկորներուն ցաւը եւ միւս երկու թոռներուն հոգը սպառեր էին զինք:

-Նշանածդ գիտե՞՞ այս ընտանիքը ինչեան է,- հարցուց դայեակը Նելլիին:

-Կը հարցնեմ,- խոստացաւ Նելլին, որուն կուրծքերը կը կոտտային այս երեխային դժբախտութեան ի տես:

* * *

Քաղաքը մեծցաւ, պետութիւնը ձեռք առաւ ջուրն ու ելեկտրականութիւնը, Սէպիլի կապալառութեան շրջանը աւարտեցաւ: Թօփճեաններուն ոսկեդարը անցեր էր, վեց եղբայրներէն մնացեր էր միայն դաշնակցական Արմէնը, չեղեալ տէռորէն կոյր ու թեւատ: Սէպիլի Մարին ամուսինին եւ աղջկան հետ ելեր էր Սէպիլէն եւ տուն մը առեր Նոր Գիւղէն: Կիւլպէնկեան մայրանոցը կը շարունակէր մնալ քաղաքին միակ մայրանոցը, բայց տիկ. Արուսեակը ա՛լ զլխաւոր դայեակը չէր. հանգստեան կոչուեր էր:

Օր մը տան դուռը զարնուեցաւ. երիտասարդ ու անծանօթ աղջիկ մըն էր.

-Տիկ. Արուսեակ, մայրանոց գացի, ըսին որ ելեր ես եղեր, ա՛լ չես աշխատիր:

Խօսքին եզակին խորթ չէր Տիկ. Արուսեակին ականջներուն եւ անմիջապէս Նոր Գիւղ յիշեցուց իրեն:

-Տունը չեմ աշխատիր,- ըսաւ, կարծելով որ չբեր նորահարս մըն է:

-Ես Սէպիլի Մարիին աղջիկն եմ,- արագ պատասխանեց երիտասարդուհին, անպայման տեսակցութիւնը յաջողցնելու վճռակամութեամբ:

-Սէպիլի Մարիին աղջի՞կը... մտիր:

-Մարին ինչպէ՞ս է,- հարցուց յիշատակներուն քաղցրութեամբ:

-Կեանքը քեզի եղաւ. արդէն ատոր համար քովդ եկայ:

-Թաղումը ե՞րբ է:

-Չէ չէ, արդէն երկու ամիս կ'ընէ:

-Վա՛ իս, ինչո՞ւ լուր չըրիր, գոնէ թաղումի գայի:

Տիրեցաւ տիկ. Արուսեակը եւ լուռ մնաց: Մասնիկ մը եւս մոռացումի գիրկը կ'երթար, մասնիկ մը ոչ միայն իր կեանքէն, այլ մեծ ու ճոխ գերդաստանի մը պատմութենէն:

Աղջիկը նայեցաւ կնոջ եւ զարմացաւ լեցուած աչքերը տեսնելով իրեն ըսեր էին, որ շատ խիստ կին է աս դայեակը:

-Կարծեմ դո՛ւն ինձի տուեր ես մամայիս, չէ՞ մը:

-Այո՛ :

-Գիտե՞ս բուն ծնողքս ո՞վ են:

-Անուն մականուն չեմ յիշեր:

-Բայց գիտե՛ս ով են, տեսեր ես:

-Անշուշտ տեսեր եմ:

-Հայ են, չէ՞:

Այս հարցումին չէր սպասեր տիկ. Արուսեակը. Ինչո՞ւ էր ազգութեան այս ճշդումը, ինչպիսի՞ կասկածներու որդը կը կրծէր սա երիտասարդ աղջկան հոգին:

Ձէյթուն խանի մութ ու խոնաւ սենեակը, գետինը կկզած լուացք ընող պառաւն ու լացող երեխային պատկերը խուժեցին ու տակնուվրայ ըրին դայեակին սիրտը:

-Հապա ի՞նչ պիտի ըլլային, իսլա՛մ:

Տիկ. Արուսեակին խիստ ձայնէն երիտասարդ աղջիկը վախցած լռեց. ինչպէ՞ս շարունակէր:

-Բայց ինչո՞ւ կը հարցնես:

-Քեռիներս ըսին... քանի դուն իսլամ ես... տունը...

-Կեցիր, կեցիր, ինչի՞ մասին կը խօսիս, ո՞վ է իսլամը:

-Քեռիներս ըսին եղեր ես իսլամի զաւակ եմ, ուրեմն տունը, որ մամայիս անունով է, այսինքն Սէպիլի Մարիին անունով է, ուրեմն իրենց կ'ըլլայ, ինձի բաժին չ'ըլլար եղեր...

-Անձնաթուղթդ հո՞ւս տուր նայիմ...

Բարկութենէն ու ցաւէն դայեակին ձայնը իրապէ՛ս խիստ հնչեց: Աղջիկը դողալով հանեց անձնաթուղթը:

-Կարդա՛ նայիմ ի՞նչ գրուեր է: Կարդալ գիտես չէ՞:

-Հա գիտեմ. գրուեր է Մարիա պընթ Կարապետ:

-Մօր անուն:

-Մարի...

-Հիմա հասկցա՞ր:

-Ի՞նչ:

-Որ քեռիներդ քեզ վախցնել ուզեր են, դուն Կարապետին եւ Մարիին, Սէպիլի Մարիին աղջիկն ես:

-Տունս չե՞ն կրնար առնել. ապրելիք ուրիշ տեղ չունիմ. պապաս ալ պրդէն մեռեր է:

-Տունդ որո՞ւ անունով է:

-Մամաս վրաս դարձուց անցեալ տարի:

-Վերջացաւ գնաց:

Երբ աղջիկը դուրս կ'ելլէր տունէն, դարձաւ եւ ամուր մը փաթթուեցաւ դայեակին.

-Մամայիս ըսածին չափ կաս եղեր,- ըսաւ,- շատ շնորհակալ եմ:

-Հայու զաւակ ես, աղջիկս, առաքելական հայու զաւակ, ջարդ ու գաղթ տեսած, բարի եւ ազնիւ մարդոց զաւակ ես, չկասկածի՛ս...

ԳԱԶԱՆՃԵԱՆ-ԵՐԱՄԵԱՆ

ԽՄԲԱՆԿԱԸ

Նենե Հայկանոյշը մաքրութիւն կ'ընէր, հարսն ալ իրեն կ'օգնէր:

Հարսը շատ պիտի ուզէր, որ Նենե Հայկանոյշը մաքրութեան օրերուն հանգիստ ընէ, սուրճ խմէ, ճաշին նայի, կամ աւելի լաւ կ'ընէ եթէ դրացիներուն երթայ կամ աղջիկներուն այցելէ: Ինչ կ'ուզէ ընէ մաքրութեան օրերուն, միայն մաքրութիւն չընէ, ազատ ձգէ հարսը, որ գիտցածին պէս դասաւորէ տունը, արագ-արագ սրբէ, մաքրէ, կոկէ:

Բայց ոչ: Նենե Հայկանոյշը այնքան ատեն որ ողջ-առողջ է – Աստուած երկար կեանք տայ իրեն – ինքն է տունին տէրը, ինքն է ամէն բան որոշողը: Աստուած ալ իրեն աղուոր, իսկօք հարս մը տուէր է, որ օգնէ, ձեռք տայ իրեն:

-Հա՛րս, սուրճը...

Մայր ու տղայ մէկ-մէկ սիկարէթ կը վառեն, եւ մինչեւ հարսը սուրճը բերէ, իրենք մոխիրները գետին կը թօթուեն:

-Մամա՛, մոխրաման բերի:

-Արդէն մաքրութիւն պիտի ընենք,- կ'ըսէ կեսուրը եւ սիկարէթին պարապ տուփն ալ ճմռթկելով գետին կը նետէ:

Յետոյ Յովհաննէսը գործի կ'երթայ, հակառակի պէս ալ սովորականէն ուշ, եւ ի վերջոյ Նենե Հայկանոյշը մաքրութիւնը սկսելու հրաման կու տայ.

-Դուն պատշգամը լուա՛, ես ներսերը ալւեմ:

Երբ հարսը պատշգամը լուալէ ետք ներս կու գայ, ինչ կը գտնէ:

Նենե Հայկանոյշը գետինը ծալապատիկ նստած, քովը՝ բարակ աւելն ու ակիշը, ձեռքը թերթի կտոր մը, խոր ընթերցումի մէջ թաղուած:

Առաջին անգամ հարսը անքա՛ն գարմացեր էր տեսածէն, որ չէր կրցեր ինքզինք գսպել:

-Ի՛նչ կ'ընես:

-Չե՛ս տեսներ, կը կարդամ:

-Հապա մաքրութիւնը:

Հին-մին ու մոռցուած ինչ թերթ որ գտնէր, Նենե Հայկանոյշը անպայման ծայրէ ծայր պիտի կարդար, նոյնիսկ եթէ կարդացած

ըլլար:

-Մոռցած կ'ըլլամ...

Օր մըն ալ հիւրանոցի սեղանիկներէն մէկուն ետեւ ինկած խմբանկար մը գտաւ.

-Ամա՛ն, ովքեր կան հոս եղեր...

Եւ սովորութեան համեմատ նստաւ գետին, կկոցեց աչքերը եւ յուշերը լարեց.

-Հա՛, մեր բակով տունին դրացիներն են, Թօփճեանները...

Յետոյ պահ մը դիտելէ ետք նոր անդրադարձաւ, որ հարսն ալ Թօփճեանի աղջիկ է:

-Քա հարս, եկուր նայիր,- կանչեց:

-Սկսանք, մինչեւ իրիկուն չենք վերջանար նորէն սա մաքրութիւնը,- մտածեց հարսը ու մօտեցաւ,- այո, ի՞նչ կայ:

-Նայէ, ձերիներն են:

-Մերիներն էր:

-Հօրեղբայրներդ իրենց գաւակներով:

-Ուրկէ ուր:

-Չե՛մ ըսած քեզի, երկար շրջան մը դրացի նստանք Ճիտէյտէյի նոյն բակին մէջ,- ըսաւ եւ պատկերը հարսին երկարեց:

Հարսը նայի անտարբեր առաւ նկարը:

-Դուն կա՛ս,- հարցուց:

-Անշո՛ւշտ, ետեւը կեցեր եմ:

Բազմութեան մը սրճագոյնի երանգներով խմբանկարն էր, մեծամասնութիւնը կիներ ու երեխաներ: Բոլորն ալ իրարու կը նմանէին, մանաւանդ իրենց հագուածքով, որբանոցի սաներուն նման:

Ոտքի կեցողներուն եւ գետինը նստողներուն միջեւ չորս աղջիկներ շուրջպար կը պարէին: Ո՛չ, չէին պարեր, մատ-մատի տուած, ձեռքերը վեր բռնած, ուղիղ ուսպնեակին կը նային, նոյնանման ժպիտներ ամուր պահած իրենց դէմքերուն, համբերութեամբ սպասելով, որ լոյսը պայթի: Շատ փոքրերուն դէմքերը պղտոր են, արդիւնք իրենց եռանդին, որքան ալ նկարիչը «մի շարժիք» պոռացած ըլլայ, փոքրերը շարժեր են ուրախութեամբ հոս հոն նայելով:

-Սա աղջիկները ո՞վ են,- հարցուց հարսը:

-Ակնոցս տո՛ւր ըսեմ:

Նենէ Հայկանոյշը ակնոցը դրաւ քիթին, եւ գննեց նկարը.

-Առաջինը Պերճուհին է:

-Ամնօ Պարթեւի՞ն Պերճուհին:

-Այո՛: Քովինը...

Հարսը ձգեր էր ձեռքէն մեծ աւելը, եւ մոռցած որ պատշգամին ջուրը կը հոսի, ինք ալ ծալապատիկ նստեր էր գետինը, կեսրոջ մօտիկ, եւ կը փորձէր ճանչնալ նկարին մեջինները:

-Մայրս, ասիկա մայրս չէ՛,- եւ մատը դրաւ ետեւի շարքը կեցող կիներէն մէկուն վրայ:

-Այո. այս կողմինն ալ հայրդ է: Քեզ գիրկը առած Յովհաննէսին նարտի խաղալը կը դիտէ ...

Ըսաւ եւ օձէն խայթուածի պէս լռեց: Երբ հարսը ուզեց մանրամասն դիտել խմբանկարին ա՛յդ բաժինը, կեսուրը առաւ նկարը եւ հրահանգեց.

-Հատէ՛, մաքրութիւնը ուշացանք, ջուրն ալ բաց ձգեր ես, հատէ՛ հատէ՛ ...

Եւ խմբանկարը անհետացաւ վերջնականապէս:

Միայն երբ Հայկանոյշ նենէն կը մահանայ եւ մայրս իր իրերը կը սկսի դասաւորել, պահարանին խորունկէն կը գտնէ խմբանկարը, եւ ինք ալ կեսրոջ նման, ձեռքին գործը ձգած, կը սկսի ուշի ուշով դիտել, մանաւանդ հասկնալու համար թէ կեսուրը ինչո՞ւ վերջին պահուն պահեր էր գայն:

Նկարին ձախ կողմը երկու տղամարդիկ, ամբողջովին անտարբեր լուսանկարուելու պահուն, շատ հաւանաբար նաեւ չլսած լուսանկարիչին տասներորդ անգամ կրկնուած խօսքը՝ «Մի՛ շարժիիիիիիիիիիիիիք ...», խորամուխ են նարտիի խաղին մէջ:

Չախ կողմինը հայրս է, ֆէսը գլխուն, քսանչորս տարեկան երիտասարդ, իսկ մայրս իր հօր գիրկը, անհանդարտօրէն շարժելով եւ պղտորելով նկարը, դեռ մէկ տարեկան իսկ չկայ:

Նենէ Հայկանոյշը կ'երեւի մտածեր էր՝ նկարը պահեմ, տարիքի տարբերութիւն թող չերեւի ...

Այդ խմբանկարը մեր գերդաստանին տասնեակ մը թանկագին լուսանկարներուն մաս կը կազմէ, գուրգուրանքով պահուած, արձանագրուած «Յուշամատեն»ի կայքէջին¹⁴ մէջ,

Եւ վաւերացուած You tube-ի անթիւ ֆիլմերուն մաս կազմելով,
հարցազրոյցի մը ընթացքին ցուցադրուած, Family story and
AGBU Cairo, Maroush Yeramian խորագիրով:



*Ձախին ոտքի առաջինը՝ Յովհաննէս Գազանճեան, երրորդը՝ Գրիգոր
Թօփճեան, զիրկը՝ Արուսեակ Թօփճեան. 1923.*

ԴԵՊԻ ԱՄԵՐԻԿԱ

Հալէպ հասնելուն երկրորդ շաբաթն էր: Գէշ աղէկ տեղաւորուեր էին մէկ սենեակնոց տան մէջ: Գիշերը անկողինները անկիւնէն կ'իջեցնէին, գետին կը փռէին: Մէկ ծայրը Յարութիւնը կը պառկէր, միւս ծայրը՝ Հայկանոյշը, եւ իրենց միջեւ չորս զաւակները Չապէլն ու Մարին մօր կողմը, Յովհաննէսն ու Գառնիկը հօր կողմը:

Գիշեր մը երբ տղաքը խոր քուն էին, Հայկանոյշը մօտեցաւ ամուսնին. զաւակներուն ներկայութեան պիտի չհամարձակէր խօսիլ:

Շատ ժամանակ անցեր էր թէւ իրենց առաջին գիշերէն,- եւ Հայկանոյշը մինչեւ ականջները կը կարմրէր ամէն անգամ, որ յիշէր իր ձախաւերութիւնը,- ինք սակայն կը շարունակէր մնալ Տիգրանակերտի չխօսկան հարս:

-Յարութի՛ն,- ըսաւ կամացուկ մը:

Ամուսինը տակաւին անկողին չէր մտած եւ սետիրին անկիւնը նստած կը խոկար: Պահ մը նայեցաւ կնոջ ու ցաւեցաւ անոր յոգնութեան եւ անորոշութենէն ծնած տագնապին համար. չէ՞ որ Հալէպ հասեր էին, յետոյ Իսկէնտերուն եւ հոնկէ Ամերիկա երթալու նպատակով:

-Յարութի՛ն,- կրկնեց քիչ մը աւելի բարձր:

-Հը՛, ի՞նչ կայ:

-Կ'ըսեմ ... կ'ըսեմ ...

-Լեզուդ նորէ՞ն բռնուեցաւ,- քիթին տակէն ժպտաց ամուսինը,- ըսէ:

-Կ'ըսեմ՝ չերթանք:

-Չերթանք ի՞նչ ընենք:

-Մնանք հոս:

Ամուսինը լուռ մնաց: Ինք շարունակեց, արդէն լեզուն բացուած.

-Լաւ քաղաք է, բարի, առատ. արդէն գործ ալ ունիս. մնա՛նք:

-Քո՛ւ ըսելովդ է:

Հայկանոյշը զգաց, որ շատ առաջ գացեր էր: Լռեց:

-Էշ էղնիմ թէ մէկ լէ խօսիմ,- մտածեց: Ու կրկին արթնցաւ այդ

առաջին գիշերն իսկ ծնած վախը, որ վախ չէր, ահ էր:

Պսակուեր էին ու եկեղեցիէն տուն եկեր:

Մենեակին մեջտեղը, քուրսիին¹⁵ վրայ հարսանեկան սենին էր, պտուղով եւ տեսակ-տեսակ քաղցրաւենիքով ծանր: Յարութիւնը նստեր էր սետիրին անկիւնը,- որ ի՛ր անկիւնն էր, յետոյ պիտի գիտնար Հայկանոյշը,- ինք ալ նստեր էր միւս անկիւնը, կրցածին չափ փեսայէն հեռու:

Լռութիւնը կը ծանրանար:

-Հայկանոյշ, դանակ ունի՞ս:

Անակնկալ ձայնէ՞ն, լռութեան ծանրութենէ՞ն թէ դանակին անունէն նորահարսը սարսափահար եղեր էր:

«Ի՞նչ մընընի դէնէկը» մտածեր էր:

Նոփ-նոր հագուստին գրգայանը դանակ մը կար (յետոյ ամէն յիշելուն կը զարմանար՝ ո՞վ դրեր էր այդ դանակը իր գրգայանը, եւ ինչո՞ւ). հանեց դողացող ձեռքերով, հասակին ամբողջ երկարութեամբ բարձրացաւ սետիրին վրայ, օրօրուէլէն հասաւ փեսային եւ դանակը երկարեց, յանկերգի պէս կրկնելով միտքէն՝ ի՞նչ մընընի դէնէկը ...

Ամուսինը առաւ դանակը, նայեցաւ իրեն ոտքերէն մինչեւ գլուխը եւ ժպտեցաւ. ժպիտը լայնցաւ, դարձաւ քրքիչ եւ պայթեցաւ որպէս անգուսպ, ժայթքող խնդուք:

-Բայց ինչո՞ւ սետիրին վրայէն եկար. գետինը լայեղ¹⁶ չէ՞ քէլքիդ...

Հազիւ հասկցեր էր ամուսնոյն ըսածը. բայց ի՞նչ մընընի դէնէկը...

-Խնձոր մը տուր, կեղուեմ...

Ուրեմն խնձո՞ր պիտի կեղուե՞... շփոթահար, ամօթէն կասկարմիր կտրած Հայկանոյշը իջաւ սետիրէն վար, խնձոր մը բերաւ սենիին վրայէն ու տուաւ Յարութիւնին:

Յետոյ յաճախ խօսեր էին այդ մասին. այսինքն ամէն անգամ Յարութիւնը յիշեր էր իր չոփ-չոր հասակը սետիրին վրայ եւ խնդացեր, լիաթոք: Բայց իր մէջ ծնած ահը ապրեր էր: Այսօր կրկին կը հաստատէր, որ ապրեր էր ու կը շարունակէր ապրիլ:

-Իրաւ ես, Հայկանոյշ, լաւ քաղաք է, բարի, առատ. կ'ըսեմ մնա նք,- ըսաւ ուշացումով, բառերը մէկ-մէկ արտասանելով, կարծես նոր կը մտածէր,- ի՞նչ կ'ըսես:

-Դո՛ւն ըսէ,- ըսաւ վերջապէս Հայկանոյշը:
Կարեւորը մնալն էր: Որոշում առնողը ո՞վ էր, երկրորդական
հարց էր:
Մնացի՛ն:



*Յարութիւն Գազանձեան եւ Հայկանոյշ Մոսձեան-Գազանձեան, իրենց
զաւակներուն՝ Զապէլի, Գառնիկի եւ Յովհաննէսի հետ. 1904.*

ՆԷՆԷ ՀԱՅԿԱՆՈՅՇՄ

Նենե Հայկանոյշը մեծ մայրս ըլլալու կողքին նաեւ տաքուկ գիրկ մը եղած է ինծի համար, ուր կը վազէի թաղել դէմքս եւ արցունքներս ամէն անգամ, որ կեանքը ցաւցնէր զիս:

Փոքր էի եւ այդ օրերու ցաւը որ կը զգայի խիտ կերպով, մօրս բացակայութիւնն էր, երբ կ'ուշանար գործէն տուն գալու:

Արեւ թէ անձրեւ, կը կենայի պատշգամին այն անկիւնը, ուրկէ անմիջապէս կրնայի տեսնել զինք, երբ լայն պողոտային վերի ծայրէն երեւէր, քալելով գար մինչեւ խաչմերուկը, կտրէր եւ մտնէր մեր թաղը:

-Մի՛ լար, օդո՛ւլ¹⁷, - կ'ըսէր Նենե Հայկանոյշս, - Աստուած պապային աղօթէ՛, ըսէ՛ Աստուած պապա մամաս դրկէ...

Կ'աղօթէի մանտրա մը կրկնելու պէս՝ հաւատքով, ինքնամոռաց:

Բայց մամաս կ'ուշանար: Այն ատեն էր որ կ'երթայի իր գիրկին տաքութեան մէջ հանգստանալ, մխիթարուիլ, ինքզինքս ապահով զգալ:

Սֆինքսի կը նմանէր Նենե Հայկանոյշը, սկիզբէն ալ այդպէս ըսէր էի ես ինծի, թէեւ չեմ գիտեր թէ ուրկէ ծանօթ էի Սֆինքսին, ուր տեսեր էի նկարը, եւ ինչո՞ւ Նենե Հայկանոյշս կը նմանցնէի իրեն:

Մէտիրին¹⁸ ծայրը, փոքրիկ սեղանիկին կողքին, որուն վրայ կը հանգչեցնէր աջ թեւը, մինչ կը քաշէր Տէր-ողորմեային հատիկները մէկիկ-մէկիկ, կը նստէր շիփ-շիտակ, հակառակ իր ութսուն քանի տարիներուն, կոնակը ձիգ, դէմքը անխռով:

Ձեռքերը մագաղաթի գոյն ունէին, չոր էին եւ կոնծած, բայց կը սիրէի այդ ձեռքերուն գուրգուրանքը, տաքութիւնը անոնց:

Ամէն անգամ որ դրան զանգը հնչէր ու ես վազէի դէպի դուռը, կը սաստէր.

-Համբերէ՛, օդուլ, նայինք ո՞վ է...

Յետոյ կը հարցնէր.

-Ո՞վ է:

Զինք չճանչցողը պիտի չգիտնար իր կոյր ըլլալը, այնքան ինքնավստահ էր ձայնը՝ ո՞վ է...

Յիսուսի կեանքին պատմութիւնը առաջին անգամ իրմէ լսեր եմ. կ'երեւի հինգ տարեկան էի. ու երբ հասեր է Յիսուսի Խաչելութեան դրուագին, ես ձայնս ձգած սկսեր եմ այնքան լալ, որ Նէնէ Հայկանոյշը, ճարահատ, ըսեր է.

-Մի՛ լար, օղուլ, սուտ ըսի, չխաչեցին... մի՛ լար...

Նէնէ Հայկանոյշը շատ լաւ հեքեաթասաց էր: Այնպէս համով էին բառերը իր լեզուին վրայ, այնպէս աղուոր կը համոզէր իր պատմածով, որ ես երկու օր շարունակ կ'ապրէի հեքեաթին մէջ, հերոսուհիին հետ:

-Նէնէ՛, պատմէ՛:

-Ո՛րը, օղուլ...

-Այդ երեկուանը:

-Պատմեցի, օղուլ...

-Նորէն պատմէ...

Եւ նորէն կը սկսեր, ծայրէն, այս անգամ ուրիշ մանրամասնութիւններով, ուրիշ բառերով, որոնք նոր պատկերներ կը շինէին երեւակայութեանս մէջ ու զիս կ'ապրեցնէին նոյն հերոսուհիին տարբեր տազնապներով:

Ի վերջոյ նոյն պատմութիւնն է, տարբեր բառերով, տարբեր տազնապներով. գետին մասին, ուրկէ ամէն պահ նոր, տարբեր ջուրեր կը հոսին եւ լերան, որ ամէն օր տարբեր խոկումներ ունի մարդիկը դիտելով: Եւ մարդոց մասին, որոնք տարբեր օրեր կ'ապրին ու կը միանան կեանք ըսուածին մէջ:

Նէնէիս բոլոր պատմածները մոռցեր եմ. ոչ իսկ մէկ բառ. ոչ իսկ հերոսուհիին անունը:

Որմէ՞ սորվեր էր մեծ-մայրս իր հեքեաթները: Ի՞նչ մեծ-մօրմէն, ձիւն-ձմեռ իրիկուններուն, թոնիրին քուրսիին¹⁹, տակ հաւաքուած, մրափելով-արթննալով, չկարենալով ճշդել՝ ո՞րն է իրականը՝ քուրսի՞ն, ձիւնը, թէ՛ հեքեաթի իշխանուհին: Ի՞նչ էր տարբերութիւնը. իշխանուհին ալ բանտարկուեր էր պալատին մէջ, օրէնքներու ձիւներով շրջապատուած: Բայց սկիզբն էր դեռ ճամբուն եւ ճամբան երկար էր, շա՛տ երկար...

Մէտիրին անկիւնը նստած, ափերը ծունկերուն, անոնցմէ Երուսաղէմի ձիթապտուղի կուտերով համրիչը կախած, Ապու-Սըմպոյլի արձանի տպաւորութիւն կը ձգէր: Դէմքը մագաղաթ, ինք՝ անվերձանելի ձեռագիր. ես ութը տարեկան, ի նչպէս

կարդայի իր ութսուն տարիները...

Իսկ հեքեաթները չկային. փախեր գացեր էին. ու՛ր. ու՛ր.

-Նենե՛, բան մը պատմե՛...

-Էհ...- ձեռքը շարժեց ու կողին վրայ երկնցաւ: Շատ յոգնած կ'երեւեր՝ երագիս մէջ:

-Նենե՛, պատմութիւն պատմե՛...

Մեր միջեւ այլ տեսակի մտերմութիւն մը կար, մեծ-մայր-թոռնիկ յարաբերութիւնը հարստացնող կարծես. երկուքս ալ իրարու պէտք ունէինք, իրարմով կ'ըլլայինք երբ մայրս՝ նոյնքան կարետոր Նենե՛ Հայկանոյշիս, որքան ինձի համար, տունը չըլլար:

Հաւանաբար այդ էր պատճառը, որ երբ մայրս կանչեց զիս եւ ըսաւ.

-Մեծ մաման մեռաւ, ա՛լ տուն պիտի չգայ...

Արցունքի չվերածուող տխրութիւն մը ծանրացաւ վրաս:

Կը յիշեմ պահը. մեր տան դէպի խոհանոց տանող անցքին մէջ էի: Նայեցայ դէպի մօրս ննջարանը, որուն պատշգամի դռնէն արեւը ինկեր էր ներս:

Նայեցայ մե՛ծ տխրութեամբ, մտածելով՝ «հիմա ի՞նչ ընեմ»...

Յանկարծ ճառագայթը մեղմօրէն թղթոաց ու ես լսեցի Նենե՛ Հայկանոյշիս քաղցր ձայնը.

«Օդո՛ւլ, մի՛ նեղուիր, ես շա՛տ հանգիստ եմ...»:

Նենե՛ս ուրեմն կը տեսնե՛ր զիս. ուրեմն ա՛լ կոյր չէ՛ր...

Այս մտածումը իր հանդարտ ձայնին միացաւ եւ ա՛լ չնեղուեցայ:

ՀԱՅԴՍ

Երբեմն մեր հարազատները չեն զգար մեր զոհողությունը եւ իրենց յաջողությունները կը վերագրեն բախտին, ճակատագրին կամ իրենք իրենց: Այդպէս պատահեր է հօրս եւ իրմէ փոքր եղբօր պարագային:

Հատ ու կենտ յիշատակներ ունիմ հօրմէս, կարծես բնաւ նոյն տունը ապրած չըլլանք այդքան երկար տարիներ, գոնէ քառորդ դար:

Լռակեաց (հայրս տիգրանակերտցի էր), կարգապահ, շատ ինտելիգի եւ հնարամիտ, բայց մե՛ծ ափսոսանք մը պահած սրտին խորը տեղ մը, որուն մասին միայն մէկ անգամ արտայայտուած է՝ «Ես դպրոցէն դադրեցայ, որ Գառնիկը շարունակէ»:

Ինք իր հօր հետ ձեռք ձեռքի նախ շերամաբուծութեան, ապա մետաքսագործութեան գործը շարունակեր էր: Գառնիկը, իրմէ փոքր եղբայրը, նոյնքան ինտելիգի եւ հնարամիտ, երկրաչափ, կեանքի առաջին քառորդին իսկ մեծ դիրքի հասեր է օդանաւային ֆրանսական ընկերութեան Air France-ի շինարարութեան տնօրէնը դառնալով, պաշտօն, գոր պահեր էր մինչեւ թոշակառու ըլլալը:

Այդ օր հօրս հետ ես ալ զգացեր էի իր ափսոսանքը եւ ՇՍՏ ցաւեր էի իրեն համար: Մեր ընտանիքին մէջ եւ բոլորիս համար ուսումը շատ կարեւոր եւ էական եղած է միշտ:

Փոքրիկ ձեռքս հօրս մեծ ափին մէջ, ցատկոտելով կ'երթամ հանրային պարտէզ. կը ցատկոտեմ նաեւ որովհետեւ կ'ուզեմ քայլ պահել իր մեծ քայլերուն հետ. հազուստիս կարճ փէշը վեր-վար կ'ընէ քայլերուս հետ:

Հայրս ալ շատ ուրախ է. ատիկա կը զգամ իր հազուադէպ ու պայծառ ժպիտէն. աչքերը կը փոքրանան, իսկ անոնց կապոյտը աւելի կը կապուտնայ կարծես, լուսաւորելով դէմքը:

Հանրային պարտէզէն մեր վերադարձը սակայն նոյնքան զուարթ չէր. ինկեր էի եւ ծունկս քիչ մը քերծուեր էր: Հայրս հաշիւը կ'ընէր մօրս բարկութեան, իսկ ես գրեթէ պիտի լայի, որ այդքան արագ տուն կը վերադառնանք:

Իրապէ՛ս ալ մայրս շատ բարկացաւ եւ ասիկա վերջակէտ դրաւ հօրս հետ մեր պտոյտներուն: Այսօր կը մտածեմ՝ մայրս կրնար ինծի կարճ փէշի փոխարէն տափատ մը հազցնել չէ՞... եւ ծունկս չէր քերծուեր:

Այլ յուշ մը, բաւական յստակ, կամացուկ մը վեր կ'առնէ գլուխը:

Հայրս կանգնեցուցեր է զիս արթողի մը վրայ եւ կը թելադրէ որ բազմապատկութեան աղիւսակը ըսեմ.

-Հատէ՛, սկսի՛ր, երկու անգամ մէկ...

Ամբողջ աղիւսակը պէտք է ըսեմ. երբեմն կ'ըսեմ, թէ եւ եօթը եւ ութը չեմ սիրեր, մանաւանդ 7x8 եւ 8x7: Ուրիշ ատեններ շատ արագ կը յոգնիմ:

-Ձգէ՛, Յովհաննէս, մեղք է չոճուիսը²⁰, - կ'ըսեն չորս կողմէն:

-Չէ՛ չէ, շատ լաւ գիտէ,- կը պատասխանէ հայրս հպարտութեամբ:

Իրապէ՛ս լաւ գիտէի աղիւսակը, որ յետոյ, դպրոցին մէջ շատ օգտակար եղաւ ինծի:

Շատ ժուժկալ էր հայրս եւ շատ կը սիրէր պատմել պատմութիւնը ստամոքսի ցաւով տառապող թագաւորին.

«Երկրին չորս կողմէն բժիշկներ կու գան, բայց մէկը չի հասկնար թէ ի՛նչ է թագաւորին ցաւերուն պատճառը: Օր մըն ալ հովիւ մը կու գայ: Թագաւորը թերահաւատութեամբ կը դիտէ կոշտ ու թիկնեղ հովիւը, բայց քանի յուսահատ է, կ'ընդունի լսել հովիւին ըսելիքը:

-Թագաւոր ապրած կենայ, նախ պէտք է ինծի աղուոր ընթրիք մը տաս...

Երբ ընթրիքի սեղանը պատրաստ կ'ըլլայ զանազան համադամներով, հովիւը կաթսայ մը կը կը պահանջէ եւ իւրաքանչիւր տեսակէ պատատ մը կը դնէ կաթսային մէջ, յետոյ երկրորդ կաթսայի մը մէջ մէկ հատ խաշուած հակիթ կը դնէ, ապա երկուքին ալ բերանը փակելով, կ'ըսէ.

-Տէր թագաւոր, հիմա երկուքս ալ կրնանք քնանալ:

-Հապա դարմա՞նը,- կը զարմանայ թագաւորը:

-Այսօր քնանանք, վաղը առաւօտուն կ'ըսեմ,- կը պատասխանէ հովիւը:

Թագաւորին ճարը ի՛նչ. սուսիկ-փուսիկ կ'երթայ քնանալու:

Արաբները կ'ըսեն՝ անօթութիւնը անհաւատ կը դարձնէ... Ես կ'ըսեմ՝ ցաւն ալ մեղանչել կու տայ մարդուն...

Առաւօտուն երբ կ'արթննան, հովիւը բերել կու տայ երկու կաթասները, դնել կու տայ թագաւորին առջեւ եւ կ'ըսէ որ բանայ:

Թագաւորը կը բանայ առաջին կաթասն եւ զգուանքով երեսը անդին կը դարձնէ. տարբեր համադամներ պարունակող կաթասային փակ կափարիչին տակ ուտելիքները արուեր, նեխեր եւ զարշահոտ դարձեր էին: Կը բանայ երկրորդ կաթասն եւ, ո՛վ զարմանք, հակիթը կարծես նոր խաշուած, ուտուելու կը սպասէր:

-Թագաւոր ապրած կենայ, ստամոքսդ ալ այսպէս է. ուտելիքդ մի՛ խառնէր, ամէն ժումի մէկ տեսակ կեր եւ ձիու առողջութիւնդ կը վերագտնես...

Հայրս այս պատմութիւնը խորունկ համոզումով կը պատմէր, որովհետեւ ինք եւս ճիշտ նոյն ձեւով կը դասաւորէր մանաւանդ իր ընթրիքը՝ կա՛մ հաց եւ ձիթապտուղ, կա՛մ հաց եւ զահթեր, կամ հաց ու պանիր եւ այսպէս:

Դաշնամուրի դաս առնելու սկսելէս քանի մը տարի ետք, երբ հիւրեր ունենայինք, անպայման կը պահանջէին «բան մը նուագէ մեզի»:

Ի՞նչ կրնայի նուագել. հայկական երգեր չէր սորվածս, վստահ էի նաեւ, որ նուագելիքս զիրենք պիտի ձանձրացնէր: Կը մերժէի: Սորվեր էի սենեակէն խոհանոց փախչիլ, երբ սուրճերը կը խմուէին եւ հիւրերը, զրոյցի բոլոր նիւթերը սպառած կը դառնային՝ «Ո՛ւր է, թող զայ մեզի բան մը նուագէ»:

Երբ շատ չեմուչում ընէի, հայրս բարկացած – հաւանաբար կեղծ բարկութեամբ – կ'ըսէր.

-Մի՛ նուագեր, ես կը նուագեմ,- եւ կ'անցնէր դաշնամուրին առջեւ:

Երբ առաջին անգամ լսեցի իր նուագելը, մեծ եւ խորունկ զարմանք մը ապրեցայ. հայրս ուրկէ՞ սորվեր էր այսքան լաւ նուագել, եւ ի՞նչ էին իր նուագած մեղեդիները...

-Ասոնք *փեշրոֆներ* են,- ըսաւ անգամ մը երբ հարցուցի:

Կը զարմանայի թէ ինչպէ՛ս արեւելեան մեղեդիներուն քառորդական ձայներուն տպաւորութիւնը կը ստեղծէր,

դաշնամուրին կես ձայներուն վրայ մատները խաղցնելով:
Իրապես հմուտ էր եւ մաքուր ականջի տէր:

-Տէր Մկրտիչ մը ունէինք, որ կու գար եւ Չապէլին հարմոնիումի դաս կու տար (Չապէլը մեծ հորաքոյրս էր, հօրմէս ալ մեծ). Չապէլը լալով-ողբալով կը նստէր դասերուն. ես դրան քովէն մտիկ կ'ընէի. յետոյ երբ տէրտէրը երթար, անմիջապէս կ'անցնէի հարմոնիումին առջեւ եւ ըսածները կը փորձէի յիշելով նուագել:

Այդ հարմոնիումը յետոյ փոքր հորաքորջս՝ Մարիին տան մէկ անկիւնն էր, երբեմն ես ալ կը փորձէի նուագել, բայց ոտքերս կարճ էին եւ չէին հասներ ոտնափողերուն: Օր մըն ալ այդ նուագարանը «անյայտացաւ»:

Հայրս նաեւ կատաղի ընթերցող մըն էր, մանաւանդ թոշակատու ըլլալէն ետք. ժամերով կը կարդար, ի՛նչ որ գտնէր տան մէջ:

-Պապաս ինչ ալ աղուոր կը կարդայ,- ըսի օր մը մօրս:

-Էհ,- ըսաւ,- ես սորվեցուցի:

-Ինչու ինք կարդալ չէր գիտեր:

Որքան գիտէի, հայրս նախակրթարանը գերմանական թերումով դպրոց մը յաճախէր էր եւ մինչեւ վերջ ալ տակաւին կը յիշէր գերմաներէն ինչ որ սորված էր. կը յիշէր նաեւ Յունաստանի բոլոր կղզիներուն անունները, եւ ոտանաւոր արտասանելու պէս կ'արտասանէր արագ-արագ: Ինչպէ՛ս ուրեմն կարդալը մօրմէս սորվեր է:

-Երբ ամուսնացայ, հայրդ գործէն կու գար, կը փռուէր տիվանին վրայ եւ Նէնէ Հայկանոյշը իրեն համար գիրք կը կարդար: «Աս տունին մէջ ամէն մարդ ի՛նք կը կարդայ իր գիրքը» ըսի: Հայրդ գնաց ինքն իրեն համար ակնոց մը պատրաստել տուաւ եւ սկսաւ կարդալ:

Արդէն իրեն համար կարդացող ալ չէր մնացեր Նէնէ Հայկանոյշին մահէն ետք:

Ուրեմն այդպէ՛ս... ամէն մարդ իր գիրքը ի՛նք կը կարդայ:

Հայրս նոյնիսկ երազահանը կը կարդար. Երբ. երբ երազ մը տեսնէր, կ'արթննար, անկողնին քովի լոյսը կը վառէր առանց ականջ կախելու մօրս տոտոցին, ակնոցները կը դնէր եւ հանդարտօրէն փնտռելով իր երազը, կը կարդար

բացատրութիւնը եւ հանգստացած, նոյն հանդարտութեամբ կը հանէր ակնոցները, կը գոցէր գիրքը, կը դնէր դարակիին մէջ եւ ի վերջոյ լոյսը մարելով ետ քունի կ'անցնէր:

Հայրս այլ հմտութիւն մը եւս ունէր՝ տան բոլոր մեքենաները ինք կը նորոգէր, կը իւղէր երբ պէտք ըլլար, մանաւանդ հին, ճօճանակով ժամացոյցը, գոր տարին անգամ մը կը քակէր, կը մաքրէր, իսկ ամէն օր, ճիշդ նոյն ժամուն կը լարէր:

Այդ ժամացոյցը մեր տունը գիշերող հիւրերուն գլխուն մեծ, իրապէ՛ս մեծ փորձանք էր, առաջին քառորդ ժամուն մեղեդիին քառորդը հնչեցնելով, յաջորդ քառորդ ժամուն՝ կէսը, ու երբ ժամը ամբողջ ըլլար, կը հնչէր մեղեդիին սկիզբէն մինչեւ վերջ, որմէ ետք կը լսուէին զարկերը, ժամին համեմատ: Պատկերացուցէք մէկը, որ գիշերուան ժամը 11:30-ին հագիւ քունի անցած է - եթէ կըրցած է քառորդները անտեսել - կէս գիշերուան ժամը 12-ին ինչ վիճակի կը մատնուի...

Ես վարժ էի եւ չէի լսեր: Հօրս համար, յետոյ նաեւ մօրս համար անքուն գիշերներու մխիթարանքն էր այդ ժամացոյցը. կ'արթննային եւ համբերանքով կը սպասէին ժամացոյցին զարկերուն, գիտնալու համար թէ ժամը քանի՞ն է...

Հօրս մահէն ետք յաճախ կը մոռնայինք լարելու զայն: Ի վերջոյ լռեց, ճիշդ ծնողքիս տան պէս, ուրկէ զաւակ ու թոռներ հեռացեր էին:

Օր մը, յստակօրէն կը յիշեմ, ինչպէ՛ս հետ տեղ մը կ'երթայի, երբ մեր դիմացէն բարձրաստիճան ոստիկան մը կու գար, ուղղակի ինչպէ՛ս հօրս աչքերուն նայելով. մարդը կարծես մտահոգ էր եւ մտազբաղ, կարծես քիչ մըն ալ աչքերը սառեր էին, բայց հայրս այդ նայուածքին տակ շատ ամուր սեղմեց ձեռքս, ցաւցնելու չափ ամուր, եւ արագացուց քայլերը: Նայեցայ իրեն եւ մտածեցի՝ «ինչո՞ւ կը վախնայ կոր, բան մը չըրինք»:

Այդ փոքր տարիքիս 7-8 տարեկան պէտք էր ըլլայի, ինչպէ՛ս զգացեր էի ինչպէ՛ս վախը, չեմ գիտեր, բայց զգացեր էի: Այդ տպաւորութիւնը մէջս մնաց երկար ժամանակ, մինչեւ որ կըրցայ եւ ինծի համար բացատրութիւն մը գտնել՝ հաւանաբար արիւնով փոխադրուած վախ մըն է:

Բայց ինչ կը նշանակէ «արիւնով փոխադրուած», երբ հայրս, ինչպէս եւ իր հայրը ջարդ եւ գաղթականութիւն չէին տեսեր: Հօր

քեռին էր միայն՝ Մկրտիչ Մումճեանը, որ ապրեր էր այդ սարսափները, երբ իրենք արդէն Հալէպ եկեր էին, նախ Իսքէնտէրուն, հոնկէ ալ ծովով Ամերիկա երթալու ծրագիրով ...

Հայրս Համաշխարհային երկու պատերազմները, Պաղեստինի գրաւումը, Լիբանանի եղբայրասպան կռիւները, Սուրիոյ գործարաններուն պետականացումը, Կիպրոսի զաւթումը, Պէյրութի քաղաքացիական պատերազմը, Իրանի շահին գահընկեցութիւնը, միամօր դուստրին պսակը, երկու թոռներուն ծնունդն ու բազմաթիւ ազգական-բարեկամ-ընկերներու մահը տեսած մարդ էր:

Յետոյ ինք ալ մահացաւ Կիրակի օրուան մը իրիկուան, Հայաստանի երկրաշարժէն քանի մը ամիս առաջ:

Դեկտեմբերին Կաղանդի մեր մեծ ծառը դրեր էի նստասենեակը եւ որոշէր էի չզարդարել. արդէն վրայ հասեր էր երկրաշարժը. եւ մեր մեծ եղեւիւնը կեցած էր սենեակին մէջ տխուր ու սգաւոր, բայց իր հետ կտոր մը անտառ բերած մեզի, կտոր մը բնութիւն ու շա տ խաղաղութիւն: Այդքան ցաւի մէջ պէտք ունէինք խաղաղութեան եւ յոյսի, կանաչ յոյսի:

Մէկ օր առաջ, Շաբաթ օր ես ու հայրս նստեր էինք դէմ դիմաց եւ երկուքս ալ լռեր էինք, ծանր խոհերո՞վ բռնուած թէ նախազգացումի մը զոհ... Հայրս կը դիտէր զիս, ո չ, զիս չէ, այլ իմ մէջէս դէպի այն կողմ՝ ետե՛ւս թէ գլխուս վրայ տեղ մը կը նայէր տարօրինակ նայուածքով՝ քիչ մը խաղաղ եւ նոյնքան տագնապահար. յետոյ սկսաւ խօսիլ:

Հայրս սովորութիւն ունէր իր մտածումները բարձրաձայն արտայայտելու, ինքն իր հետ խօսողի տպաւորութիւն ձգելով. հաւանաբար կեանքի վերջին տարիներուն միս-մինակ մնացած, կը կարօտնար մարդիկը, որոնց հետ վարժ էր զրուցել:

Երբ սկսաւ խօսիլ ու ես հասկցայ որ ինծի չէր ուղղուած իր խօսքը, այնպիսի տագնապէ մը բռնուեցայ, այնպէս վախցայ, որ դուրս ելայ սենեակէն... Միսա լ ըրի արդեօք... չեմ գիտեր:

Յաջորդ օրը մեռաւ:

Մայրս կը պատմէր իրենց միասնական կեանքին վերջին պահը.

-Ընթրիքի նստեր էինք, երբ հայրդ ըսաւ՝ «Արուսեա՛կ, այս կեանքին մէջ ամուսնանալ պէտք էր, ամուսնացանք, զաւակ

ունենալ պետք էր, ունեցանք, եկուր երթանք...»: Ես ալ ըսի՝ դուն երթալ կ'ուզես, գնա՛, ես դեռ հոս եմ: «Արուսեա՛կ, այսքան տարի միասին ապրեր ենք, եկուր՝ միասին երթանք», ճանրմ, դուն երթալ կ'ուզես, գնա՛, ե՛ս դե՛ռ հո՛ւ ե՛մ... Ընթրիքը հաւաքեցի, խոհանոց գացի պնակները լուալու, ինք բաղնիք գնաց լուացուելու եւ յետոյ ննջարան: Ձեռքերս կը լուայի, երբ կանչեց «Արուսեա՛կ, եկուր, բան մը կ'ըլլամ...»: Մինչեւ գացի, վերջացեր էր: Հանգիստ մահ, երանի ե՛ս ալ այդպէս հանգիստ երթամ...

Հայրս մօրմէս բաւական մեծ էր տարիքով. օր մը հարցուցի.

-Ի՞նչ խելքով այդքան պզտիկ աղջկայ մը հետ ամուսնացար:

-Միջնորդը ըսաւ՝ 27 տարեկան է. ես ալ մտածեցի՝ միջնորդները միշտ ալ աղջկան տարիքը կը պզտիկցնեն, ուրեմն 30 տարեկան ըլլալու է:

Մայրս հօրմէս 24 տարի ետք մեռաւ, այդպիսով կարծես փակելով հսկայ տարբերութիւնը, որ կար իրենց միջեւ՝ 23 տարի:

ԵՌՈՏԱՆԻ

ՄԿՐՏԻՉ

Ֆէսը ճակատին իջեցուցած, մեծ եւ արագ քայլերով անցաւ Սուլէմանիէ փողոցը: Շունչ առաւ միայն Ճիտէյտէի սկիզբը: Չմտաւ: Այս ժամուն փողոցը խճողուած կ'ըլլար ապրանք բերած գիւղացիներով, վաճառականներով, կիներով:

Ճիտէյտէն շատ նման էր իրենց շուկային. խճողումէն աւելի այդ նմանութիւնն էր, որ չէր սիրեր: Ցաւ ցաւ ...

Քայլերը դանդաղեցուց: Կը նախընտրէր մտնել Հարթ Սիսիէն, ուր սսեցիներն էին: Հիմա մէկ-երկու ընտանիք այլ երկրացիներ եւս կային, բայց թաղը կնքուէր էր Հարթ Սիսի:

Կը սիրէր սալայատակը, փոքր դռներուն վրայ դէպի դուրս, տախտակեայ պատուհանները, որոնք խիստ ներքինիներու պէս նայուածք չեն անցըներ, բայց որոնց ետին կեցողը ամէն անցուդարձ կրնայ դիտել ազատօրէն:

Գլուխը վերցուց. անցեր էր Հարթ Սիսիին մուտքը. զարար²¹ չկայ, յաջորդէն Հարթ Զէպպէլէն կը մտնէ. ինչո՞ւ Հարթ Զէպպէլ. գիտցած քանի մը բառ արարբերէնը, որ աւելի օսմաներէն է քան արարբերէն, զէպպէլը աղբահաւաք կը թարգմանէ. ինչո՞ւ Հարթ Զէպպէլ:

Մտաւ թաղը, որ առաւօտեան այդ ժամուն օճառաջուր կը հոտէր. դռները կիսաբաց էին, եւ անոնցմէ դուրս բոբիկ կիներ լուացած բակերէն ջուրը դէպի դուրս կ'ալլէին:

Խոր-խոր շնչեց, աչքերը փակ. յուշեր խլրտեցան կոպերուն տակ:

-Քա ամա՛ն, մայրիկ Աստուածածին ...

Աւելը ինկաւ կնոջ ձեռքէն, օճառաջուրը ցատկեց Մկրտիչին քիթին-բերնին: Ցնցումով բացաւ աչքերը:

Դէմը կիներ մըն էր, միջահասակ, գլխուն եագման, թեւերը քշտած, դէմքը՝ սա պատի պատանան՝²² ճեփ-ճերմակ. ոգի տեսէր էր:

-ԱՖ ըրեր ես, խանում,- Մկրտիչը ձեռքը ֆէսին տարաւ եւ քայլ

նետեց:

-Մայրիկ Աստուածածին,- կրկնեց կինը,- քա դուն Մկրտիչը չե՞ս ...

-Մկրտիչն իմ, հա,- կմկմաց Մկրտիչը եւ մտածեց՝ սա կնիկը անունս ուրկէ՞ գիտէ:

-Քա դուն իմ էրիկս Մկրտիչն ես, վա՛յ... չես մեռեր... վա՛յ մայրիկ Աստուածածին...

-Ի՛նչ,- Մկրտիչը շանթահարուեցաւ. ոտքը, որ քայլի պատրաստ էր, ընկրկեցաւ, ֆէսը թռաւ գլուխէն, ինկաւ օձառաջուրին մէջ:

-Ամա՛ն, ֆէսը,- կինը ծռեցաւ ֆէսը վերցուց, փեշով փորձեց սրբել. պատճառ կը փնտռէր մարդուն երեսը չնայելու:

-Արշալո՛յս,- Մկրտիչին սիրտը պիտի պայթէր:

Միտքը ինքզինք փակեց:

* * *

Միտքը ինքզինք փակեց եւ բացուեցաւ այլ տարածքներու վրայ:

Տիգրանակերտէն Այնթէպ ճամբան երկար էր: Երբ հասաւ (պատմութիւնը չ'ըսեր թէ ո՞ր գիւղը), յոգնած էր այնքան, որ կարծես պիտի զոջար գալուն. Տիգրանակերտի մէջ գործ չկա՞ր. ի՛նչ ըլլար կ'ընէր:

Գիւղին փողոցները պաս-պարապ էին, թէեւ տակաւին յետ-միջօրէ էր, ժամը հինգ. նոյնիսկ խանութները փակ էին:

Ոչ բոլորը: Խանութներէն մէկուն առջեւ տարիքոտ մարդ մը ճիգ կը թափէր կողպէքին կեռը անցընելու եւ կարծես չէր յաջողէր: Մկրտիչը մօտեցաւ.

-Թող էս էնիմ:

-Տիգրանակերտէ՞ն ես. ե՞րբ եկեր ես,- մարդը անմիջապէս գիտցաւ բարբառը:

-Չըմմի: Օգնի՛մ:

-Էի էի էի ծերութիւն:

Մկրտիչը սեղմեց երկաթեայ երկու լեզուակները իրարու եւ կեռը անցուց:

-Ըհր՛: Որտե՞ղ ին՛ մարդիկ:

-Կիները՝ տուն, տղամարդիկ՝ ժողովի: Յոյս չունենամ. Ադան ըսածը կ'ընէ:

-Ո՞ր ըսեծը. ո՞ր Ադէն:

Ծերուկը ժպտեցաւ. տիգրանակերտցի այս տղուն հայերէնը ականջին խորթ կը հնչէր. իրենց հայերէնը ո՞ր. էհ, գոլէճ ունենալը բան կը նշանակէ:

-Անունդ ի՞նչ է,- Էրտէշէ՞ս, Յերութի՞ն,- ծերուկը կը շարունակէր ժպտիլ:

-Մկրտիչ,- ըսաւ, առանց ժպտիտին կարեւորութիւն տալու:

-Բախտդ լաւ է եղեր,- խօսեցաւ ծերուկը,- ուշացայ, ուշացայ: Ո՞ր կ'երթաս:

-Ը՛... չիմ գինայ ...

-Չե՞ս գիտեր ուր եկեր ես:

-Ըղորդ ըսիմ՝ չէ՛:

-Ինչո՞ւ եկեր ես,- լրջացաւ ծերուկը:

-Էկիր իմ գործ նայեմ:

-Ի՞նչ գործ:

-Չիմ գինայ. ի՞նչ էղնի:

-Ուշացայ, շա՛տ ուշացայ,- տազնապէցաւ ծերուկը,- եկո՛ւր:

Մկրտիչը չհարցուց ուր, չհարցուց ինչու: Զգացեր էր որ խօսք-խորաթան սիրող մարդ էր: Քայլ պահեց ծերուկին հետ:

-Չես ըսեր ինչո՞ւ է թաղը-թաղով փակ: Ադան լուր դրկեր է՝ Ստեփանին աղջիկը կ'ուզէ:

-Կի՛ն էղնի Ադային:

Ծերուկը իւր ձայնով խօսեցաւ Մկրտիչին, որ չհասկցաւ թէ ի՞նչ սխալ խօսեր էր:

-Կնութեա՛ն ... երանի չէ՞ր ըլլար ... ա՛յս գիշերուան ...

Մկրտիչը հազիւ զսպեց ինքզինք. իրենց քով նման բան չէ՛ր ըլլար ... արդեօք կ'ըլլա՞ր ... թերեւս կ'ըլլար եւ ինք լուր չէր ունենար:

Քանի մը թաղերէ անցան, բոլորն ալ փակ դռներով, ու հասան եկեղեցի:

Բակը բերնէ բերան լեցուն էր: Քար լռութիւն: Կարծես թաղում կար: Նոյնիսկ աղօթքի մրմունջ եւ խունկի հոտ չկար: Մկրտիչին մարմնէն սոսկում անցաւ:

Երբ բակ մտան, ժողովուրդը յարգանքով ճամբայ բացաւ ծերուկին. Մկրտիչը հետեւեցաւ մինչեւ առջեւ:

-Բարով եկար, Կարապետ էֆէնտի,- ըսաւ Տէր Հայրը,- երանի բարի բերած ըլլաս:

-Ի՞նչ որոշումի հասաք:

-Ոչ մէկ. մոլորեր ենք. Աստուած իր լոյսը խաբանէր է մեզմէ ... Տէ՛ր, մեղք չհամարես ... բայց այդ աղջկան մեղքը ո՞րն է:

-Ես ... կ'առնիմ զինքը կին,- ըսաւ Մկրտիչը ու զարմացաւ՝ ի՞ր ձայնն էր, ի՞նքն էր խօսողը. յետոյ սուկաց ու մարմինը դող ինկաւ:

-Ո՞վ է, ուրկի՞ց է, Կարապետ էֆէնտի,- Տէր Հայրը նոր անդրադարձաւ օտարականին,- լրտես չըլլայ,- կամացուկ մը խօսեցաւ Կարապետ էֆէնտիին ականջին, եւ կրկին քննեց երիտասարդը ոտքէն գլուխ:

-Չէ՛, Տիգրանակերտէն է. ի՞նչ ըսիր,- դարձաւ Մկրտիչին,- կ'առնե՛ս:

Մկրտիչը քայլ մը ետ գնաց, զարնուեցաւ հաւաքուածներուն, որոնք զինքը ետ առջեւ հրեցին:

Կարապետ էֆէնտին առանց պատասխանի սպասելու դարձաւ ժողովուրդին.

-Այս երիտասարդը, որ Տիգրանակերտէն եկեր է, ի՞նչ է անունդ, հա՛, Մկրտիչ, այս տիգրանակերտցի Մկրտիչը կ'ըսէ թէ կնութեան կ'առնէ Արշալոյսը եւ իր հետ Տիգրանակերտ կը տանի: Տէր Հայր, երթա՛նք, պսակե՛նք:

-Երթանք, Էֆէնտիս, երթա՛նք, Աստուած, փառքդ շատ ...

Հաւաքուած ժողովուրդը խորունկ շունչ քաշեց. շատեր կը խաչակնքէին, ուրիշներ կ'աղօթէին: Տէր Հօր եւ Կարապետ էֆէնտիին հետ եկեղեցւոյ բակէն դուրս ելան եւ ճիւղաւորուող թաղերուն մէջ ցրուեցան:

Տարին՝ 1912:

ԱՐՇԱԼՈՅՍ

Մայրը ամուր սեղմեր էր աղջիկը կուրծքին եւ խորունկ հեծկլտոցներով կու լար:

Տան երկու սենեակներուն պատուհանները ամուր փակեր էին եւ ծանր վարագոյրները վար ձգեր: Կիսամութ էր:

-Կողպէքը դրի՞ր,- հարիւրերորդ անգամ հարցուց աղջկան: Գիտէր որ ոչ մէկ կողպէք կրնար դէմ դնել Աղային կիրքերուն: Գիտէր որ քանի մը ժամէն երբ գային Արշալոյսը տանելու, եթէ իրենք չբանային դուռը, տանողները դիւրաւ կրնային կոտորել դուռ ու պատուհան ու տանիլ աղջիկը: Ի՛նչ տուն, ուր տղամարդ չկայ, ո՛չ ամուսին, ո՛չ մանչ գաւակ:

-Մա յր, խեղդուեցայ,- խօսեցաւ Արշալոյսը մանր ձայնով: Մայրը, ցաւին մէջ, աւելի ու աւելի սեղմեր էր զինք:

-Աւելի լաւ չէ՞ր ձեռքերովս խեղդէի քեզ ու Աղային չտայի. աւելի լաւ չէ՞ր չղանայի քեզ, անպտուղ մնայի ու այս օրը չտեսնէի ... գնա ...գնա ...

Եւ հրեց աղջիկը սէտիրին վրայ ու ոտքի ելաւ: Աստուծոյ դէմ, կեանքին դէմ, Աղային դէմ իր անկարող ցաւը աղջկան գլխուն թափեց թափով:

-Ցաւ ու չոր ուտես... սատակդ տեսնէի, այս օրը չտեսնէի...

Աղջիկը, սպառած, փակեց աչքերը: Երէկ առաւօտէն ի վեր, երբ Աղային սպասուհին՝ Ֆերիտէ ապլան լուրը բերեր էր՝ «Արշիլուս աղջիկ, ուրախ ըլլաս, Աղան քեզ հաւներ է», Արշալոյսը յոգներ էր մտածելէն, աղօթելէն, յուսալէն եւ ամէն վայրկեան մահանալէն: Յստակ էր, որ ճար չունէր: Քանի մը ժամէն կու գային, ինք կը դներ լաչակը գլխուն, դուրս կ'ելլէր հօրենական տունէն ու կ'երթար ... ուր արդեօք: Այս մէկ ու միակ ճակատագրական գիշերէն ետք ի՛նչ կը մնար կեանքէն:

-Աղջիկ թակոցները չէ՞ս լսեր, ելի՞ր կ'ըսես:

Արդէ՛ն, հասաւ ի ժամը մտածեց Արշալոյսը եւ աչքերը բացաւ: Քոյրը վազեր դուռը բացեր էր արդէն:

Սենեակին մէջտեղ Տէր Հայրն էր, թաղական Կարապետ Էֆէնտին եւ անձանօթ երիտասարդ մը:

-Մայրիկ ... ,- ըսաւ Արշալոյս կարկամած:

-Մի՛ տագնապիր, աղջիկս, Աստուած ողորմեցաւ քեզի եւ մեր բոլորին եւ իր հրեշտակը դրկեց,- խօսեցաւ Տէր Հայրը եւ նայեցաւ անծանօթ երիտասարդին, որ Մկրտիչ կը կոչուէր. Տէր հայրը դրան առջէն հարցուցեր էր անունը:

Արշալոյսն ալ նայեցաւ Մկրտիչին, որ քիչ մը վախցած եւ շատ շուարած կ'երեւէր: Արշալոյսը չէր յիշեր զինք տեսած ըլլալ եկեղեցին, փողոցը: Աղուոր երիտասարդ մըն էր, քսաներկու-քսաներեք տարեկան. դէմքին վրայ կարծես միայն մեծ աչքերն էին եւ փոքրիկ պէխերը, սեւ եւ առոյգ: Պէխերը առոյգ կ'ըլլա ն, մտածեց Արշալոյսը, միտքէն խնդաց եւ անմիջապէս յիշեց, որ խնդալու ատեն չէ հիմա:

-Արշալոյս, աղջիկս, Մկրտիչը Տիգրանակերտէն եկեր է մեր գիւղը գործ նայելու: Աստուծոյ կարգադրութիւնն է: Հիմա կը պսակենք ձեզ եւ առաւօտ կանուխ ճամբայ կ'իյնաք. որքան հեռու, այնքան լաւ,- ըսաւ Կարապետ Էֆէնտին մէկ շունչով:

Քար լռութիւն: Կիները չէին գիտեր ի՞նչ մտածեն, վերջին երկու օրերուն մտածելու կարողութիւնը կարծես կորսնցուցած: Մայրը սկսաւ լալ:

-Ի՞նչ ըսիր, աղջիկս,- Տէր Հայրը կրկին խօսեցաւ. հարցում չէր.- հատէ եկո՛ւր Մկրտիչին քով կեցիր: Անուն հօր եւ որդւոյ ետզոյնսրբոյ...

Տէր Հայրը արագ-արագ, բառերը ուտելով կ'աղօթէր, վայրկեան առաջ սա աղջիկը Աղային աչքէն հեռացնելու մտահոգութեամբ:

Մայրիկը կը շարունակէր լալ: Պահ մը հեկեկոցը այնքան բարձրացաւ, որ պսակի արարողութիւնը ծածկեց:

-Քիչ մը սուս մնա՛, կնի՛կ,- Կարապետ Էֆէնտին սաստեց: Մայրիկին ձայնը կտրուեցաւ, բայց ուսերը շարունակեցին ցնցուիլ:

-Տէ՛, հիմա էրիկմարդ ունիս տանդ մէջ. Աստուած պահէ՛. մէկ բարձի ծերանաք. մութնուլուսուն ճամբայ իյնաք, չուշանա՛ք...

Տէր Հայրը դուրս ելաւ. Կարապետ Էֆէնտին երկու ոսկի սեղմեց Մկրտիչին ափին մէջ. Մկրտիչը համբուրեց ծերունիին ձեռքը եւ զինք ճամբու դրաւ մինչեւ դուռ:

Երբ սենեակ դարձաւ կիները նոյն դիրքին մէջ սառեր մնացեր

էին:

-Ինչո՞ւ կեցեր էք,- ըսաւ ու նստաւ:

Մայրիկը շատ մօտ նստաւ իր անձանօթ փեսային: Հարսը ոտքի մնաց:

-Արշալուս, նստի՛,- Մկրտիչը սէտիրին իր պարապ կողմը ցոյց տուաւ:

Երկու քոյր միասին շարժեցան:

-Արշալուս, մօտ էկօ, ի՞նչ մընընինք հըմմի:

-Տիգրանակերտցի՛ ես,- զարմացաւ մայրիկը ի վերջոյ լացը դադարեցնելով:

-Հա՛, Տերտէրը ըսաց...,- Մկրտիչը նայեցաւ զինք ուշի ուշով դիտող հարսին եւ ուրախացաւ ի՛նչ աղուոր է:

Տիգրանակէ՞րօտ հարս պիտի երթայի, մտածեց Արշալոյս եւ Ադան յիշեց. ո՞վ ալ ըլլայ, Ադայէն լաւ պիտի ըլլայ անպայման:

-Ի՞նչ մընընինք հըմմի,- կրկնեց Մկրտիչը:

Աղջիկները մօրը նայեցան:

-Դո՛ւն ըսէ, դուն ես հիմա մեր գլուխը,- ըսաւ մայրիկը եւ բոլորը միասին հանգիստ-հանգիստ սպասեցին:

Մկրտիչը, որ տասնըհինգ տարեկանէն աշկերտ եղեր էր իրենց գիւղի դարբինին, նման պարագաներու փորձառութիւն բնաւ չունէր: Պահ մը դէմքը մթնեց: Եկեր էր նոր ու շահաւէտ գործ մը ընելու, եւ հիմա, բան չըրած պիտի վերադառնար, հետն ալ ոչ միայն կին, այլ եւ աներ ու քենի պիտի տանէր: Բայց ո՞ւր: Ունեցածը իրճիթ մըն էր, մայր մը եւ քոյր մըն ալ ինք ունէր:

Լռութիւնը երկարեցաւ. կիներուն հանգստութիւնը սկսաւ խախտիլ:

Ինչ ալ ըլլար, ինք Արշալոյսը այդ թուրք շունին ձգողը չէր: Միտքէն բնաւ չանցաւ, թէ գիւղին երիտասարդները իրենք ինչո՞ւ իր ըրածը չէին կրցած ընել:

-Ելէ՛ք, ինչ կրնաք շալակով տանել հաւքըրտեցէ՛ք-կապեցէք. մութը կոտրելուն կ'երթեմ հաց կ'առնիմ ճամբուն համար ու կ'երթանք:

Կիները ոտքի ելան մոլորած. տուն էր, թէեւ փոքր, բայց տարիներու տուն, ուր կարելորն ու անկարելորը միասին

հաւաքուեր դիգուեր էին: Հիմա գատելը դիւրին գործ չէր. ո՞րը
ձգել, ո՞րը տանիլ:

Մկրտիչը անկիւն մը նստած, զիրենք կը դիտէր: Ճամբան
երկար էր ու վտանգաւոր, երբ երեք կիներ ունիս հետդ: Ուրկէ՞
անցնիլ, ո՞ր ճամբան բռնել:

-Մկրտիչ, լոյսը բացուելու վրայ է, հաց բերելու պիտի
չերթա ս:

Նստած տեղը քուն մտեր էր: Ելաւ, վրան գլուխը շտկեց:

-Արշալուս, թաս մի ջուր կիտէ ս:

Խմեց, եա Աստուած ըսաւ, մօտեցաւ դրան. դարձաւ,
կարօտով նայեցաւ հարսին.

-Չիմ ուշանայ. պատրաստ ըլլիք, հա՞՞:

Եւ դուռը բացաւ:

Երկու զինուորներ բրտօրէն զինք քաշեցին սեմէն:

-Աման մայրի կ...

Կիները անակնկալ կանչէն ցնցուած, սառած մնացին:

-Ո՞ւր,- հազիւ հարցուց մայրիկը:

-Ո՞ւր. ապարանք, մեղրալուսնի,- ըսաւ երրորդ զինուորը, որ
ներս մտաւ, մինչ միւս երկուքը Մկրտիչը քաշքշելով կը տանէին:

-Բանտ, կախաղան: Իսկ դուք հիմա կը չքուիք կը կորսուիք
այստեղէն, թէ ոչ՝ գիտէ ք...

-Բախտս սեւ է, գիտէի,- ըսաւ Արշալոյսը մօրը, առաւ
պատրաստուած կապոցներէն մին, դուրս ելաւ գլուխը ցցած եւ
այնպէս մը աչքերը լարեց, որ սպասող զինուորը ետ կեցաւ ձեռք
նետելու իր մտադրութենէն:

Մայրը տեսաւ, որ այլընտրանք չունի. քաշեց փոքր աղջկան
ձեռքէն եւ մէկական կապոց շալկած դուրս ելան տունէն:

-Ո՞ւր,- հարցուց մայրը Արշալոյսին:

-Տիգրանակերտ, սկեսրանցս տուն:

Լաւագոյն որոշումը թուեցաւ ասիկա մայրիկին:

Արշալոյսը տասնութ տարեկան էր, քոյրը՝ տասնվեց, իսկ
մայրիկը՝ ընդամենը երեսունհինգ:

Տարին՝ 1912:

ԳՈՀԱՐԻԿ

-Ի՞նչ ունիս, Մկրտիչ, տեսակ մը կ'երեւիս այքիս. չըլլա՞յ հիւանդ ես,- ըսաւ Գոհարիկը, երբ տեսաւ որ սուրճը մնացեր է եղածին պէս, իսկ ամուսինը ծանր խոհերոյ մէջ է:

-Հա, չէ...աղջիկը լա՞ւ է:

-Ըսի, չլսեցիր Մկրտիչ. առտուն, երթալէդ ետք շատ լացաւ. դրացիին աղջիկը եկաւ քիչ մը խաղցուց զինք. մայրը ըսաւ՝ օղի դիր փոքրիկին. կարծես խիթ ունի. կտոր մը լաթով օղի դրի, լաւցաւ. Մկրտիչ, չէ ս յետը ինչ կը պատմեմ:

-Հա, չէ, ըսիր լաւցաւ:

-Մկրտիչ, բան մը կայ, ըսէ՛:

-Ի՞նչ էսիմ. օ՛Ֆ...

Գոհարիկին սիրտը ահ ինկաւ: Հազիւ հանգչեր էին, հազիւ իրենց օրերը ձեւ առեր էին: Մկրտիչը, ֆրանսերէն գիտնալուն Հալէպի կայարանը գործի մտեր էր, եւ աղջիկը ծնելէն ետք կարծես ա՛լ մոռցեր էր կախադանի եւ Արշալոյսի պատմութիւնները:

Գոհարիկը գիտէր, որ այդ բաները չեն մոռցուիր. մէջդ տեղ մը պահուած կը մնան մինչեւ մեռնիլդ: Չես մոռնար, կը սորվիս չի՞շել, չմտածել: Օրը կ'ապրիս. վաղն ալ չես մտածեր. մտածելէն ի՞նչ օգուտ. ըլլալիքը կ'ըլլայ: Իր տեսածն ալ քիչ բան չէր: Աչքերնին վախցեր էր:

Գոհարիկը կրցածին չափ լաւ կը նայէր ամուսինին, ճիգ չէր խնայեր. դիւրին չէ, կախադան հասիր, մահը տես: Բայց բախտաւոր մարդ է Մկրտիչը, որ ճիշդ կախուելէն առաջ վրայ հասեր է Մահմանադրութիւնը:

Գոհարիկը դժգոհելու տեղ չունի. լաւ մարդ է, բարի, շատ բարի մարդ է Մկրտիչը. քիչ մը լռակեաց է. ի՞նչ ընենք. մայրը միշտ կ'ըսէր՝ տիգրանակերտցիներուն կիները չէնէսը²³ կ'ըլլան, տղամարդիկը՝ լռակեաց:

Այսօրուան լռութիւնը սակայն ուրիշ է. եւ Գոհարիկին սիրտը կը դողայ կատու տեսած թռչունի պէս:

-Մկրտիչ, սիրտս պայթեցաւ:
 -Կը պայթի՛, Գոհար, կը պայթի՛ ...
 -Ի՛նչ կայ,- շշուկով հարցուց Գոհարիկը:
 -Առաջնորդարանէն կանչեցին:
 -Չըլլայ Արշալոյսին...
 -Հա հա, Արշալոյսը գացեր Սրբազանին պատմեր է. ան ալ՝
 օրինաւորը առաջին պսակն է ըսեր է ...
 -Է՞:
 -Կ'ըսեն՝ պէտք է դառնաս առաջինին:
 -Ի՛նչ. անիկա քեզի կնիկ չէ եղեր... մենք զաւակ ունինք...
 աղջիկ զաւակ ունինք...
 Լռեցին: Մկրտիչը այս բոլորը ըսեր էր Սրբազանին, որ
 կարծես մարդկութենէն շատ բան չէր գիտեր, չէր հասկնար.
 յամառօրէն կրկներ էր.
 -Օրէնքը կ'ըսէ՝ առաջին ամուսնութիւնն է օրինաւորը:

Գոհարիկին ձեռքէն առին աղջիկը, տուին Արշալոյսին:

Պատսպարանի սեմին Գոհարիկը նայեցաւ Արշալոյսին
 գիրկին մէջ լացող, թելերը իրեն անյուսօրէն երկարող աղջկան.
 դժխեմ պատկերներ բացուեցան աչքին, կանչող, աղաչող,
 սարսափահար ձայներ փոթորկեցան գլուխին մէջ. մայր
 ունեցող իր աղջիկը կը որբանար.

-Գիրկդ զաւակ չմնայ,- ըսաւ Արշալոյսին եւ անոր փոխարէն
 մտաւ Պատսպարանէն ներս:

Արշալոյսը վեց զաւակ ծնաւ Մկրտիչին եւ բոլորն ալ հողին
 տուաւ: Անոնցմէ առաջ Գոհարիկին աղջիկը մահացեր էր դեռ
 երեք տարեկան չեղած:

Մկրտիչը ապրեցաւ միսալով աղջկան, մանաւանդ
 Գոհարիկին սերը, այնքա՛ն քաղցր, այնքան գործնական եւ
 իրաւ:

Մկրտիչը շա՛տ ուշ լսեց իրենց համագեղացի Յակոբին
 պատմութիւնը, կրկնօրինակը իր պատմութեան, բայց...

-Երկուքն ալ իմ օրինաւոր կնիկներս են, երկուքին ալ զլխուն
 տէրտէրը կարդացեր է եւ ըսեր՝ մեր եկեղեցւոյ եւ հայրապետնե-

րուն օրէնքով ... ես կնիկներս չեմ ձգեր:

Մինչ կիները կը պատմէին, որ Յակոբը ամէն իրիկուն ամէն մէկ կինը մէկ կողմը առած կը պառկի, «ի նչ գատ տուն, ի նչ գատ սենեակ» ըսեր էր մօրը,

Սկրտիչը սէտիրին անկիւնը քաշուած համրիչը կը քաշէր եւ աղի արցունք կու լար իր Գոհարիկին եւ եօթը զաւակներուն համար:

Գոհարիկը Պատսպարանէն ելեր, Ամերիկա գացեր էր. եղբայրները կանչեր էին, եւ հոն նոր ընտանիք ունեցեր էր: Հայկանոյշ նէնէն եւ իր Լուսիա քայրը ի նչ սիրով կը յիշէին Գոհարիկ հարսը, որ մինչեւ վերջ ալ չէր հասկցած, թէ զաւակը ինչո՞ւ առին. ամուսինը առին, այո, օրինաւորը առաջինն է, բայց զաւակը իրն էր, մայր ունէր, հազարաւոր որբերուն վրայ ինչո՞ւ որբ մըն ալ անելցուցեր էր Սրբագանը, չէր հասկցած:

Բայց վստահ էր, որ աղջիկը, իր կաթէն գրկուած, անօթի մեռեր էր:



*Ձախէն՝ Լուսիա Մումճեան-Թերզեան, Սկրտիչ Մումճեան (1880-1970),
Հայկանոյշ Մումճեան-Գազանճեան (1878-1963)*

ՃԻՎԱՆԸ ՄԻՆՉԵՒ ՀԱԼԷՊ

Յուշը չէ պահած Ճիվանին ծննդեան թուականը, բայց պահեր է անոր կապուած այլ ծնունդ մը՝ թթենին.

-Երբ Ճիվանը ծնաւ, թթենի մը ցանեցի, ըսի՝ մինչեւ մեծնայ տասը տարեկան ըլլայ, կը մագլցի վրան, բարկութենէս փախչելով:

-Ո՞ր տարին էր ատիկա:

-Ճիվանին ծնած տարին:

Յիշողութիւնը չի պատմեր, թէ Ճիվանը ծառ բարձրացա՞ւ հօր բարկութենէն փախչելով,

բայց կը յիշէ գերմանական օդանաւը, որ ինկաւ Խարբերդի տարածքին տեղ մը, եւ օդաչուն փրկուեցաւ գիւղացիներուն հիւրընկալութեան շնորհիւ:

Յետոյ օդաչուն եւս կը կորսուի մոռացութեան բաւիղներուն մէջ, եւ կը մնայ օդանաւը, լքուած, իրենց գիւղին մօտերը տեղ մը:

Ճիվանը տասնչորս տարեկան է եւ նախակրթարանի վերջին դասարանի աշակերտ:

* * *

Գիւղին տղոց խաղավայր դարձեր էր լքուած օդանաւը: Եւ որովհետեւ իրենց խաղը արգիլող չկար, շատ շուտ ձանձրացան անկէ եւ լքեցին գայն:

Ոչ Ճիվանը:

Ամբողջ ազատ ժամանակը հոն կ'անցընէր, օդանաւին շուրջ կը դառնար. ուղեղը տենդահար կ'աշխատէր. ոչինչ կը հասկնար. եթէ հրաշք չէր,- անշուշտ հրաշք չէր, եկողը Յիսուսը չէր, այլ պարզ զինուոր մը,- ուրեմն ինչպէ՞ս այսքան ծանրութիւն օդը կը բարձրանար, հոն կրնար մնալ, ուզած տեղը կ'ուղուէր ու յետոյ...

Յետոյ ի՞նչ կ'ըլլար, կ'իյնա՞ր. ա՞յդ էր վերջը՝ ջախջախուի՞լ:

Անշուշտ ոչ. այս մէկուն փորձանք պատահեր է: Ինչպէս որ կը բարձրանայ, այնպէս ալ կ'իջնէ:

-Ինչպէ՞ս:

Եւ երիտասարդ, Խարբերդի գոլէճը աւարտած ուսուցիչը
բացատրեց: Բացատրեց եւ ճիւղանը հասկցաւ: Հասկցաւ բայց
չհանգստացաւ:

-Փորձէ՛նք,- ըսաւ կամացուկ մը:

-Ի՞նչ փորձել. ո՞չ գործիք ունինք, ոչ նիւթ,- ըսաւ ուսուցիչը եւ
տուն գնաց երազելու Խաթունիկին մասին, որուն կին առնել կը
ծրագրէր: Կու տա՞ն: Ուսուցիչը կը յարգեն, բայց ուսուցիչի
կտորի մը ո՞վ աղջիկ կու տայ: Տուն չունի, կտոր մը հող իսկ
չունի:

Ճիւղանը կը մնայ հոն, օդանաւին շուրջ կը դառնայ, կը չափէ,
կը մտածէ, կը գծէ, նորէն կը չափէ, կը ջնջէ, կը գծէ ...

Եւ օր մըն ալ գիւղացիները իրարու ձայն կու տան.

-Ճիւղանը օդանաւ պիտի թռցնէ:

-Ո՞րը, գերմանացիի՞նք:

Իրարու ձայն կու տան, զիրար կը հաւաքեն ու դաշտ կը
վազեն: Ճիւղանին ընկերները հոն են արդէն: Ճիւղանը մէջտեղ
չկայ:

Գերմանական օդանաւը նոյն տեղն է, արդէն ժանգոտիլ
սկսած:

-Ամմա խաբուիլ է, հա՛ ...

-Խաբուիլն ալ խօ՞սք է, գործ բան ձգեցինք եկանք:

Ոչ ոքի միտքէն անցաւ, որ զիրենք հրաւիրող չէր եղեր, եկեր
էին հետաքրքրութենէն այրելով: Ինչո՞ւ էր դժգոհութիւնը
ուրեմն:

Հեռուէն դպրոցին տնօրէնը կը մօտենար: Սէֆքէթ էֆենտիին
դէմքը ֆէսին չափ կարմիր էր.

-Իրեն ո՞վ իրաւունք տուաւ այս օդանաւին մօտենալ ... ո՞ւր է
... ի՞նչ խապար է ...

Ժողովուրդը կիսուեցաւ: Սէֆքէթ էֆենտիին մօտեցաւ աւելի
փրփրած.

-Այս ի՞նչ սուտ խապար է:

-Ահա

Բոլորը դարձան. տասը տարեկան տղայ մը ցոյց կու տար
թռչունը, որ կը փորձէր թռչիլ: Ճիւղանը «թռչուն»ին ետեւն էր ու
կը հետեւէր փոքրիկ օդանաւին, որ կաղ ճայի պէս հողէն
բարձրանալ կը փորձէր:

-Ահա՛,- կրկին պոռաց տղան:

Ճիվանին շինած փոքրիկ մանրակերտը սկսեր էր բարձրանալ. կը թռչէր իրենց քիթերուն ճիշդ տակէն անճոռնի ձայներ հանելով, եւ քսան-երեսուն մեթր անդին կը նստեր հողին, վերջնականապէս լռելով:

-Թռաւ, թոցուցի,- կը հրճուէր Ճիվանը, մինչ բոլորը կը վազէին մօտենալու, մօտէն տեսնելու համար փոքրիկ օդանաւը:

-Մարդ չմօտենայ, չդպան՛ք,- կը պոռար Սէֆքէթ էֆէնտին, փորձելով ամենէն առաջ հասնիլ: Մեծ փորը կ'արգիլէր:

* * *

-Տղա՛ս,- կը քծներ տնօրէնը,- ասիկա Պոլիս, Բարձր Դուռ կը դրկեմ, կը պատմեմ քու մասիդ. թէ՛ քեզի, թէ՛ մեր դպրոցին պատիւ է:

Ի՞նչ ըսեր Ճիվանը. ըսէ՞ր, թէ՞ լռէր: Լռեց. ձգեց օդանաւին մանրակերտը տնօրէնին սեղանին վրայ եւ տխուր-տրտում տուն գնաց:

Ի՞նչ օգուտ երկրորդ մը շինելէն. ա՛յն ալ կ'առնեն. բոլո՛ր շինելիքներն ալ կ'առնեն:

Դպրոց կ'երթար, ու դպրոցէն ետք աշկերտ կ'երթար ծխնելոյց շինող վարպետին քով:

-Ուսումը առանց արհեստի անիմաստ է,- վաղուց որոշեր էր հայրը:

Կ'երթար, լուռ-մունջ գործերը կ'ըներ եւ գիշերները կանուխէն անկողին կը մտներ:

Անշուշտ չէր քնանար: Պզտիկ տետրակ մը ուներ, թիւ ու գիծով լեցուցեր էր. հաշիւներ կ'ըներ, նախագիծեր կը պատրաստէր. օր մը անոնց ատենը կու գայ, կը մխիթարէր ինքզինք եւ քուն կը մտներ:

* * *

Դուռը թակեցին:

Ճիվանին մայրը՝ Եղսա խաթունը զարմացած դրան նայեցաւ՝ ո՞վ կրնար ըլլալ այս ժամուն. արեւը թեքուէր էր եւ տուներէն ծուխ կ'ելլէր: Ափերն ալ թաց էին. սրբեց գոգնոցին վրայ եւ բակէն անցաւ դէպի դուռը:

Կրկին թակեցին կարճ, արագ, կամացուկ:

Ճեղք մը բացաւ.

-Ո՞վ է ... Լուրթֆիէ, դո՞ւն ես ... իւե՞ր է ...

-Չբանա՞ս ներս գամ:

-Հրամմէ հրամմէ:

Երկու կիները նստեցան ծունկ ծունկի: Դէպքերէն ի վեր հանգիստ չէին երկուքն ալ, մէկը վախով, միւսը խղճահարութեամբ:

-Եղսա խաթուն, գիտես որ ճան ու ճիկեր եմ քեզի հետ, մէջերնիս աղուհաց կայ. չէի գար հիմա, եթէ ճիվանը իմ ալ ճիկերս չըլլար:

-Ի՛նչ կայ,- Եղսային սիրտը փլաւ. օղանաւին պատմութենէն ի վեր սիրտը հանգիստ չունէր՝ ասոնք իր տղուն գլուխը պիտի ուտէին:

-Ականջիս հասաւ, որ ճիվանին վարպետը վաղը, երբ Էմիրենց ծխնին կապեն-վերջացնեն, տղան տանիքէն վար պիտի հրէ. ատանկ ըսեր են իրեն. ո՞վ ըսեր է չեմ գիտեր, բայց լուրս հաստատ է: Ըսէ՛ ճիվանին, թող ինքզինք լաւ մը կապէ չուանով, որ երբ վար իյնայ գոնէ չմեռնի: Տէ՛, հիմա երկու գաւաթ կորկոտ տուր, երթամ:

Կորկոտը պատճառաբանութիւն էր: Եղսան դողացող ձեռքերով լեցուց դրացիին թասը, դուռը փակեց ու գետին նստաւ:

* * *

-Մայրի՛կ, Բարձր Դուռէն տասը օսմանեան եւ ձեռքի ոսկի ժամացոյց մը դրկեր են ինձի օղանաւիս համար,- ճիվանը հագիւտուն մտած յայտարարեց:

-Իրենց մնայ իրենց ոսկին ալ, ժամացոյցն ալ,- եւ մայրը կերկեր ձայնով պատմեց լսածը:

-Հաւատա՞մ, չհաւատա՞մ:

-Հաւատա՛, տղա՛ս, ասոնք մարդեղէն չեն ...

* * *

Ճիվանը տանիքէն կախուեր էր: Վեր նայեցաւ՝ վարպետը չէր երեւեր: Քակեց չուանը մէջքէն եւ տուն վազեց:

-Մայրիկ, ճիշդ էր. վարպետս վար հրեց զիս, բայց չտեսաւ չիյնալս: Ես ա լ հոս չեմ մնար: Հաց բան դիր: Մութին կ'երթամ:

Մայրը կու լար առանց արցունքի:

-Նայէ , Հալէպ կ'երթամ. երբ որ ձեռքս պոլ եղաւ²⁴, կը դրկեմ, ձեզի բերել կու տամ... մայրիկ, փառք տուր, որ ողջ եմ եւ Լուսֆիէ տուտույին ձեռքերը պագ իմ կողմէս ...

ՎԱՐՂՈՒՀԻՆ ԵՒ ԻՐ ԽԱՉԸ

Մարդ չէր ցիտեր, թե Վարդուհին որո՞ւ աղջիկն է, ուրկե՞՞ եկեր է կամ ինչպե՞ս Հալեպ հասեր է: Իրը մեկն էր գաղթի բազմաթիւ պատմութիւններէն, որոնք բազմաթիւ ըլլալու պարզ պատճառով իսկ դարձեր էին սովորական:

Թաղեցիները կ'ենթադրէին, որ տիկին Չոյէին հեռու մեկ զարմիկն է. իսկ ետեւի թաղի դրացիները որոշեր էին, որ Ճիվան աղբարին քրոջ աղջիկն է.

-Սէֆեր պերիկին քոյր մը ունեցեր է, անոր աղջիկն է, հետը բերեր է:

Այդ դուռ-դրացիները մոռցեր էին, որ Ճիվանը հազիւ տասնհինգ տարեկան, ջարդերէն ու գաղթէն ալ առաջ, միս-մինակ Հալեպ եկեր էր:

Վարդուհին տարիքին եւ ընկերային վիճակին շուրջ նոյնքան ըսի-ըսաւ կար: Յստակ էր սակայն, որ Վարդուհին ամէն շաբաթ օր կուգար Չոյէ քոյրիկին քով, տան գործերուն կ'օգնէր, ընթրիք կը պատրաստէր ու կը լոզնար. Նոր Գիւղի մէջ միայն Ճիվանն էր, որ տան մէջ բաղնիք ունէր. ընտանիքը շուկայի բաղնիք երթալու պարտաւոր չէր, եւ ատով իսկ երջանիկ կը զգար: Կը պատահէր, որ հիւանդ ծանօթ մը կամ անկար ծերունի դրացի մը երբեմն գար եւ իրենց բաղնիքը լոզնար:

Վարդուհին սուրճ մը կ'եփէր ու բակը, դէմ դէմի նստած յաճախ կը լռէին:

Վարդուհին կը լռէր: Տիկին Չոյէն լռակեաց չէր. ո՞ր կինը լռակեաց էր այն օրերուն. անընդհատ խօսելով կարծես կ'ուզէին լռեցնել այն միւսը, ջարդին սարսափն ու ճիչերը, որոնք դադար չէին տար, քուն թէ արթուն:

Վարդուհին չէր խօսեր. մտիկ կ'ըներ տիկին Չոյէին անվերջանալի պատմութիւնները, բամբասանքը, դատումները, եւ, աչքը խօսակիցին աչքին, կը թափառէր այլ աշխարհի մը մէջ, ուր յուշի ամպեր յաճախ շուք կը ձգէին իր նուրբ եւ թուխ դէմքին:

-Վարդուհի, չէ ս լսեր:

-Հա՛, կը լսեմ, կ'ըսեմ՝ դուն խելացի կին ես եւ միշտ ալ ճիշդ որոշումներ կ'անես. կարծեմ ըսածիդ պէս պետք է ընես:

Վարդուհին ձեր գտեր էր տիկին Չոյէին շատախօսութեան ցանցէն հեռու մնալու, չիյնալու անոր բաւիղներուն մէջ, առանց ապերախտ երեւելու տիկին Չոյէին աչքին, որուն համար գլխաւոր յարգանքը իր անձին հանդէպ շուրջիներուն անշեղ հետաքրքրութիւնն էր միայն:

Տիկին Չոյէն շատ կը սիրէր Վարդուհին. փա՞ստ. քանի մը անգամ թեկնածուներ կարգադրեր եւ փորձեր էր համոզել Վարդուհին, որ կնիկ ըսուածը տէր ունենալու է գլխուն վրայ, թէ ոչ ...

-Պատահ մը հացը շա՞տ տեսար ինձի, Չոյէ քոյրիկ:

Լացեր էր Վարդուհին եւ տիկ. Չոյէն հասկցեր էր, որ ուրիշ ցաւ կայ Վարդուհին սրտին մէջ:

-Մա բո՞, - ըսեր էր Ճիվան աղբարին օր մը, - քա սա Վարդուհին մեղք է, ի նչ պիտի ըլլայ ասպէս միս մինակ:

-Կարգէ՛, դուն ալ սուս եղիւր, - ըսեր էր Ճիվան աղբարը եւ կոնակը կնոջ դարձուցած անմիջապէս սկսեր էր խոկալ:

Յետոյ շարունակուեր էր տան Շաբաթ-Գիրակիի սովորութիւնը. տիկ. Չոյէն շարունակեր էր խօսիլ, բամբասել, դատել, միաժամանակ դրացիներուն հասած նամակները կարդալ, պատասխաններ գրել, չբեր կիներուն եւ տակերնին ընող տղոց համար դեղ պատրաստել ...

Մէկ խօսքով՝ կեանքը շարունակեր էր հոսիլ իր հունով, Նոր Գիւղի թաղերուն լափիւրիներուն մէջ:

Տիկին Չոյէն երբեմն աչքին պոչովը կը նայէր Վարդուհին ու կը զարմանար թէ ինչո՞ւ արցունքի պոտիկ, գրեթէ աննշմար կաթիլ մը կը դողար Վարդուհին կոպերուն տակ ու կ'երթար ետ ներս, մօր պոչին տակ պահուրտող վախցած կատուի ձագի պէս.

-Քա այդքա՞ն մը յուզիչ էր ըրած բամբասանքս ...

Ուրիշ ատեններ տիկ. Չոյէն պատումին ճիշդ կեսին կը լռէր. Վարդուհին չէր անդրադառնար.

-Քա սա աղջկան տէրտը ի նչ է, - ուղեղը կը լարէր ու չէր հասկնար:

Մինչեւ որ օր մը Ճիվան աղբարը տուն եկաւ եւ շիտակ

խոհանոց իջաւ.

-Կնի՛կ ...

Տիկին Ջոյէն խոհանոցը չէր. իրար անցած, մուճակը հագիւ մէկ ոտքին անցուցած իջաւ նստասենեակին երկու աստիճանները, անցաւ բակը՝ ամա՛ն, լուալու մոռցայ, հիմա նորէն կը տոտոյայ, եւ շունչը խոհանոցին դուռը առաւ.

-Ի՞նչ կայ, իւե՞ր է...

- Իջի՛ր, ի՛նչ վերը սառեր մնացեր ես ...

Եւ ճիվան աղբարը պատմեց:

* * *

Տիկին Ջոյէն երկար մտածելու ատեն չունէր. վաղը պէտք էր լուր դրկէին աղջկան, որ քաղաքին անորակ պանդոկներէն մէկուն մէջ կը սպասէր, ճանճերէն եւ մժեղներէն խածնուելով:

-Վարդուհի՛ ...

-Տիկին Ջոյէ՞ ... այս ո՞ր հովը փչեց... հրամմէ հրամմէ...

Վարդուհին անցաւ տիկ. Ջոյէին դիմացի սէտիրին եւ սպասեց. կնոջ լռութիւնը՝ խիստ անսովոր, խիստ մտահոգիչ էր:

-Վարդուհի՛ ..., - կրկնեց կինը:

-Հա, Ջոյէ քոյրիկ, ըսէ:

-Աշխէնը քեզ փնտռելու եկեր է. ճիվան աղբարին դրկեր են զինք:

-Աշխէ՞նը:

Տիկին Ջոյէն շատ ուշադիր դիտեց խօսակիցին դէմքը. ենթադրութիւնը ճիշդ էր՝ Այշէն Աշխէնէն գատ ի՞նչ կրնար ըլլալ:

-Աղջիկդ Աշխէնը:

-Ես աղջիկ չունի՛մ:

Տիկին Ջոյէն յուզում կը սպասէր, արցունք, տագնապ. ինչ որ ստացաւ զինք խորապէս զարմացուց:

-Ես աղջիկ չունիմ. չեմ ունեցած, - կրկնեց Վարդուհին, - ելլեմ պաղ ջուր մը շինեմ:

Պզտիկ դգալին ձայնը գաւաթին կողերուն, ուշքի բերաւ տիկին Ջոյէն.

-Հիմա ի՛նչ ընենք:

Ու երբ Վարդուհին օշարակին ափսէն ձեռքը ներս մտաւ, տիկ. Ջոյէն կրկնեց.

-Հիմա ի՞նչ ընենք:

-Ի՞նչը:

-Աղջկան ի՞նչ ըսենք. կը սպասէ կոր ատ աղտոտ օթելը նստած:

-Թող ելլէ եկած տեղը երթայ:

-Վարդուհի, քեզմէ չէ՛, քու միս-ոսկորէդ չէ՞ աս աղջիկը, ի՞նչ է անոր մեղքը:

-Նայէ՛, Ձոյէ քոյրիկ, մէկ անգամ ըսեմ, որ շատ չոգնիս. ատ աղջիկը թուրքի գաւակ է. ոչ սուրբ պսակ, ոչ սուրբ միտն. ալ ինչպէ՛ս կ'ըսես իմս է. իմս չի՛ կրնար ըլլալ: Ես աղջիկ չունիմ:

* * *

Այշէն գտեր էր մայրը, բայց չտեսաւ զայն: Եւ ինչպէս որ Վարդուհին ըսեր էր՝ եկած տեղը՝ վերադարձաւ:

Երկու կիները չիմացան ո՛չ իրարու, ո՛չ ալ իրենց ապրումները: Վարդուհին վարժուեր էր. ետ հրեց անսպասելիօրէն բացուած դուռը եւ շարունակեց ապրիլ: Այշէն, նոր ծանօթացած ցաւին, կը փորձէր անոր հետ ապրելու ձեւ մը գտնել:

* * *

Երբ Վարդուհին մեռաւ, ներքնաշապիկին վրայ գնդասեղուած խաչին եւ կապոյտ հլունին հետ փոքրիկ տոպրակ մըն ալ գտան, մէջը՝ խարտեաշ մագերու խուրձ մը:

Աղջկան գերեզմանին խաչն էր, մօրը սրտին դրուած:

ԱԶՆԻԻ ՎԱՐԺՈՒՆ

Բոլորը չէին, որ Գաղթեն առաջ Հալեպ եկան: Բոլորը չէին, որ Գաղթին եկան:

Ընտանիքին մեկ մասը հոն մնաց եւ Իսթանպուլ դարձած Պոլիս հաստատուեցաւ: Կորսուեցան անոնց հետքերը, կորսուեցան իրենք, կորսուեցան նաեւ իրենց անունները, որոնց վրայէն «եան»ը վերցուեցաւ. օտարացան, խորթացան:

Եղան սակայն քանի մը ընտանիքներ ալ, որոնք անցեալ դարու երեսունականներուն եկան Հալեպ հաստատուիլ:

Եկողներէն մէկը ճիվան տէտէին հօրեղբայր Յարութիւնին ընտանիքն էր:

Յարութիւն եւ Էլմաստ Երամեանները չորս զաւակներ կ'ունենան Յարութիւն (կրտսեր), Ազնիւ, Մարիամ եւ Հեղինէ:

Յարութիւնը Ջարդերէն առաջ թուրքերուն կողմէ կը տարուի եւ ալ չի վերադառնար: Իսկ երրորդ զաւակը՝ Մարիամը կը մահանայ Էլազիկ (Խարբերդ), մատղաշ տարիքին:

Հեղինէն կ'ամուսնանայ Տիգրան Թունճ անունով երիտասարդի մը հետ (նախապէս ինչ էր մականունը այս երիտասարդին), կ'ունենան երկու մանչեր՝ Յակոբ եւ Ռուզվելթ (ուրկէ՞ ամերիկեան այս անունը այդ օրերուն) եւ Զուարթ անունով աղջիկ մը: Կը մնան հոն:

Հոն ուր: Խարբէրդ թէ Պոլիս, յստակ չէ: Յարաբերութիւնները կը կտրուին ընտանիքին մնացորդացին հետ:

Յարութիւնը արդէն չկար երբ կարգը եկաւ իրենց գիւղին գաղթական ելլելու. տարեր էին, ամիսներէ ի վեր լուր չկար:

Սկիզբն էր: Եզներ ու կառքեր տրամադրուեր էին գիւղացիները փոխադրելու համար: Բայց երբ հերթը Յարութիւն Երամեանի ընտանիքին հասաւ, ո՛չ եզ մնացեր էր, ո՛չ կառք:

-Վա՛ղը, վաղը կանուխէն պատրաստ կ'ըլլաք,- պոռացեր էր Ժանտարման Էլմաստի երեսին:

Կապոցներն ու ծրարները պատրաստ էին. զանոնք կրող պէտք էր. Էլմաստը իր տասը տարեկան աղջկան հետ ասոնցմէ

քանի՞ն կրնար կրել:

-Մա՛յր,- մօտեցաւ Ազնիւը, ձեռքը թուղթ մը բռնած,- մա՛յր,- կրկնեց:

-Աման Ազնիւ, սիրտ չունիմ, սուս մնա՛...

Ազնիւ լռեց աւելի յարմար պահ մը սպասելով: Ամբողջ օրը միտքը լարեր էր ելք մը գտնելու համար. տասը տարեկանի իր խելքով լաւագոյն ելքը տունը չլքելը պիտի ըլլար, ձեռով մը չերթալը, մնալը:

Խելացի եւ աշխատասէր Ազնիւը ոչ միայն ծնողքին ուրախութիւնը եղած էր, այլ եւ դպրոցին հպարտութիւնը: Հայրը մէկ անգամ խօսեր էր աղջիկը Եփրատ գոլէճ դրկելու մասին: Խօսքը հարուստ հունտի պէս ինկեր էր աղջնակին պարարտ հոգիին մէջ եւ ծիլ տուեր, որպէս գեղեցկագոյն երագ:

Իսկ հիմա կ'ըսէին՝ երթալ: Երթալ, թերեւս այո, բայց ինչպէ՞ս Եփրատ գոլէճ յաճախել: Հօրը անվերադարձ մեկնումէն ետք, գոլէճ յաճախելու երագը պատգամի վերածուեր էր: Ազնիւը ամէն գնով պէ՛տք էր իրականացնէր այդ երագը, թէ ոչ հայրը, գտնուած տեղը, հողին վրայ տեղ մը, թէ հողին տակ, հանգիստ չէր կրնար ընել:

Եղսան իր տազնապին եւ արտօրանքին մէջ մոռցեր էր թուղթերուն գոյութիւնը:

Ազնիւը կրկին նայեցաւ անոնց՝ «Սուրիանի Մահալլէսի»ն յստակօրէն գրուեր էր իրենց անուններուն տակ. թերեւս, եթէ...

-Աննէ...

Եղսան, որ նստած տեղը մրափեր էր, ընդոստ արթնցաւ.

-Եկա՞ն:

-Մայր, գիշեր է եւ մութ. եկող չկայ: Նայէ՛, այս թուղթերուն՝ սուրիանի մահալլէսի գրուեր է հոս:

-Ո՞վ է թուղթին նայողը,- հառաչեց մայրը:

-Մայր, կ'աղաչեմ, մտիկ ըրէ՛. այդ կողմերը բարեկամներ ունինք, չէ՛:

Եղսան լարեց ինքզինք.

-Քա աղէկ ըսիր, ինչպէս ալ մոռցեր էի. է՞...

-Հոն կ'երթանք, սուրիանիներուն գաղթ չկայ կարծեմ, չէ՞:

-Հա, ճիշդ է, առտուն:

-Ոչ, մայր, ոչ առտուն, առտուն ուշ կ'ըլլայ. հիմա՛:

-Աղջիկ, խենթացա՞ր, ո՞ր կինը այս մութին տունէն դուրս կ'ելլէ:

-Մե՛նք: Կ'առնենք ինչ որ կրնանք շալկել ու կ'երթանք:

-Հապա՞ եթէ չընդունին:

-Զընդունին, ետ կու գանք. տունը հոս է. բանալին գրպանդ դի՛ր:

Շուներն իսկ քաշուեր էին փողոցներէն, մօտալուտ արհաւիրքի մը ոտնաձայնէն հալածական:

Արագ քայլերով, իրարու ձեռք ամուր բռնած մայր ու աղջիկ կտրեցին հայկական թաղը եւ մտան սուրիանիներու շրջանը: Մամսուն էֆէնտիին տունը թաղին ճիշդ մէջտեղն էր:

Մայրը հազիւ ձեռքը թակոցին նետած, Ազնիւր ամուր քաշեց թելէն եւ իր փոքրիկ բռունցքով երկու թեթեւ հարուած տուաւ տախտակեայ դրան, ու յետոյ ցուցամատը շրթունքներուն դրաւ՝ սրըրըրըրըր...

-Ո՞վ է,- շնչաց մէկը ներսէն:

-Ես եմ, Յարութիւնին Էլմաստը եւ աղջիկս Ազնիւր...

Դուրը հազիւ ճեղքուեցաւ.

-Ի՞նչ կ'ուզէք:

-Մամսուն էֆէնտին:

-Ո՞վ կայ ձեզի հետ:

-Միայն մենք ենք:

-Մպասեցէք:

Քանի մը վայրկեան ետք նոյն ձայնը հարցուց.

-Ի՞նչ է երկանդ անունը:

-Յարութիւն Երամեան:

-Մտէք, ամմա ձայն չընէք:

Ծառան զիրենք կիսամութ սենեակ մը առաջնորդեց: Փոքրիկ մոմ մը կը պլպլար ծալապատիկ նստած մարդուն կողքին:

-Էֆէնտի ...

-Հա, Էլմաստ խանում, ժամանակները դժուար են. ի՞նչ ըրիք, ելա՞ք:

-Մեր աղջիկը կ'ըսէ...

-Աղջի կը, ո՞ր աղջիկը:

-Ազնիւր, ձեր աղախինը,- եւ մայրը հրեց աղջկան:

-Ի՞նչ կ'ըսէ նայինք ձեր աղջիկը,- ծեր մարդուն յոգնած դէմքին

Ժպիտ մը խաղցաւ ու Ազնիւին թուեցաւ, որ մոմին պլպլացումը շուք ու լոյս ըրաւ:

-Էֆէնտի, այստեղ սուրիանի մահալէսի գրուեր է, չէ գրուեր էրմէնի. մենք ալ հոս եկանք, սուրիանի մահալէսի եկանք:

Մարդը առաւ թուղթերը եւ այնքան մօտ բռնեց մոմին, որ Ազնիւին սիրտը ջուր դարձաւ. եթէ այրին այս թուղթերը, է մնաք բարով կ'ըլլան թէ՛ գոլէճը, թէ՛ Ազնիւին երազները:

-Շիտակ կ'ըսէ աղջիկը, սուրիանի մահալէսի, իսելացի աղջիկ է, ապրի՛ս ապրի՛ս...

-Եփրատ գոլէճ պիտի երթամ,- արագ ու բարձր յայտարարեց Ազնիւը Սամսուն էֆէնտիին «ապրի՛ս»ներէն քաջալերուած:

-Մուս եղի՛ր, աղջիկ, ձայնդ քեզի քաշէ,- սաստեց մայրը գայթակղած, մինչ էֆէնտին հազիւ զարմանքը թօթափած կը մրմնջէր.

-Ժամանակը թող գայ, կը նայի՛նք:

Ազնիւ վարժուն յուզումով կը յիշէր միշտ իրենց այդ առաջին գիշերելը Սամսուն էֆէնտիին տան մէջ:

Երբ առաւօտը բացուեր էր, Ազնիւը զարմանքով տեսեր էր, որ քանի քանի այլ ընտանիքներ եւս գիշերեր են հոն, Սամսուն էֆէնտիի ապահով բակին մէջ:

Դիւրին չէր կէանքը, թէեւ խնայուեցաւ իրենց գաղթի դժոխքը: Ազնիւը մեծցաւ, շրջանաւարտ եղաւ Եփրատ գոլէճէն եւ դարձաւ վարժուհի:

Գիտէր, զգացեր էր զարմանալիօրէն յստակ պայծառատեսութեամբ, որ միակ ձեւը իր ըլլալուն, ուսումն է: Եւ ոչ միայն իր, այլ իր նման բոլոր աղջիկներուն: Զինք մղողը հայրն էր, հօր մէկ փոքրիկ խօսքը, որ զօրացեր էր անոր մահով, դարձեր պատգամ: Այդ աղջիկները իր աշակերտուհիները, մեծ մասը որք ու սարսափահար, ո՛վ ունէին իրմէ գատ:

Ազնիւը դարձեր էր Ազնիւ վարժու, որ մօրքուրի կամ հօրքուրի չափ մտերիմ էր աղջիկներուն, եւ նոյնքան քաղցր կը հնչէր Ազնիւի ականջներուն: Վարժուհի ըլլալը աշխատանք չէր, ապրիլ էր:

Ապրիլ էր նաեւ ընտանիք կազմելն ու զաւակներ ունենալը:

Եւ Ազնիւ վարժուն պսակուեր էր Գարեգին Սեմերճեանին հետ, ունեցեր չորս դուստրեր, որոնցմէ Էլմաստը, հազիւ մէկ տարեկան, մահացեր էր: Միւսները՝ Մարին, Վարդուհին եւ Հռիփը բարձրագոյն ուսում ստացեր էին:

-Ուսումը աղջկայ մը զենքն է, գաղտնի զենքը, որ ուղղուած չէ այլին, այլ պաշտօն ունի զինք պաշտպանելու իր տկարութիւններուն դէմ...,- հօր խօսքը կը կրկնէր աշակերտուհիներուն:

Ազնիւ վարժուն հանգիստ ու խաղաղ փակեր էր աչքերը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

- ¹ Հոտաւետ, ճերմակ ծաղիկի տեսակ մը.
- ² Երեք կողմէն գոց, դէպի բակը լրիւ բաց սենեակ, արաբական հին տուներուն յատուկ:
- ³ Տեսք, ձեւ.
- ⁴ Արաբերէն՝ օրհնութիւն
- ⁵ Թրքերէն՝ բարիբախտ
- ⁶ Արաբերէն՝ վայել
- ⁷ Թրքերէն՝ սենեակ
- ⁸ Արաբերէն՝ շան ձագ, հայերէն «ծօ»ին համազօրը.
- ⁹ Տաճկերէն՝ ամայի հողակտոր.
- ¹⁰ Կատակ.
- ¹¹ Անշուշտ.
- ¹² 1915-ի գաղթականութիւն.
- ¹³ Թրքերէն՝ հայհոյանք
- ¹⁴ Տե՛ս «Յուշամատեան» կայքի այս էջը.
<https://www.houshamadyan.org/arm/oda/middleeast/kazandjian-topdjian-coll.html>
- ¹⁵ Փոքր ցած սեղան.
- ¹⁶ Կամ լայրիս, ըստ գաւառի, վայել.
- ¹⁷ Թրքերէն՝ որդի՛.
- ¹⁸ Թրքերէն՝ փայտէ նստարան, վրան ներքնակ եւ բարձեր.
- ¹⁹ Թրքերէն՝ Տիգրանակերտի յատուկ վառարան, սեղանի ձեւով, որուն տակ ոտքերը երկարած կը նստին ձմեռ օրերուն:
- ²⁰ Թրքերէն՝ մանուկ, փոքրիկ.
- ²¹ Օսմաներէն՝ վնաս.
- ²² Ծեփ
- ²³ Շատախօս
- ²⁴ Առատ դրամ ունենալ իմաստով.

ԱՆՁԵՐ – ԱՆՈՒՆՆԵՐ

Ֆիլիփ Թօփճեան	Հեղինակին մօրենական մեծ մեծ հայրը
Բարսեղ Թօփճեան	Հեղինակին մօրենական մեծ հօրեղբայրը
Գրիգոր Թօփճեան	Հեղինակին մօրենական մեծ հայրը
Զուարթ Գասպարեան-Թօփճեան	Հեղինակին մօրենական մեծ մայրը
Արուսեակ Թօփճեան-Գազանճեան	Հեղինակին մայրը
Մայր Մելանի Թօփճեան	Հեղինակին մօրաքոյրը
Կասիա Բալուլեան	Հեղինակին զարմուհին
Յարութիւն Գազանճեան	Հեղինակին հօրենական մեծ հայրը
Հայկանոյշ Մոմճեան-Գազանճեան	Հեղինակին հօրենական մեծ մայրը
Մկրտիչ Մոմճեան	Հեղինակին հօր մօրեղբայրը
Յովհաննէս Գազանճեան	Հեղինակին հայրը
Գառնիկ Գազանճեան	Հեղինակին հօրեղբայրը
Ճիվան Երամեան	Հեղինակին կեսրայրը
Յարութիւն Երամեան	Հեղինակին կեսրհօր եղբայրը
Զոյէ Քիրիաքիտիս-Երամեան	Հեղինակին կեսուրը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զօն	3
Տոհմաքաղաք	5
Թօփճեան-Գասպարեան	9
Ֆիլիփ	10
Թօփճեանները	13
Բարսեղ Թօփճեան	14
Աշակերտներ	15
Կարմիր տետրը	18
Ամնօ Արմէնը	22
Գերեզմանատուն	27
Ուրֆա Հալէպ երթուղին	31
Ամենէն փոքրը	34
First True Iron Woman of My Life	44
A Woman of Steel	46
Կասիան	49
Շուկայի բաղնիք	54
Նուարդ	59
Սիրուն	62
Աղջիկը	70
Գազանճեան-Երամեան	79
Խմբանկար	81
Դէպի Ամերիկա	85
Նէնէ Հայկանոյշս	88
Հայրս	91
Եռոտանի	98
Մկրտիչ	98
Արշալոյս	102
Գոհարիկ	106
Ճիվանը մինչեւ Հալէպ	109
Վարդուհին եւ իր խաչը	114
Ազնիւ վարժուն	118
Ծանօթագրութիւններ	123
Անձեր-անուններ	124
Բովանդակութիւն	125

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳՈՐԾԵՐԸ

- «Հում բառերս կը բերեմ դիմակներու հանդեսին» (քերթ.) 1991, Հալէպ
- «Տարբերակներ» (քերթ.) 1995, Հալէպ
- «Հալոց» (քերթ.) 1998, Հալէպ
- «Գիշերներ» (քերթ.) 2001, Հալէպ
- «Հին Քերթուածներ» (քերթ.) 2004, Երեւան
- «Գաղտնագրութիւն» (քերթ.) 2015, Երեւան
- «Տարփանք» (քերթ.) 2024, Գահիրէ

- «Մօր Գոզնոցը» (պատմուածք) 2003, Գ.Մ.Գ.Մ. (Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակ), թիւ 52, Անթիլիաս
- «Տաճարացում» (պատմուածք) 2007, Երեւան
- «Մենք ու Մերոնք» (պատմուածք) 2024, Գահիրէ

- «Ուրուագիծ Սփիւռքահայ Բանաստեղծութեան 1965-1995 թուականներուն» (ուսումն.) 2018, Գահիրէ

Ամէն իրաւունք վերապահուած է հեղինակին.
maroushnahhas@gmail.com

Էջադրում՝ Շահէ Լուսարարեան
Տպագրութիւն՝ NUBAR DIGITAL